Անալոգիայի կիրառումը թույլ է տալիս կատարել ընդհանրացումներ, վարկած առաջադրել, տեղափոխել ձևեր բերած գիտելիքները, կարողությունները և հմտությունները նոր՝ ավելի բարձր մակարդակ, նախկինում ուսուցված նյութը վերախմաստավորել ավելի ընդհանուր տեսանկյունից: Այս համատեքստում տարածաչափության ուսուցման ժամանակ հարթաչափության դասընթացի ռեֆլեքսիվ կրկնության տարբերակ կհանդիսանա տարածական մարմինների և հարթաչափական պատկերների համեմատումը:

Տարածաչափական պատկերների շատ հատկություններ նման են հարթ պատկերների հատկություններին: Օրինակ՝ եռանկյան կողմերի և տետրանդրի նիստերի թիվը, եռանկյանը ներգծյալ շրջանագծի և տետրանդրին ներգծյալ սֆերայի գոյությունը, արտագծյալ շրջանագծի և արտագծյալ սֆերայի գոյությունը: Մի շարք երկրաչափական հասկացություններ հարթաչափությունից ունեն տարածական անալոգներ: Օրինակ՝ զուգահեռագիծը և զուգահեռանիստը, բազմանկյունն ու բազմանիստը, շրջանագիծն ու գնդային մակերևույթը: Տետրանդրն էլ (եռանկյուն բուրգը) կարելի է համարել եռանկյան տարածական անալոգը: Այսպես, եռանկյունը մինիմում կողմերով բազմանկյունն է, իսկ տետրանդրը մինիմում նիստերով բազմանիստը: Հարթաչափության որոշ թեորեմների

ձևակերպումներում հարթաչափական հասկացությունները փոխարինելով համապատասխան տարածաչափական հասկացություններով՝ ստացվում են տարածաչափությունում կիրառելի թեորեմներ, իսկ ինչպես հայտնի է, անալոգիայով ստացված թեորեմները և բանաձևերը հեշտ են մտապահվում: Դիտարկենք օրինակներ:

Թեորեմ 1: *Յանկացած եռանկյան կարելի է ներգծել շրջանագիծ, այն էլ միայն մեկը:*

Թեորեմ 1⁰: *Յանկացած եռանկյուն բուրգի համար գոյություն ունի միակ ներգծյալ սֆերա:*

Թեորեմ 2: *Յանկացած եռանկյանը կարելի է արտագծել շրջանագիծ, ընդ որում միայն մեկը:*

Թեորեմ 2⁰: *Եռանկյուն բուրգն ունի միակ արտագծյալ սֆերա:*

Թեորեմ 1-ը և թեորեմ 2-ը ուսուցվում են 8-րդ դասարանում, իսկ թեորեմ 10-ը և թեորեմ 20-ը՝ 11-րդ դասարանում:

Թեորեմ 3: *Ուղղանկյուն եռանկյան ներքնաձիգի քառակուսին հավասար է էջերի քառակուսիների գումարին:*

Թեորեմ 3-ն ուսուցվում է 8-րդ դասարանում:

Թեորեմ 3⁰: *Եթե տետրանդրի զազաթներից մեկի բոլոր հարթ անկյունները ուղիղ են, ապա այդ զազաթի հանդիպակաց նիստի մակերեսի քառակուսին հավասար է մնացած նիստերի մակերեսների քառակուսիների գումարին:*

Ապացուցում: Դիցուք՝ $OABC$ տետրանդրի $\angle AOB = \angle BOC = \angle COA = 90^\circ$: OAB, OBC, OCA և ABC եռանկյունների մակերեսները նշանակենք համապատասխանաբար $S_{AOB}, S_{OBC}, S_{OCA}$, և S : AB, BC , և CA կողերով երկնիստ անկյունները նշանակենք համապատասխանաբար α, β և γ : O կետի պրոյեկցիան ABC նիստի վրա նշանակենք D (նկ.1):

Քանի որ $\alpha < 90^\circ, \beta < 90^\circ, \gamma < 90^\circ$, ապա D կետը գտնվում է ABC եռանկյան ներսում: OAB, OBC և OCA եռանկյունները ABC եռանկյան պրոյեկցիաներն են, ուստի

$$S_{AOB} = S \cos \alpha, \quad S_{OBC} = S \cos \beta, \quad S_{OCA} = S \cos \gamma:$$

$ABD, BCD \square CAD$ եռանկյունները OAB, OBC և OCA եռանկյունների պրոյեկցիաներն են ABC նիստի վրա, և այդ եռանկյունների մակերեսների գումարը հավասար է ABC եռանկյան S մակերեսին:

$$(S \cos \alpha) \cos \alpha + (S \cos \beta) \cos \beta + (S \cos \gamma) \cos \gamma = S(\cos^2 \alpha + \cos^2 \beta + \cos^2 \gamma) = S:$$

$$\text{Հետևաբար՝ } \cos^2 \alpha + \cos^2 \beta + \cos^2 \gamma = 1:$$

$$\text{Ուստի՝ } S_{OAB}^2 + S_{OBC}^2 + S_{OCA}^2 = S^2(\cos^2 \alpha + \cos^2 \beta + \cos^2 \gamma) = S^2:$$

Թեորեմն ապացուցված է:

Թեորեմ 4: *Եռանկյան միջնագծերը հատվում են մի կետում և այդ կետով տրոհվում 2:1 հարաբերությամբ՝ հաշված զազաթից:*


Թեորեմ 4-ն ուսուցվում է 9-րդ դասարանում:

Նախքան թեորեմ 4⁰-ին անցնելը սահմանենք տետրանդրի միջնագիծ հասկացությունը:


Սահմանում: *Տետրանդրի զազաթը հանդիպակաց նիստի միջնագծերի հատման կետին միացնող հատվածը կոչվում է տետրանդրի միջնագիծ:*

Թեորեմ 4⁰: *Տետրանդրի միջնագծերը հատվում են մի կետում և այդ կետով տրոհվում 3:1 հարաբերությամբ՝ հաշված զազաթից:*

Ապացուցում: Դիցուք տրված է $DABC$ տետրանդրը, O -ն ABC եռանկյան ծանրության



նկ. 1



նկ. 2

կենտրոնն է, P-ն՝ BCD եռանկյան ծանրության կենտրոնը, R-ը՝ տետրանդրի DO և AP միջնագծերի հատման կետը (նկ.2):

Դիտարկենք ΔQOD : O և P կետերը տրոհում են ABC և BCD եռանկյան միջնագծերը 2:1 հարաբերությամբ: Յույց տանք, որ R կետը տրոհում է տետրանդրի DO և AP միջնագծերը 3:1 հարաբերությամբ:

AQD եռանկյան մեջ O կետից տանենք AP-ին գուգահեռ OS հատվածը: Այն կտրոհի PQ հատվածը 2:1 հարաբերությամբ: Եթե SQ-ն ընդունենք որպես միավոր հատված, ապա DP-ն հավասար կլինի 6-ի:

$$DR : RO = DP : PS = 6 : 2 = 3 : 1:$$

Հանգույնորեն ապացուցվում է, որ տետրանդրի B և C գագաթներից տարված միջնագծերը ևս տրոհում են DO միջնագիծը 3 : 1 հարաբերությամբ և հետևաբար անցնում են O կետով: Թերեմնն ապացուցված է:

Երբեմն եռանկյան վերաբերյալ խնդրի լուծումը հնարավոր է կիրառել տետրանդրի վերաբերյալ համապատասխան խնդիրը լուծելիս:

Խնդիր 1: ABC եռանկյան ներսում գտնվող M կետից տարված են BC, CA և AB կողմերին ուղղահայացներ, որոնց նրկարությունները հավասար են համապատասխանաբար d_a, d_b և d_c : Ապացուցել, որ

$$\frac{d_a}{h_a} + \frac{d_b}{h_b} + \frac{d_c}{h_c} = 1$$

որտեղ h_a, h_b և h_c -ն ABC եռանկյան բարձրություններն են:

Լուծում: M կետը միացնենք ABC եռանկյան գագաթներին: ABCM, CAM, ABM և ABC եռանկյունների մակերեսները նշանակենք համապատասխանաբար S_1, S_2, S_3 և S (նկ.3):

Այդ դեպքում

$$S_1 = \frac{1}{2} a \cdot d_a, \quad S_2 = \frac{1}{2} b \cdot d_b, \quad S_3 = \frac{1}{2} c \cdot d_c \quad \text{և} \quad S = \frac{1}{2} a \cdot h_a:$$

Որտեղից կստանանք

$$\frac{S_1}{S} = \frac{d_a}{h_a}, \quad \frac{S_2}{S} = \frac{d_b}{h_b}, \quad \frac{S_3}{S} = \frac{d_c}{h_c}$$

Հաշվի առնելով, որ $S_1 + S_2 + S_3 = S$ և անդամ առ անդամ գումարելով այդ հավասարության բաղադրիչները կստանանք

$$\frac{d_a}{h_a} + \frac{d_b}{h_b} + \frac{d_c}{h_c} = 1 \tag{1}$$

Հետևանք 1: Եթե M կետը ABC եռանկյանը ներգծյալ շրջանագծի կենտրոնն է, ապա

$$d_a = d_b = d_c = r$$

և (1) հավասարությունը կստանա հետևյալ տեսքը՝

$$\frac{1}{h_a} + \frac{1}{h_b} + \frac{1}{h_c} = \frac{1}{r}:$$

Հետևանք 2: Եթե $h_a = h_b = h_c = h$, ապա $ah = bh = ch = 2S$ անչություններից կստանանք, որ $a = b = c$: (1) հավասարությունը կստանա հետևյալ տեսքը՝


$$d_a + d_b + d_c = h:$$

Այսպիսով, հավասարակողմ եռանկյան ներսում գտնվող ցանկացած կետի հեռավորությունների գումարը եռանկյան կողմերից հաստատուն մեծություն է, որը հավասար է եռանկյան բարձրությանը:

Հետևանք 3: Դիցուք՝ $h_a < h_b < h_c$: Այդ դեպքում

$$\frac{d_a + d_b + d_c}{h_a} > 1 \quad \text{և} \quad \frac{d_a + d_b + d_c}{h_c} < 1:$$

Հետևաբար, ոչ հավասարակողմ եռանկյան ներսում գտնվող ցանկացած կետի հեռավորությունների գումարը եռանկյան կողմերից պարփակված է փոքրագույն և մեծագույն բարձրությունների միջև.



նկ. 3

$$h_a < d_a + d_b + d_c < h_c:$$

Խնդիր 2: $DABC$ տետրանդրի ներսում գտնվող M կետից տարված են BCD , CAD , ABD և ABC նիստերի հարթություններին ուղղահայացներ, որոնց երկարությունները հավասար են համապատասխանաբար d_1, d_2, d_3 և d_4 : Ապացուցել, որ

$$\frac{d_1}{h_1} + \frac{d_2}{h_2} + \frac{d_3}{h_3} + \frac{d_4}{h_4} = 1,$$

որտեղ h_1, h_2, h_3 և h_4 -ը տետրանդրի բարձրություններն են:

Լուծում: M կետը միացնենք $DABC$ տետրանդրի գագաթներին: $MDBC, MDAC, MDAB, MABC$ և $DABC$ տետրանդրների ծավալները նշանակենք համապատասխանաբար V_1, V_2, V_3, V_4 և V (նկ.4):

Այդ դեպքում

$$V_1 = \frac{1}{3} S_{DBC} \cdot d_1 \quad \square \quad V = \frac{1}{3} S_{DBC} \cdot h_1 \quad \Rightarrow \quad \frac{V_1}{V} = \frac{d_1}{h_1}:$$

Հանգուներեն կստանանք.

$$\frac{V_2}{V} = \frac{d_2}{h_2}, \quad \frac{V_3}{V} = \frac{d_3}{h_3}, \quad \frac{V_4}{V} = \frac{d_4}{h_4}:$$

Հաշվի առնելով, որ $V_1 + V_2 + V_3 + V_4 = V$ և անդամ առ անդամ գումարելով այդ հավասարության բաղադրիչները կստանանք՝

$$\frac{d_1}{h_1} + \frac{d_2}{h_2} + \frac{d_3}{h_3} + \frac{d_4}{h_4} = 1 \quad (2)$$

Հետևանք 1: Եթե M կետը $DABC$ տետրանդրին ներգծյալ գնդային մակերևույթի կենտրոնն է, ապա

$$d_1 = d_2 = d_3 = d_4 = r$$

և (2) հավասարությունը կստանա հետևյալ տեսքը՝

$$\frac{1}{h_1} + \frac{1}{h_2} + \frac{1}{h_3} + \frac{1}{h_4} = \frac{1}{r}:$$

Հետևանք 2: Եթե $h_1 = h_2 = h_3 = h_4 = h$, ապա $S_1 h = S_2 h = S_3 h = S_4 h = 3V$ առնչություններից կստանանք, որ $S_1 = S_2 = S_3 = S_4$:

(2) հավասարությունը կստանա հետևյալ տեսքը՝

$$d_1 + d_2 + d_3 + d_4 = h$$

Հետևանք 3: Դիցուք՝ $h_1 < h_2 < h_3 < h_4$: Այդ դեպքում



$$\frac{d_1 + d_2 + d_3 + d_4}{h_1} > 1 \quad \square \quad \frac{d_1 + d_2 + d_3 + d_4}{h_4} < 1 \quad \Rightarrow \quad h_1 < d_1 + d_2 + d_3 + d_4 < h_4$$

Այսպիսով, տարածաչափական խնդրի լուծման որոնումը զգալիորեն հեշտացավ, երբ սկզբում դիտարկեցինք նմանատիպ հարթաչափական խնդիր: Սակայն պետք է հաշվի առնել, որ տետրանդրը ավելի բարդ պատկեր է, քան եռանկյունը և նրա հատկությունները ավելի բազմազան են: Հնարավոր է, որ անալոգիա չլինի: Դիտարկենք օրինակ:

Թեորեմ 5: *Եռանկյան բարձրությունները (կամ նրանց շարունակությունները) հատվում են մի կետում:*

Թեորեմ 5-ն ուսուցվում է 8-րդ դասարանում:

Ըստ անալոգիայի, կարելի է ենթադրել, որ կամայական տետրանդրի բարձրությունները (կամ նրանց շարունակությունները) ևս հատվում են մի կետում:



Խնդիր 3: Ապացուցել, որ ճիշտ չէ հետևյալ պնդումը. կամայական տետրանդրի բարձրությունները (կամ նրանց շարունակությունները) հաստատում են մի կետում:

Լուծում: Տրված պնդումը պարունակում է ընդհանրության քվանտոր: Պնդումը հերքելու համար բավական է բերել հակաօրինակ:

Դիցուք՝ $ABCD$ -ն տետրանդր է, այնպես որ AB կողով երկնիստ անկյունը ուղիղ է (նկ.5): Այդ դեպքում տետրանդրի CE և DF բարձրությունները ABC և ABD եռանկյունների բարձրություններ են: Եթե $AC = BC$ և $AD = BD$, ապա E և F կետերը համընկնում են AB հատվածի միջնակետի հետ, այսինքն տետրանդրի CE և DF բարձրությունները հաստատում են: Ընդ որում, տետրանդրի մյուս երկու բարձրությունները նրանց հաստատան կետով չեն անցնում: Իսկ եթե $AC = BC$, բայց $AD \neq BD$, ապա CE և DF բարձրությունները խաչվում են: Այսպիսով, հնարավոր է, որ տետրանդրի նույնիսկ երկու բարձրություններ ընդհանուր կետ չունենան:

Բայց և այնպես, գոյություն ունեն տետրանդրներ, որոնց բոլոր չորս բարձրություններն էլ հաստատում են մի կետում: Այդպիսինն է, օրինակ, $ABCD$ տետրանդրը, որի D գագաթի բոլոր հարթ անկյունները ուղիղ են: DA, DB և DC կողերը նրա բարձրություններ են, որոնք հաստատում են DD_1 չորրորդ բարձրության հետ D կետում:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Кушнир И.А., Треугольник и тетраэдр в задачах. К.: Факт, 2004. -336 с.
2. Дорофеев Г. В.. О составлении циклов взаимосвязанных задач /Г. В. Дорофеев // Математика в школе. - 1983. № 6.
3. Наземнова Н.В. Аналогия в обучении учащихся приемам распознавания геометрических образов / Наземнова Н.В. // Известия высших учебных заведений. Поволжский регион. Гуманитарные науки.- 2010. № 4.

Տեղեկություններ հեղինակի մասին

Լիլիթ Առաքելյան-ԱրՊՀ, Մաթեմատիկայի ամբիոնի ավագ դասախոս:

E-mail: lilit.rafael@yandex.com, Tel. +374 97 247492

Նորվաձը տպագրության է երաշխավորել խմբագրական կոլեգիայի անդամ, ֆ.մ. գ.դ. Ա.Մ. Խաչատրյանը:

ՀՏԴ 37.02(004.45)

Ինֆորմատիկա

**ՀԵՌԱՎԱՐ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԸ ԲՈՒՀ-ՈՒՄ
Վազգեն ԱՌՍՏԱՄՅԱՆ**

Բանալի բառեր. Տեղեկատվական տեխնոլոգիաներ, կրթություն, հեռավար ուսուցում, հեռահաղորդակցություն, ծրագրային ապահովում, դասընթաց, տեխնիկական միջոցներ, բաց կոդ, անձնական տվյալներ, նյութ, իրական ժամանակ:

Ключевые слова: Информационные технологии, образование, дистанционное обучение, телекоммуникации, программное обеспечение, обучение, технические средства, с открытым исходным кодом, личная информация, материалы, в режиме реального времени.

Keywords: Information technology, education, distance learning, telecommunications, software, training, technical facilities, open source, personal information, material, real-time.

Ամփոփում

Սույն հոդվածում փորձ է արվում ընդհանրացնել ուսուցման գործընթացը և հեռավար ուսուցման տեխնոլոգիաների օգտագործման հնարավորությունները:

ДИСТАНЦИОННЫЕ ОБРАЗОВАТЕЛЬНЫЕ ТЕХНОЛОГИИ В ВУЗЕ

В.Арустамян

Рассматривается учебный процесс и возможности использования в нем дистанционных образовательных технологий (ДОТ).

DISTANCE LEARNING TECHNOLOGIES IN HIGH SCHOOL

V.Arstamyán

We consider the learning process and the possibility of using it in distance learning technologies (DOT).

Տեղեկատվական տեխնոլոգիաների հաճախակի փոփոխությունները մեր օրերի մարդուն ստիպում են անընդհատ յուրացնել նոր գիտելիքներ և հմտություններ, պատրաստ լինել շարունակական ուսման: Բայց սա ճիշտ է ոչ միայն մարդկանց, այլև կազմակերպությունների, ինչպես նաև ամբողջ հասարակության համար, քանի որ հասարակության կրթական մակարդակը և սովորելու կարողությունները սկզբունքային նշանակություն են ստանում երկրի զարգացման և միջազգային տնտեսական մրցունակության համար: Մարդկանց սովորելու ունակությունները մեծացնելու և գիտելիքն արդիականացնելու խնդրի առաջնահերթության գիտակցումը, իր հերթին, ենթադրում է մշտական աշխատանք և նշանակալի ներդրումներ երկրի կառավարության կողմից:

Տեղեկատվական դարաշրջանում կրթության բնույթի մեջ կատարվող արմատական փոփոխությունը սերտորեն առնչված է տեղեկատվության և հաղորդակցության արդի միջոցների զարգացման և տարածման հետ: Տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների (ՏՀՏ) տարածումը հրատապ է դարձնում աշխատողների կողմից համապատասխան գիտելիքների և հմտությունների յուրացման հարցը: Կրթության և ՏՀՏ-ի փոխհարաբերության մյուս կողմը հենց կրթության ոլորտում նոր տեխնոլոգիաների ներդրման միջոցով կրթության համակարգի արդիականացումը, ուսուցման և ուսումնառության արդյունավետության մեծացումն է:

Մարդիկ մուտք գործելով նոր տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման փուլ, դառնում են այդ գործընթացի ամենակարևորը բաղադրիչը: Շատ հետազոտողներ (Վ.Գ. Քինելև, Կ.Կ. Կոլին, Ա.Ա. Կուզնեցով և այլն) բավականին ողջամտորեն հավատում են, որ առկա կրթական պրակտիկայում նպաստակները, բովանդակությունը և տեխնոլոգիաները պետք է ապահովեն անձին ժամանակին պատշաճ կերպով նախապատրաստվելու տեղեկատվական ապագային:

Արդի փուլում կրթական պրակտիկայի զարգացումն արդիականացրեց կրթական գործընթացի կազմակերպման նոր, ինտենսիվ ձևեր, որոնք հանգեցրին տեղեկատվական

տեխնոլոգիաների կրթության մեջ ինտեգրումը և հեռավար ուսուցման տեխնոլոգիաների առանձին տեսակի ձևավորմանը:

Հեռավար ուսուցման իրականացման և օգտագործման հիման վրա ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաները, համակարգիչը թույլ են տալիս իրականացնել բազմաբնույթ հեռահաղորդակցություն, ներառյալ տարբեր սոցիալական խմբերի համար նախատեսված կրթական ծրագրերը:

Հատկապես պետք է կարևորել հեռավար կրթությունը գյուղական վայրերում, որտեղ բնակվում են հաշմանդամություն ունեցող անձինք և հասանելի չէ համացանցը:

Հեռավար կրթական տեխնոլոգիաներով մենք կփորձենք կապ հաստատել հիմնական կրթական տեխնոլոգիաների և հեռահաղորդակցության տեխնոլոգիաների միջնորդավորված (հեռավորության վրա) կամ ոչ լիովին միջնորդավորված ուսանողի և դասախոսի միջև փոխհարաբերություն [4]:


Այժմ տեղեկատվության ծավալն աճում է այնքան մեծ արագությամբ, որ անհրաժեշտ է ձեռք բերել կրթելու նոր մակարդակներ:

Այսօրվա ԲՈՒՀ-ն այլևս չի կարող լրիվությամբ բավարարել յուրաքանչյուր ուսանողի կրթական գործունեության ընդլայնման շրջանակը: Համալսարանում ուսանողները պետք է ուսումնասիրեն բոլոր մասնագիտությունների մեծ մասը ինքնուրույն, առանց դասախոսի անմիջական մասնակցության: Դրանից բացի դպրոցները և բուհերը պետք է համալրված լինեն ժամանակակից սարքավորումներով և տեխնիկական միջոցներով:

Հեռավար ուսուցման հարթակը համակարգչային ծրագրերի փոխկապակցված համալիր է, որոնք նախատեսված են կազմակերպելու և իրականացնելու հեռավար ուսուցում: Ժամանակակից հեռավար հարթակներում ուսուցումը սովորաբար կոչվում է ուսուցման կառավարման համակարգեր:

Պետք է հատուկ նշել, որ LMS-ը (learning management system) պատկանում է ազատ ծրագրային ապահովման դասին, որը մասնավորապես, կազմում է ձեռքբերում, դրանց օգտագործումը և նույնիսկ նման համակարգերի օգտագործումն անվճար է:

Ըստ գծապատկերի տվյալների [5], կարելի է եզրակացնել, որ ամենատարածված հեռավար ուսուցման համակարգն է Moodle պլատֆորմը (www.moodle.ru) (տես Գծապատկեր 1):



Գծապատկեր 1. Հեռավար ուսուցման աշխարհի ամենատարածված տասնյակը

Moodle համակարգի առավելություններն են.

- ✓ բաշխված է բաց կոդով,
- ✓ կենտրոնանում է համատեղ ուսուցման տեխնոլոգիաների վրա,
- ✓ հաղորդակցման լայն հնարավորություններ ունի,
- ✓ ստեղծում և պահում է յուրաքանչյուր սովորողի անձնական տվյալները,
- ✓ հնարավորություն է տալիս ցանկացած վարկանիշային համակարգի օգտագործումը,
- ✓ նյութը կարող է ներկայացվել ցանկացած դեպքում,

- ✓ թույլ է տալիս ստեղծել ձեր սեփական, բարդ և ինտեգրված դասընթացը,
- ✓ ընտրված հաջորդականություն,
- ✓ թույլ է տալիս կազմակերպել դասընթացներ, որպեսզի ուսանողները կարողանան օգտագործել նրանք իրական ժամանակում, առանց հրահանգչի հետ:

Կրթական գործընթացի կազմակերպման ներկայիս մտեցման մեջ, հեռավար ուսուցման մեթոդների օգտագործումը պետք է համակարգված լինի և պետք է ներառի գործունեության մի քանի ոլորտներ:

Հեռավար ուսուցումն համալսարանի կյանքում բերում է շատ նորույթներ.

- հեռավար ուսուցման համակարգի իրագործում (օրինակ, Moodle ծրագրային ապահովում, Պրոմեթևս, E-learning և այլն);

- տվյալների պահպանում և փնտրման գործընթացի իրականացում, համատեղ փաստաթղթերի օգտագործում և դրանք ինտերնետում տեղադրման հնարավորություն (օրինակ, GoogleDocs ծառայության հիման վրա),

- ուսանողների առաջադիմության լրացուցիչ վերահսկողության միջոցների օգտագործում (օրինակ, Moodle-ի ծրագրային ապահովման օգտագործում, էլեկտրոնային ամսագրեր և այլն),

- փոստային համակարգ:

Հեռավար ուսուցման համակարգի ամենաուժեղ կողմերից մեկն են ԲՈՒՀ-երը, որոնք լավ հնարավորություն են հաղորդակցության համար: Համակարգը սատարում է ցանկացած ձևաչափով ֆայլերի փոխանակում, ինչպես ուսուցիչների և աշակերտների, այնպես էլ դասախոսների և ուսանողների միջև: Ուղղորդման ծառայությունը օպերատիվորեն թույլ է տալիս պատկերացում տալու հեռավար դասընթացի բոլոր մասնակիցներին կամ խմբերին ընթացիկ իրադարձությունների մասին:

Կարևոր դերակատարություն ունի հեռավար ուսուցման տեխնոլոգիաների կիրառումը դասավանդման մեջ և առաջնային մաս է կազմում «Կրթությունը» և «Կրթության տեղեկատվականացում» ուղղություններում [3]:

Հեռավար ուսուցումն ենթադրում է անկախության գերակայություն, ուսանողը պետք է լինի անկախ աշխատանքում և հասկանա, որ վերահսկումը կիրականացվի հիմնականում թեստային ձևով: Հոգեբան Ա. Անաստազին կարծում է [1], որ մարդը, ով պատրաստվել է աշխատանքի թեստային առաջադրանքների հիման վրա 11%-ով ավելի բարձր է, քան «այլ» աշխատողները:

Վերոնշյալից կարելի է եզրակացնել, որ հեռավար ուսուցումն իր մեջ ներառում է.

1. աջակցում սահմանափակ առողջական հնարավորություններով ուսանողներին և իրականացում է՝

- ուսանողների քանակական կազմի ընդլայնում,

- լրացուցիչ կրթական ծրագրերի իրականացում,

- վերապատրաստման կազմակերպում:

2. տաղանդավոր ուսանողների կրթության հեռավար աջակցություն.

- օլիմպիադաների և մրցաշարեր կազմակերպում,

- դասընթացներ տարբեր առարկաներից և վկայականների տրամադրում,

- խորհրդատվություն դասախոսի հետ,

- վիկտորինաներ և մրցույթներ:

3. ուսանողների գիտելիքների հեռակառավարման կազմակերպում:

4. ընտրովի լրացուցիչ դասընթացների կազմակերպում:

5. արտերկրների հնարավորությունների օգտագործում:

Ամփոփելով, կարելի է եզրակացնել, որ «խելացի» և իմաստալից հեռավար ուսուցման օգտագործման կազմակերպումով կարելի է հասնել ոչ միայն դրական վերապատրաստման արդյունքների, այլև որոշ դեպքերում կարելի է լուծելու սուր խնդիրներ ուսումնական գործընթացի կազմակերպման բնագավառում: Սակայն հարկ է նշել, որ կրթական գործընթացի կառուցվածքի փոփոխությունները, հատկապես՝ «վիրտուալիզացիան», պահանջում են

ուսումնական գործունեությունից հատուկ մոտեցումներ և ֆինանսական միջոցների ներդրումներ (ներառյալ ժամանակավոր):

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Анастаси А. Психологическое тестирование: пер. с англ. Книга 1. - М.: Пед-ка, 1982.
2. Дистанционное обучение [Электронный ресурс]: [http://zakon.edu.ru/catalog.asp? cat_ob_no=12307&ob_no=13097](http://zakon.edu.ru/catalog.asp?cat_ob_no=12307&ob_no=13097) -2016).
3. Портал Национального фонда подготовки кадров (НФПК)[электронный ресурс]. – Режим доступа: <http://www.ntf.ru/p1aa1.html> -2015).
4. <http://www.consultant.ru/online/base/?req=doc;base=LAW;n=95866> -2017.
5. Сообщество Moodle. [электронный ресурс]: <https://moodle.org/> -2013:

Տեղեկություններ հեղինակների մասին.

Վազգեն Առստամյան – մ.գ.թ. դոցենտ, ԱրՊՀ կիրառական մաթեմատիկայի և ինֆորմատիկայի ամբիոնի վարիչ
E-mail. varustamyan@rambler.ru

Հոդվածը տպագրության է նրաշխարհում խմբագրական կոլեկտիվի անդամ, ֆ.մ.գ.թ. Գ.Ն.Սահակյանը:

ՆՏԴ 378.14

Մաթեմատիկայի դասավանդման մեթոդիկա

**ՄՈԴՈՒԼ ՊԱՐՈՒՆԱԿՈՂ ՊԱՐԱՄԵՏՐՈՎ ՀԱՎԱՍԱՐՈՒՄՆԵՐ
Կարենե ԳՐԻԳՈՐՅԱՆ, Ռարեդրտ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

Բանալի բառեր: հավասարում, լուծում, պարամետր, մոդուլ, գրաֆիկ, կոորդինատային հարթություն, տրոհում, նշանապահականություն, հատում

Ключевые слова: уравнение, решение, параметр, модуль, график, координатная плоскость, разбиение, пересечение, горизонталь.

Key words: equation, solution, parameter, module, graph, coordinate plane, splitting, crossing, horizontal.

МОДУЛЬ СОДЕРЖАЩИЕ УРАВНЕНИЯ С ПАРАМЕТРАМИ

К. Григорян, Р.Арутюнян

В статье рассматриваются решения некоторых модуль содержащих уравнений с параметрами. Для нахождения решений уравнения при всех допустимых значениях параметра использовался графический метод решения, суть которого в условном разбиении координатной плоскости на области, в каждом из которых выражения, содержащиеся под знаком модуля, сохраняют свой знак, и последующего построения соответствующих графиков. Множество решений уравнения определяется по графику в зависимости от значений параметра.

MODULE CONTAINING EQUATIONS WITH PARAMETERS

K.Grigroryan, R. Harutyunyan

The article examines the solution of some module containing equations with parameters. For finding solutions of the equation for all permissible parameter values used graphical method of solution, the essence of which is conditional splitting the coordinate plane into regions in each of which the expressions under the sign of the module, retain their sign, and the subsequent creation of appropriate graphs. Many solutions of the equation are determined by graphics depending on parameter values.

Նորվածում դիտարկվում են մոդուլ պարունակող պարամետրով հավասարումների լուծումները: Այս տեսքի հավասարումներ լուծելիս պարամետրի բոլոր թույլատրելի արժեքների համար կիրառվել է գրաֆիկական եղանակը, որի էությունը կոորդինատային հարթության տրոհումն է մասերի, որոնցից յուրաքանչյուրում մոդուլի նշանի մեջ գտնվող արտահայտություններ պահպանում են իրենց նշանը: Կառուցելով համապատասխան գրաֆիկը, որոշվում է լուծումների բազմությունը կախված պարամետրի արժեքներից ելնելով գրաֆիկից:

Մաթեմատիկայի դպրոցական դասընթացում պարամետր պարունակող խնդիրները համարվում են դժվարավուններից: Լուծել պարամետր պարունակող հավասարումը նշանակում է լուծել հավասարումը պարամետրի բոլոր արժեքների համար: Պարամետր պարունակող խնդիրների լուծումը դժվարություններ է առաջացնում սովորողների մոտ, քանի որ գոյություն չունի որևէ ալգորիթմ, որի օգնությամբ կարելի է լուծել խնդիրը: Յուրաքանչյուր այդպիսի առաջադրանք պահանջում է տրամաբանական, ստեղծագործական մոտեցում:

Մոդուլ պարունակող պարամետրով հավասարումների լուծման դեպքում կիրառվում է մոդուլից ազատման կանոնը՝ ըստ սահմանման՝

$$|f(x)| = \begin{cases} f(x), & \text{եթե } f(x) \geq 0 \\ -f(x), & \text{եթե } f(x) < 0 \end{cases}$$

Այդպիսի հավասարումները լուծելու համար, շատ դեպքերում, նախընտրելի է գրաֆիկական եղանակը, քանի որ անալիտիկ լուծումը ավելի բարդ և ծավալուն է:

Դիտարկենք օրինակներ:

Օրինակ 1. Կախված a պարամետրից քանի՞ արմատ ունի հավասարումը.

$$x^2 + 5(x + 1) + 3|x - a| + a = 0$$

Լուծում:

ա). Անալիտիկ եղանակ.

Եթե $x \geq a$, ստանում ենք $x^2 + 8x + 5 - 2a = 0$, $D = 11 + 2a$:

Այս դեպքում հավասարումն ունի երկու արմատ, երբ $a > -\frac{11}{2}$, արմատ չունի, երբ $a < -\frac{11}{2}$ և միակ արմատ, երբ $a = -\frac{11}{2}$:

Եթե $x < a$, ստանում ենք $x^2 + 2x + 5 + 4a = 0$, $D = -4 - 4a$:

Տվյալ հավասարումը ունի երկու արմատ, երբ $a < -1$, մեկ արմատ, երբ $a = -1$ և արմատ չունի, երբ $a > -1$:

Այսպիսով, ամփոփելով երկու դեպքերը, ստանում ենք՝

երբ $-\frac{11}{2} < a < -1$, հավասարումն ունի երկու արմատ,

երբ $a = -1$ կամ $a = -\frac{11}{2}$, հավասարումն ունի մեկ արմատ,

երբ $a < -\frac{11}{2}$ կամ $a > -1$, հավասարումն արմատ չունի:

բ). Գրաֆիկական նրանակ՝


Օձա կոորդինատային հարթության վրա պատկերենք բոլոր այն (x, a) կետերը, որոնք բավարարում են տվյալ հավասարմանը (նկ. 1):

Եթե $x \geq a$, ապա $a = \frac{1}{2}(x^2 + 8x + 5)$, եթե $x < a$, ապա $a = -\frac{1}{4}(x^2 + 2x + 5)$:

Գտնենք այդ պարաբոլների հատման կետերը

$$\begin{cases} a = \frac{1}{2}(x^2 + 8x + 5) \\ a = -\frac{1}{4}(x^2 + 2x + 5) \end{cases}$$

համակարգի լուծումից՝ $A(-5; -5)$, $B(-1; -1)$, որոնք գտնվում են $x = a$ ուղղի վրա:



Նկ. 1

Գրաֆիկից երևում է, որ

երբ $a = -1$ կամ $a = -\frac{11}{2}$ հավասարումը ունի մեկ լուծում,

երբ $-\frac{11}{2} < a < -1$, հավասարումը ունի երկու լուծում,

երբ $a < -\frac{11}{2}$ կամ $a > -1$ հավասարումը լուծում չունի, քանի որ պարամետրի այդ


արժեքներին համապատասխանող հորիզոնական ուղղին, հատում է գրաֆիկը նշված քանակով կետերում:

Օրինակ 2. Լուծել հավասարումը

$$x^2 = 2|x - a| - 2|x - 2|$$

Լուծում: $x = a$ և $x = 2$ ուղիղները տրոհում են կոորդինատային Օձա հարթությունը 4 մասի, որոնցից յուրաքանչյուրում մոդուլի նշանի մեջ գտնվող արտահայտությունները

պահպանում են իրենց նշանը: Հաշվի առնելով դա, կարող ենք ազատվել մոդուլների նշաններից, այնուհետև յուրաքանչյուր մասում կառուցել ստացված ֆունկցիայի գրաֆիկը (նկ. 2):



Նկ. 2

1) $x \geq a, x \geq 2$: Ազատվելով մոդուլների նշաններից, ստանում ենք $x^2 = -2a + 4$:

Արտահայտելով $a = -\frac{1}{2}x^2 + 2$ կառուցում ենք գրաֆիկը (պարաբոլը) 1)-ին մասում:

Գտնենք x -ը՝

$$\begin{cases} x^2 = -2a + 4 \\ x \geq 2 \end{cases} \Leftrightarrow x = \sqrt{-2a + 4}$$

Հանգումորեն դիտարկում ենք մյուս դեպքերը.

2) $x \geq a, x < 2$

$$x^2 = 4x - 2a - 4 \Leftrightarrow a = -\frac{x^2}{2} + 2x - 2$$

$$\begin{cases} x^2 = 4x - 2a - 4 \\ x < 2 \end{cases} \Leftrightarrow \begin{cases} x = 2 \pm \sqrt{-2a} \\ x < 2 \end{cases} \Leftrightarrow x = 2 - \sqrt{-2a}$$

3) $x < a, x < 2$

$$x^2 = 2a - 4 \Leftrightarrow a = \frac{x^2}{2} + 2$$

$$\begin{cases} x = \pm\sqrt{2a - 4} \\ x < 2 \end{cases} \Leftrightarrow x = \pm\sqrt{2a - 4}$$

4) $x < a, x \geq 2$

$$x^2 = -4x + 2a + 4 \Leftrightarrow a = \frac{x^2}{2} + 2x - 2$$

$$\begin{cases} x^2 + 4x - 2a - 4 = 0 \\ x \geq 2 \end{cases} \Leftrightarrow \begin{cases} x = -2 \pm \sqrt{8 + 2a} \\ x \geq 2 \end{cases} \Leftrightarrow x = -2 + \sqrt{8 + 2a}$$

Ելնելով գրաֆիկից (նկ.2) և համապատասխան x -ի արժեքներից հանգում ենք վերջնական պատասխանին՝

երբ $a \leq 0$, $x = 2 - \sqrt{-2a}$, $x = \sqrt{-2a + 4}$,
 երբ $0 < a < 2$, հավասարումը արմատ չունի,
 երբ $2 \leq a \leq 4$, $x = \pm\sqrt{2a - 4}$,
 երբ $a > 4$, $x = -\sqrt{2a - 4}$, $x = -2 + \sqrt{8 + 2a}$:

Օրինակ 3. Լուծել հավասարումը

$$(4a - 15)x^2 + 2a|x| + 4 = 0$$

Լուծում: Ակնհայտ է, որ երբ $a = \frac{15}{4}$ հավասարումը լուծում չունի:


Այն դեպքում, երբ $a \neq \frac{15}{4}$ նշանակելով $|x| = t$, ստանում ենք

$$(4a - 15)t^2 + 2at + 4 = 0, \text{ որտեղ } t > 0:$$

Դիցուք $f(t) = (4a - 15)t^2 + 2at + 4$:

Քանի որ $f(0) = 4 > 0$ ապա $f(t)$ ֆունկցիայի գրաֆիկը հատում է օրդինատների առանցքը վերին կիսահարթությունում $(0; 4)$ կետում: Հաշվի առնելով, որ $t > 0$ դիտարկենք կոորդինատային հարթության վրա գրաֆիկի դասավորվածության հնարավոր դեպքերը.

1. Պարաբոլի ճյուղերը ուղղված են վերև (նկ.3)




Նկ.3

Պարաբոլը հատում է Ot առանցքը դրական արագիսներով երկու կետում կամ շոշափում է Ot առանցքը դրական արագիս ունեցող մի կետում: Այսինքն՝ ստանում ենք հետևյալ համակարգը.

$$\begin{cases} D \geq 0 \\ -2a \\ \frac{2(4a - 15)}{4a - 15} > 0 \\ 4a - 15 > 0 \end{cases} \Leftrightarrow \begin{cases} a \in (-\infty; 6] \cup [10; \infty) \\ 0 < a < \frac{15}{4} \\ a > \frac{15}{4} \end{cases} \Leftrightarrow a \in \emptyset:$$

2. Պարաբոլի ճյուղերը ուղղված են ներքև (նկ.4)



Նկ.4

Այս դեպքում պարաբոլը անպայման հատում է Ot առանցքը դրական արգիս ունեցող մի կետում: Երբ $4a - 15 < 0 \Leftrightarrow a < \frac{15}{4}$, ապա

$$t = \frac{a + \sqrt{a^2 - 16a + 60}}{15 - 4a} > 0$$

Որտեղից էլ՝

$$x = \pm \frac{a + \sqrt{a^2 - 16a + 60}}{15 - 4a}$$

Պատասխան: Երբ $a \geq \frac{15}{4}$, հավասարումը արմատ չունի, երբ $a < \frac{15}{4}$,

$$x = \pm \frac{a + \sqrt{a^2 - 16a + 60}}{15 - 4a}:$$

Օրինակ 4. Լուծել հավասարումը

$$|x - a| + |x + a + 1| = 3$$

Լուծում: $x = a$ և $x = -a - 1$ ուղիղները տրոհում են կոորդինատային Օxա հարթությունը 4 մասի, որոնցից յուրաքանչյուրում մոդուլի մեջ գտնվող արտահայտությունը պահպանում է իր նշանը: Որոշելով այդ նշանը և ազատվելով մոդուլների նշաններից, յուրաքանչյուր մասում կառուցում ենք ստացված ֆունկցիայի գրաֆիկը (նկ.5):


Երբ $x < a$, $x < -a - 1$, ստանում ենք $a - x - x - a - 1 = 3 \Leftrightarrow x = -2$:

Երբ $x < a$, $x > -a - 1$, ստանում ենք $a - x + x + a + 1 = 3 \Leftrightarrow a = 1$:

Երբ $x > a$, $x > -a - 1$, ստանում ենք $x - a + x + a + 1 = 3 \Leftrightarrow x = 1$:

Երբ $x > a$, $x < -a - 1$, ստանում ենք $x - a - x - a - 1 = 3 \Leftrightarrow a = -2$:

Կառուցենք համապատասխան գրաֆիկը.



Նկ.5

Ելնելով գրաֆիկից, հանգում ենք հետևյալ պատասխանին՝

Երբ $a = 1$ կամ $a = -2$, $-2 \leq x \leq 1$:

Երբ $-2 \leq a \leq 1$, $x = 1$, $x = 2$:

Օրինակ 5. Լուծել հավասարումը.

$$x|x + 1| = a$$


Լուծում: Կառուցենք $a(x)$ ֆունկցիայի գրաֆիկը. $a(x) = \begin{cases} x^2 + x, & \text{երբ } x \geq -1 \\ -x^2 - x, & \text{երբ } x \leq -1 \end{cases}$

Դիցուք $x \geq -1$ ստանում ենք $x^2 + x = a$: Որտեղից՝

$$x = \frac{1}{2}(-1 \pm \sqrt{1 + 4a}):$$

Երբ $x \leq -1$, ապա ստանում ենք $-x^2 - x - a = 0 \Leftrightarrow x = \frac{1}{2}(-1 \pm \sqrt{1 - 4a})$

Գտնենք պարաբոլի զագաթի կոորդինատները և կառուցենք $a(x)$ ֆունկցիայի գրաֆիկը (նկ. 6):



Նկ.6

Ելնելով գրաֆիկից հանգում ենք պատասխանին.

Երբ $a > 0, x = \frac{1}{2}(-1 + \sqrt{1 + 4a})$:

Երբ $a = 0, x = 0; x = -1$:

Երբ $-\frac{1}{4} \leq a < 0, x = \frac{1}{2}(-1 \pm \sqrt{1 + 4a}), x = \frac{1}{2}(-1 - \sqrt{1 - 4a})$:

Երբ $a < -\frac{1}{4}, x = \frac{1}{2}(-1 - \sqrt{1 - 4a})$:

Եզրակացություն:

Մոդուլ պարունակող պարամետրով հավասարումները շատ դեպքերում հարմար է լուծել գրաֆիկական եղանակով, որի դեպքում կոորդինատային հարթությունը տրոհվում է մասերի, որոնցից յուրաքանչյուրում մոդուլի մեջ գտնվող արտահայտությունները պահպանում են իրենց նշանները: Ազատվելով մոդուլների նշաններից և կառուցելով ստացված ֆունկցիայի գրաֆիկը, որոշվում է հավասարման լուծումը, կախված պարամետրի թույլատրելի արժեքներից:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Старков В.Н. 165 задач с параметрами (в помощь абитуриенту)//Методические указания. СПб. изд. СПбГУ, 2004-25с.
2. Шарыгин И.Ф. Факультативный курс по математике. Решение задач. Уч. пособ. для 10 кл. ср. школы – М.: Просвещение, 1989.-252с.

Տվյալներ հեղինակների մասին.

Գրիգորյան Կարինե Միկիտի - Շուշիի տեխնոլոգիական համալսարանի դասախոս
karine.grigoryan1957@mail.ru

Հարությունյան Ռոբերտ Միսակի - Շուշիի տեխնոլոգիական համալսարանի ավագ դասախոս
rharutyunyan@shushitech.am

Հոդվածը տպագրության է նրաշխարհում լսմագրական կոլեգիայի անդամ, ֆ.մ. գ.դ. Ա.Մ. Խաչատրյանը:

ՀՏԴ 512.371

Մաթեմատիկայի դասական դասընթացի մեթոդիկա

**ՏԱՐԲԵՐ ԵՂԱՆԱԿՆԵՐՈՎ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ՄԵԹՈԴԱԿԱՆ
ՆՊՍԱԿԱՆԱՐՄԱՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ
Ալեքսանդր ԽԱՉԱՏՐՅԱՆ, Գուրգեն ԽԱՉԱՏՐՅԱՆ**

Բանալի բառեր. խնդիրների լուծում, խնդիրների լուծման եղանակներ, առանցքային խնդիր, լուծման մոտեցում, խնդրի լուծման մեթոդիկա, եռանկյունաչափական հավասարում, հիմնական բանաձևեր:

Ключевые слова: решение задач, способ решения задач, ключевая задача, подход к решению, методика решения задач, тригонометрическое уравнение, основные формулы.

Key words: problem solving, way of solving problems, the main problem, approach to the solution, methods of solving problems, trigonometric equation, basic formulas.

О МЕТОДИЧЕСКОЙ ЦЕЛЕСООБРАЗНОСТИ РЕШЕНИЯ ЗАДАЧ РАЗНЫМИ СПОСОБАМИ

А. М. Хачатрян, Г. М. Хачатрян

В работе рассматривается вопрос о целесообразности решения задач школьного курса математики разными способами. Больше, чем десятью способами решено одно несложное тригонометрическое уравнение, что позволяет повторить с учащимися не только методы решения тригонометрических уравнений, но и основные формулы тригонометрии. Показано, каким образом применение различных методов и приемов влияет на усвоение учебного материала и способствует развитию гибкости мышления учащихся.

ON THE METHODOLOGICAL EXPEDIENCY OF SOLVING PROBLEMS IN DIFFERENT WAYS.

A. M. Khachatryan, G. M. Khachatryan

The paper considers the question of the feasibility of solving the problems of the school course of mathematics in various ways. More than ten ways solve one simple trigonometric equation, which allows you to repeat with the students not only the methods of solving trigonometric equations, but also the basic formulas of trigonometry. It is shown how the application of various methods and primes influences the assimilation of educational material and promotes the development of students' thinking flexibility.

Աշխատանքում դիտարկվում է դպրոցական դասընթացի խնդիրների տարբեր եղանակներով լուծման նպատակահարմարության հարցը: Մեկ տասնյակից ավելի եղանակներով լուծված է ոչ բարդ եռանկյունաչափական մեկ հավասարում, որը հնարավորություն է տալիս ոչ միայն սովորողների հետ կրկնելու եռանկյունաչափական հավասարումների լուծման մեթոդները, այլև եռանկյունաչափության հիմնական բանաձևերը: Ցույց է տրված, թե ինչպես է տարբեր մեթոդների և հնարքների կիրառումը ազդում ուսումնական նյութի յուրացմանը և նպաստում սովորողների ձկուն մտածողության զարգացմանը:

Ավելի լավ է լուծել մեկ խնդիր տարբեր մեթոդներով,
քան մի քանի խնդիր՝ մեկ մեթոդով:
Դ. Պոյա

Խնդիրների լուծումը տարբեր մեթոդներով ունի կարևոր մեթոդական նշանակություն և մեծ հնարավորություններ է ընձեռում մաթեմատիկայի ուսուցման պրոցեսի կատարելագործման համար [1-2]:

Առաջինը, խնդիրների լուծման եղանակների փնտրումը ուսումնական պրոցեսի յուրացման գիտակցական և ակտիվության դիդակտիկական սկզբունքների իրականացման էֆեկտիվ ճանապարհներից մեկն է: Մինևույն խնդրի տարբեր մեթոդներով լուծման ժամանակ հաճախ սովորողներին ծանոթ վարժությունը ներկայանում է որակապես նոր պայմաններով, կրկնվում նոր կապերով ու համակցությամբ:

Երկրորդը, խնդրի լուծումը տարբեր եղանակներով սովորողներին հարկ է լինում օգտագործել շատ տեսական գիտելիքներ, մեթոդներ ու հնարքներ, վերլուծել դրանք տվյալ

խնդրի տրված վիճակում կիրառելիության տեսակետից, ինչը նպաստում է մտածողության ճկունության ձևավորմանը:

Երրորդը, մի խնդրի լուծման տարբեր եղանակների փնտրման պրոցեսում գերիշխում է ստեղծագործական մտածողությունը, ինչը նպաստում է սովորողների ինտելեկտի զարգացմանը:

Բացի դրանից, տարբեր եղանակներով խնդիրների լուծումը ուղղված է նաև սովորողների գեղագիտական դաստիարակությանը: Հատկապես այստեղ դպրոցականները սովորում են ինքնուրույն գտնել խնդրի ավելի պարզ ու գեղեցիկ լուծումներ, սկսում են տեսնել մաթեմատիկայի տարբեր բաժինների փոխադարձ կապերը, մաթեմատիկա գիտության գեղեցկությունը:

Խնդրի լուծումը տարբեր եղանակներով միանգամայն բնականորեն միահյուսվում է դասերի անցկացման պրոցեսին: Նկատվել է, որ ծրագրի որևէ բաժնի ընդհանուր կրկնության ժամանակ նպատակահարմար է օգտագործել խնդիրներ, որոնք լուծվում են տարբեր եղանակներով և ընդգրկում են տեսական մեծ նյութ: Օրինակ, “Եռանկյունաչափական հավասարումներ” թեմայով ընդհանուր կրկնության ժամանակ շատ էֆեկտիվ է

$$\sin x + \cos x = 1 \tag{1}$$

հավասարման լուծման հնարավորինս շատ եղանակներով լուծումներ գտնելը: Միայն այս առաջադրանքի լուծմամբ սովորողների հետ հնարավոր կլինի կրկնել ոչ միայն եռանկյունաչափական հավասարումների լուծման մեթոդները, այլև եռանկյունաչափության հիմնական բանաձևերը, իսկ հետագայում ներգրավել այլ բաժինների խնդիրներ:

Մանկավարժական պրակտիկայում հայտնի է պարապմունքի այնպիսի ձև, ինչպիսին է “Հիմնարար խնդիրների լուծման դաս”, որը հենվում է հենց ոչ մեծաքանակ խնդիրների տարբեր եղանակներով լուծման վրա:

Ներկայացնենք (1) հավասարման լուծման տարբեր եղանակներ:

I եղանակ: (1) հավասարումն իրենից ներկայացնում է

$$a \sin x + b \cos x = c \tag{2}$$

հավասարման մասնավոր դեպքը, երբ $a = b = c = 1$: Դպրոցական դասընթացից հայտնի է, որ (2) հավասարումը կարելի է լուծել լրացուցիչ անկյուն մուծելու եղանակով [3].

$$\sin \varphi = \frac{a}{\sqrt{a^2 + b^2}}, \cos \varphi = \frac{b}{\sqrt{a^2 + b^2}},$$

կամ որ նույնն է՝ $\operatorname{tg} \varphi = \frac{a}{b}$ և $\varphi = \operatorname{arctg} \frac{a}{b}$:

Արդյունքում (2) հավասարումը բերվում է

$$\cos(x - \varphi) = \frac{c}{\sqrt{a^2 + b^2}}, \tag{3}$$

տեսքի: Եթե $\frac{|c|}{\sqrt{a^2 + b^2}} \leq 1$ (3) հավասարումն ունի լուծում, իսկ եթե $\frac{|c|}{\sqrt{a^2 + b^2}} > 1$, լուծում չունի: (1) հավասարման դեպքում ունենք

$$\operatorname{tg} \varphi = 1, \varphi = \frac{\pi}{4}, \frac{c}{\sqrt{a^2 + b^2}} = \frac{\sqrt{2}}{2}$$

և (3) հավասարումը բերվում է

$$\cos\left(x - \frac{\pi}{4}\right) = \frac{\sqrt{2}}{2}, \tag{4}$$

հավասարման, որի լուծումն է

$$x - \frac{\pi}{4} = \pm \frac{\pi}{4} + 2\pi k$$

Այստեղից՝

$$x = 2\pi k, x = \frac{\pi}{2} + 2\pi k, k \in Z \tag{5}$$

Նշենք, որ հետագա գրություններում l -ը, թեպետ z -ի նշվում, $k \in Z$ և $n \in Z$:

II եղանակ: (2), հետևաբար, և (1) հավասարման լուծման մյուս հայտնի եղանակը հետևյալ տեղադրությունն է.

$$\sin x = \frac{2\operatorname{tg} \frac{x}{2}}{1 + \operatorname{tg}^2 \frac{x}{2}}, \quad \cos x = \frac{1 - \operatorname{tg}^2 \frac{x}{2}}{1 + \operatorname{tg}^2 \frac{x}{2}}$$

Տեղադրելով (1) հավասարման մեջ $n \geq 2$ բարդ ձևափոխություններից հետո ստանում ենք

$$\operatorname{tg} \frac{x}{2} (\operatorname{tg} \frac{x}{2} - 1) = 0$$

$$\operatorname{tg} \frac{x}{2} = 0 \text{ կամ } \operatorname{tg} \frac{x}{2} = 1,$$

Բնականաբար, նորից ստանում ենք (4) լուծումները՝

$$x = 2\pi k, \quad x = \frac{\pi}{2} + 2\pi k$$

III եղանակ: Դիմենք բերման բանաձևերի օգնությամբ և (1) հավասարումը ներկայացնենք հետևյալ տեսքերից մեկով.

$$\text{ա) } \sin x + \sin \left(\frac{\pi}{2} - x\right) = 1 \Leftrightarrow 2\sin \frac{\pi}{4} \cos \left(x - \frac{\pi}{4}\right) = 1 \Leftrightarrow \cos \left(x - \frac{\pi}{4}\right) = \frac{\sqrt{2}}{2}$$

$$\text{բ) } \cos x + \cos \left(\frac{\pi}{2} - x\right) = 1 \Leftrightarrow 2\cos \frac{\pi}{4} \cos \left(x - \frac{\pi}{4}\right) = 1 \Leftrightarrow \cos \left(x - \frac{\pi}{4}\right) = \frac{\sqrt{2}}{2}$$

Երկու դեպքերում էլ (1) հավասարումը բերվեց (4) հավասարմանը, որի լուծումն ունի (5) տեսքը:

IV եղանակ: (1) հավասարման երկու կողմը բարձրացնենք քառակուսի: Այստեղ պետք է հաշվի առնել այն հանգամանքը, որ (1) հավասարման ձախ մասը կարող է ընդունել ինչպես դրական, այնպես էլ բացասական արժեքներ: Հետևաբար, քառակուսի բարձրացման գործողության ժամանակ կարող են առաջանալ ավելորդ արմատներ: Իրոք՝

$$(\sin x + \cos x)^2 = 1 \Leftrightarrow 1 + 2\sin x \cos x = 1 \Leftrightarrow$$

$$\begin{cases} \sin x = 0 \\ \cos x = 0 \end{cases} \Leftrightarrow \begin{cases} x = \pi n \\ x = \frac{\pi}{2} + \pi n \end{cases}$$

Դեն նետելով քառակուսի բարձրացման արդյունքում առաջացած $x = \pi + 2\pi n$ և $x = \frac{3\pi}{2} + 2\pi n$ ավելորդ լուծումները, կստանանք (5) լուծումները:

V եղանակ: (1) հավասարությունը տեղի ունի, եթե

$$\begin{cases} \sin x = 0 \\ \cos x = 1 \end{cases} \Leftrightarrow \begin{cases} x = \pi n \\ x = 2\pi k \end{cases} \Leftrightarrow \begin{cases} x = 2\pi k \\ x = \frac{\pi}{2} + 2\pi k \end{cases}$$

$$\begin{cases} \sin x = 1 \\ \cos x = 0 \end{cases} \Leftrightarrow \begin{cases} x = \frac{\pi}{2} + \pi n \\ x = \frac{\pi}{2} + \pi n \end{cases}$$

VI եղանակ: (1) հավասարումը ներկայացնենք

$$\sin x = 1 - \cos x$$

տեսքով, իսկ վերջինիս ձևափոխությամբ ստանում ենք.

$$2\sin \frac{x}{2} \cos \frac{x}{2} = 2\sin^2 \frac{x}{2} \Leftrightarrow \begin{cases} \sin \frac{x}{2} = 0 \\ \operatorname{tg} \frac{x}{2} = 1 \end{cases} \Leftrightarrow \begin{cases} x = 2\pi k \\ x = \frac{\pi}{2} + 2\pi k \end{cases}$$

VII եղանակ: (1) հավասարումը ներկայացնենք

$$\sin x + \cos x = \sin^2 x + \cos^2 x$$

տեսքով և ձևափոխենք այն

$$\sin x(1 - \sin x) + \cos x(1 - \cos x) = 0$$

տեսքի: Օգտվելով եռանկյունաչափության հայտնի բանաձևերից, կունենանք.

$$2\sin \frac{x}{2} \cos \frac{x}{2} (1 - \sin x) + 2\cos x \sin^2 \frac{x}{2} = 0$$

$$2\sin \frac{x}{2} \left[\cos \frac{x}{2} - \left(\sin x \cos \frac{x}{2} - \cos x \sin \frac{x}{2} \right) \right] = 0$$

$$\begin{cases} \sin \frac{x}{2} = 0 \\ \cos \frac{x}{2} - \sin \frac{x}{2} = 0 \end{cases} \Leftrightarrow \begin{cases} \sin \frac{x}{2} = 0 \\ \operatorname{tg} \frac{x}{2} = 1 \end{cases} \Leftrightarrow \begin{cases} x = 2\pi k \\ x = \frac{\pi}{2} + 2\pi k \end{cases}$$

VIII եղանակ: (1) հավասարումը ներկայացնենք

$$\sqrt{1 - \cos^2 x} = 1 - \cos x$$

տեսքով և ձևափոխենք այն հետևյալ կերպ

$$\begin{aligned} 1 - \cos^2 x &= (1 - \cos x)^2 \\ 1 - \cos^2 x &= 1 - 2\cos x + \cos^2 x \\ \cos^2 x - \cos x &= 0 \end{aligned}$$

Ստանում ենք

$$\begin{cases} \cos x = 1 \\ \cos x = 0 \end{cases} \Leftrightarrow \begin{cases} x = 2\pi k \\ x = \frac{\pi}{2} + \pi n \end{cases}$$

Վերցնում ենք միայն $x = 2\pi k$, $x = \frac{\pi}{2} + 2\pi k$ արժեքները:

IX եղանակ: (1) հավասարումը կարելի է ներկայացնել նաև

$$\sqrt{1 - \sin^2 x} = 1 - \sin x$$

տեսքով և կատարելով նախորդ եղանակում կատարված ձևափոխությունները, կունենանք

$$\begin{cases} \sin x = 0 \\ \sin x = 1 \end{cases} \Leftrightarrow \begin{cases} x = \pi n \\ x = \frac{\pi}{2} + 2\pi k \end{cases}$$

Վերցնում ենք միայն $x = 2\pi k$, $x = \frac{\pi}{2} + 2\pi k$ արժեքները:

X եղանակ: (1) հավասարման երկու կողմը բազմապատկենք $\sin x \neq 0$ -ով: Ձևափոխությունների արդյունքում կստանանք

$$\begin{aligned} \sin^2 x + \sin x \cos x &= \sin x \Leftrightarrow 1 - \cos^2 x - \sin x(1 - \cos x) = 0 \Leftrightarrow \\ &\Leftrightarrow (1 - \cos x)(1 + \cos x - \sin x) = 0 \Leftrightarrow \end{aligned}$$

$$\begin{cases} 1 - \cos x = 0 \\ 1 + \cos x - \sin x = 0 \end{cases}$$

Լուծելով համախմբի առաջին հավասարումը, կստանանք

$$\cos x = 1, x = 2\pi k$$

Օգտվելով համախմբի երկրորդ և ելակետային հավասարումներից կունենանք

$$\begin{cases} \cos x - \sin x = -1 \\ \cos x + \sin x = 1 \end{cases}$$

Բազմապատկելով համակարգի հավասարումների աջ և ձախ մասերը, կստանանք

$$\cos 2x = -1, x = \frac{\pi}{2} + \pi n$$

Վերցնում ենք միայն $x = \frac{\pi}{2} + 2\pi k$ արժեքները:

XI եղանակ: (1) հավասարման երկու կողմը բազմապատկենք $\cos x \neq 0$ -ով: Ձևափոխությունների արդյունքում կստանանք

$$\begin{aligned} \cos^2 x + \sin x \cos x &= \cos x \Leftrightarrow 1 - \sin^2 x - \cos x(1 - \sin x) = 0 \Leftrightarrow \\ &\Leftrightarrow (1 - \sin x)(1 + \sin x - \cos x) = 0 \Leftrightarrow \end{aligned}$$

$$\begin{cases} \sin x = 1 \\ 1 + \sin x - \cos x = 0 \end{cases}$$

Լուծելով համախմբի առաջին հավասարումը, կստանանք

$$\sin x = 1, x = \frac{\pi}{2} + 2\pi k$$

Օգտվելով համախմբի երկրորդ և ելակետային հավասարումներից, կունենանք

$$\begin{cases} \cos x - \sin x = 1 \\ \cos x + \sin x = 1 \end{cases}$$

Գումարելով համակարգի հավասարումների աջ և ձախ մասերը, կստանանք

$$\cos x = 1, x = 2\pi k$$

XII եղանակ: (1) հավասարման երկու կողմը բաժանենք $\sin x \neq 0$ -ի վրա կունենանք

$$1 + \operatorname{ctg} x = \frac{1}{\sin x} \Leftrightarrow (1 + \operatorname{ctg} x)^2 = \frac{1}{\sin^2 x}$$

Օգտվելով

$$\frac{1}{\sin^2 x} = 1 + \operatorname{ctg}^2 x$$

նույնությունից, կստանանք

$$1 + 2ctgx + ctg^2x = 1 + ctg^2x \Leftrightarrow ctgx = 0 \Leftrightarrow x = \frac{\pi}{2} + \pi n$$

Վերցնում ենք միայն $x = \frac{\pi}{2} + 2\pi k$ արժեքները:

Եթե $\sin x = 0$, ապա $x = \pi n$: Վերցնում ենք միայն $x = 2\pi k$ արժեքները:

XIII եղանակ: (1) հավասարման երկու կողմը բաժանենք $\cos x \neq 0$ -ի վրա կունենանք

$$1 + tgx = \frac{1}{\cos x} \Leftrightarrow (1 + tgx)^2 = \frac{1}{\cos^2 x}$$

Օգտվելով

$$\frac{1}{\cos^2 x} = 1 + tg^2 x$$

նույնությունից, կստանանք

$$1 + 2tgx + tg^2x = 1 + tg^2x \Leftrightarrow tgx = 0 \Leftrightarrow x = \pi n$$

Վերցնում ենք միայն $x = 2\pi k$ արժեքները:

Եթե $\cos x = 0$, ապա $x = \frac{\pi}{2} + \pi n$: Վերցնում ենք միայն $x = \frac{\pi}{2} + 2\pi k$ արժեքները:

XIV եղանակ: (1) հավասարումը ներկայացնենք

$$\sqrt{\frac{1 - \cos 2x}{2}} + \sqrt{\frac{1 + \cos 2x}{2}} = 1$$

տեսքով և հավասարման երկու կողմը բարձրացնենք քառակուսի: Կստանանք

$$\frac{1 - \cos 2x}{2} + \frac{1 + \cos 2x}{2} + 2\sqrt{\frac{1 - \cos^2 2x}{4}} = 1$$


որը բերվում է $\sin 2x = 0$ հավասարման, որի ընդհանուր լուծումն է

$$2x = \pi n \Leftrightarrow x = \frac{\pi n}{2}$$

Դեն նետելով քառակուսի բարձրացման արդյունքում առաջացած ավելորդ լուծուները, կստանանք $x = 2\pi k$ և $x = \frac{\pi}{2} + 2\pi k$:


XV եղանակ: (1) հավասարումը կարելի լուծել նաև *գրաֆիկական եղանակով:*

ա) Նախ այն ներկայացնենք $\sin x = 1 - \cos x$ տեսքով, այնուհետև կառուցենք $y = \sin x$ և $y = 1 - \cos x$ ֆունկցիաների գրաֆիկները: Հարմար է դիմել համակարգչի օգնությանը: Գրաֆիկների հատման կետերի արգիսները կլինեն (1) հավասարման լուծումները (նկ.1):




Նկ. 1

բ) (1) հավասարումը կարելի ներկայացնել նաև $\cos x = 1 - \sin x$ տեսքով: Այս դեպքում պետք է կառուցել $y = \cos x$ և $y = 1 - \sin x$ ֆունկցիաների գրաֆիկները: Նորից գրաֆիկների հատման կետերի արգիսները կլինեն (1) հավասարման լուծումները (նկ.2):



Նկ. 2

զ) Հավասարումը գրաֆիկական եղանակով կարելի լուծել կառուցելով $y = \sin x + \cos x$ և $y = 1$ ֆունկցիաների գրաֆիկները: Գրաֆիկների հաստման կետերի արցիսները կլինեն (1) հավասարման լուծումները (նկ.3):



Նկ. 3

Նշենք, որ նկ.1-3 –ում պտկերված են առաջին վեց արմատները

Գրականություն

1. Колягин Ю.М., Луканкин Г.Л., Мокрушин Е.Л., Оганесян В.А., Пинчурин Л.Я., Саннинский В.Я. Методика преподавания математики в средней школе. Частные методики. М.: Просвещение, 1977.-480с.
2. Блох А.Я., Канин Е.С., Килина Н.Г., Копылов В.С., Крупич В.И., Лускина М.Г., Павленкова И.А., Семаков В.С., Столяр А.А., Терешин И.А.Черкасов Р.С., Чиканцева Н.И. Методика преподавания математики в средней школе. Общая методика. М.: Просвещение, 1985.-336с.
3. Գևորգյան Գ.Գ., Սահակյան Ա.Ա. Հանրահաշիվ և մաթեմատիկական անալիզ: Ավագ դպրոցի 10-րդ դասարանի դասագիրք (բնագիտական հոսքի համար).- Եր.: Տիգրան Մեծ, 2009.- 208 էջ:

Տվյալներ հեղինակների մասին.

Ալեքսանդր Սովսեսի Խաչատրյան, ֆ.մ.գ.դ., ԱրՊՀ մաթեմատիկայի ամբիոնի պրոֆեսոր
Հասցեն. ԱՀ, ք.Ստեփանակերտ, Մխիթար գոշի փող., 5
E-mail: alexkhach49@yandex.ru

Գուրգեն Սովսեսի Խաչատրյան, ֆ.մ.գ.թ., Շուշիի տեխնոլոգիական համալսարան
Հասցեն. ԱՀ, ք. Շուշի, Աշոտ Բեկորի փող., 4

Նորվաձը տպագրության է նրաշխարհում խմբագրական կոլեգիայի անդամ, ֆ.մ. գ.դ. Ա.Մ. Խաչատրյանը:

ՀՏԴ 378.14:51.24

Մաթեմատիկայի դասավանդման մեթոդիկա

**ԿՈՄՊԼԵՔՍ ԹՎԵՐ ԹԵՄԱՅԻ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ
ԸՆԹԱՅՔՈՒՄ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՄԵԹՈԴՆԵՐԻ
ԿԻՐԱՌՈՒՄԸ
Վ. Չ. Վարդանյան Ռ. Մ. Հարությունյան**

ՀՏԴ 378.148.53

Ֆիզիկա

**ԴԱՍԱԿԱՆ ԴԻՆԱՄԻԿԱՅԻ ՊԱՐԶ ԽՆԴՐԻ
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ
Այրերտ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ, Արսեն ԶԱՔԱՐՅԱՆ**

Բանալի բառեր՝ դրեյֆ, տատանումներ, սկզբնական ֆազ, ամպլիտուդ, միջին էներգիա, միջին արագություն, լիցք, զանգված, դիֆերենցիալ հավասարում:

Ключевые слова: дрейф, колебания, начальная фаза, амплитуда, средняя энергия, средняя скорость, заряд, масса, дифференциальное уравнение.

Key words: drift, oscillations, initial phase, amplitude, average energy, average speed, charge, mass, differential equation.

ОБ ОСОБЕННОСТИ ПРОСТОЙ ЗАДАЧИ КЛАССИЧЕСКОЙ ДИНАМИКИ

Ал.Алексанян, А.Захарян

Показано, что движение частицы под действием периодически изменяющейся силы в общем случае не представляет собой чисто колебательное движение, а может также совершать дрейф.

ON THE SINGULARITY OF A SIMPLE PROBLEM OF CLASSICAL DYNAMICS Al.

Aleksanyan, A.Zakaryan

It is shown that the motion of a particle under the action of a periodically varying force in the general case does not represent purely oscillatory motion, but also drift.

Դիտարկենք m զանգվածով լիցքավորված մասնիկի շարժումը համասեռ փոփոխական էլեկտրական դաշտում [1]

$$\vec{E} = \vec{i} E_x = \vec{i} E_0 \cos(\omega t + \alpha) \tag{1}$$

որտեղ ω ցիկլային հաճախությունն է, E_0 էլեկտրական դաշտի լարվածության վեկտորի ամպլիտուդը:

Լիցքավորված մասնիկի շարժման հավասարումը, այդ դեպքում կրնդունի հետևյալ տեսքը՝

$$\frac{d^2 x}{dt^2} = \frac{q}{m} E_0 \cos(\omega t + \alpha) \tag{2}$$

որտեղ q մասնիկի լիցքն է:

(2) հավասարման լուծումը ընտրում ենք հետևյալ տեսքով՝ [2]

$$x(t) = A \cos(\omega t + \alpha) + Bt + C \tag{3}$$

որտեղ A, B, C –ն հաստատուններ են, որոնք որոշվում են սկզբնական պայմաններից:

Համարում ենք, որ ժամանակի սկզբնական $t = 0$ պահին մասնիկը գտնվում էր դադարի վիճակում $x = 0$ կետում, այսինքն

$$x(t = 0) = 0, \quad \frac{dx}{dt}(t = 0) = 0 \tag{4}$$

Ընտրելով (2) հավասարման լուծումը (3) –ի տեսքով, սովորաբար ելնում են դրանից, որ եթե գործող ուժը կրում է տատանողական բնույթ, ապա արագացումներն էլ կունենան տատանողական բնույթ: Դիտարկվող դեպքում կփոփոխվի կոսինուսիդալ օրենքով, քանի որ արագացումը կրում է տատանողական բնույթ, ապա շարժումն էլ գոնե մասամբ կլինի տատանողական :

Ելնելով դրանից (3) հավասարման մեջ ներածվում է գումարելի, որը համեմատ է $\cos(\omega t + \alpha)$: Այն հնարավորությունը, որ մասնիկը կարող է ունենալ սկզբնական v_0 արագություն թելադրում է ավելացնել Bt գումարելին, որը հնարավորություն է տալիս հաշվի առնել ցանկացած արժեք ունեցող սկզբնական արագություն, նույն թվում $v_0 = 0$:

Դիֆերենցելով (3) -ը երկու անգամ գտնում ենք

$$\frac{d^2 x}{dt^2} = -\omega^2 A \cos(\omega t + \alpha) \tag{5}$$

Հետևաբար (3)-ը հանդիսանում է (2) հավասարման լուծումը, եթե իրագործվում է հետևյալ պայմանը

12. <http://www.indexfungorum.org/names/Names.asp>

Տեղեկություններ հեղինակների մասին

Գալյա Իշխանի Սարգսյան, Ակնադրյուրի միջնակարգ դպրոցի փոխտնօրեն, քիմիայի և կենսաբանության ուսուցչուհի,

galia.margaryan@mail.ru:

Կարինե Վալերիի Բալայան - Արցախի պետական համալսարան, կենսաբանության ամբիոն, կ.գ.թ., դոցենտ,

balayan-karine@mail.ru

Նոդվածը տպագրվում է ԱՏ կառավարության կողմից նրաշխարհագրված «SCS 15.10-003-Մշակովի բույսերի սնկային հիվանդությունների ուսումնասիրությունը Լեռնային Ղարաբաղի տարածքում» գիտական թեմայի շրջանակներում:

Հավելված



1



2



3



4

Տանձենու սնկային հիվանդություններով ախտահարված պտուղները

1 - սպիտակ բծավորություն, 2 – մոնիլիոզ, 3 - բորբոսանման փտում, 4 տանձենու քու:

ՀՏԴ 582.734
582.284

Բուսաբանություն
Մակաբանություն

ԽԱՂՈՂԻ ՎԱԶԻ ՄՆԿԱՅԻՆ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՌԻՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆ ԱՐՅԱԽՈՒՄ

Գ.Գ. ՄԱՐԳԱՐՅԱՆ, Կ.Վ. ԲԱԼԱՅԱՆ, Ս.Բ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

Բանալի բառեր – Արցախ, տեր-բույս, մակաբույժ սնկեր, սնկային հիվանդություն, ալրագող, ալտերնարիոզ, կարմրուկ, փտում, սնկատորիոզ, գերկոսպորիոզ, թառամում:

Ключевые слова: растение-хозяин, паразитные грибы, мучнистая роса, алтернариоз, краснуха, гниение, септориоз, церкоспориоз, увядание.

Key words: host plant, parasitic fungi, powdery mildew, alternaria, rubella, decay, Septoria, cercosporium, wilt.

ИССЛЕДОВАНИЕ ГРИБКОВЫХ ЗАБОЛЕВАНИЙ ВИНОГРАДНОЙ ЛОЗЫ В АРЦАХЕ

Г.Маргарян, К.Балаян, С.Петросян

Выявление видового состава паразитных грибов имеет важное значение в вопросе осуществления эффективной борьбы против них. В результате осуществленных в 2014-2017 гг в Арцахе исследовательских работ выявлены и идентифицированы 13 видов грибковых заболеваний, поражающих виноградную лозу (мучнистая роса, антракноз, септориоз, серая и монильная гниль, аскохитоз, увядание и т. д.)

Уточнены биологические закономерности развития указанных грибов, что даст возможность организовать эффективную борьбу против них как в данной вегетации, так и в последующие годы.

STUDY OF FUNGAL DISEASES OF GRAPEVINE IN ARTSAKH

G.Margaryan, K.Balayan, S.Petrosyan

The identification of species composition of parasitic fungi is of great importance for carrying out an effective fight against them. As a result of research carried out in 2014-2017 in Artsakh, 13 species of fungal diseases affecting the vine (powdery mildew, anthracnose, septoria, gray and monilial decay, ascochitis, wilting, etc.) were revealed and identified.

The biological regularities of the development of these fungi have been specified, which will make it possible to organize an effective fight against them both in this growing season and in subsequent years.

Մակաբույժ սնկերի տեսակային կազմի բացահայտումը կարևոր նշանակություն ունի դրանց դեմ արդյունավետ պայքար իրականացնելու հարցում: 2014-2017թթ. Արցախում իրականացված հետազոտական աշխատանքների արդյունքում հայտնաբերվել և նույնականացվել են խաղողի վազն ախտահարող 13 տեսակի սնկային հիվանդություն /ալրագող, անտրակնոզ, սնկատորիոզ, մոխրագույն և մոնիլային փտում, ասկոխիտոզ, թառամում և այլն/:

Պարզաբանվել են նշված սնկերի զարգացման կենսաբանական առանձնահատկությունները, ինչը հնարավորություն կտա կազմակերպել դրանց դեմ արդյունավետ պայքարն ինչպես տվյալ վեգետացիայում, այնպես էլ հետագա տարիներին:

Մսկերի աշխարհում միկրոմիցոտներն իրենց կենսաբանական առանձնահատկություններով յուրահատուկ խումբ են կազմում: Այս սնկերի ուսումնասիրությունը խիստ անհրաժեշտ է, քանի որ, լինելով մակաբույժներ, հեշտությամբ վարակում են բազմաթիվ վայրի և մշակովի բույսերի՝ նվազեցնելով դրանց բերքատվությունը, դեղագործական և գեղագարդիչ նշանակությունը, սննդային որակը, կերային, արտադրական ու ապրանքային արժեքը [1]:

Արցախի բուսական աշխարհը և բնակլիմայական պայմանները բարենպաստ են մակաբույժ մի շարք սնկերի զարգացման համար, այդ պատճառով անհրաժեշտություն առաջացավ ուսումնասիրել նշված տարածաշրջանի մշակովի բույսերը՝ այդ թվում թփերն ախտահարող սնկային հիվանդությունները:

Հոդվածում ներկայացվում են խաղողի վազի վրա մակաբուծող, Արցախում հայտնաբերված, սնկային հիվանդությունների վերաբերյալ տեղեկություններ: Նկարագրվող տեր-բույսն ընկալունակ է տարատեսակ հիվանդությունների՝ այդ թվում սնկային հիվանդությունների նկատմամբ, որոնց արագ տարածումը և ինտենսիվ զարգացումը հանգեցնում է բերքի մասնակի կորստի, իսկ առողջ պտուղների

և բարձր բերքի ապահովման նպատակով խիստ կարևորվում է ժամանակին սնկային հիվանդությունների տարածման ու զարգացման կանխումը [2]:

2014-2017թթ. Արցախում իրականացված հետազոտական աշխատանքների արդյունքում հայտնաբերվել և իդենտիֆիկացվել է նկարագրվող տեր-բույսերն ախտահարող 14 տեսակի սնկային հիվանդություն, որոնք նույնականացվել են մակրոսկոպիկ և միկրոսկոպիկ մեթոդների, ինչպես նաև որոշիչների կիրառմամբ, իսկ դրանց անվանումները համապատասխանեցվել են ժամանակակից կարգաբանությանը [3-8]:

Մակաբույծ սնկերի տեսակային կազմի բացահայտումը որոշիչ նշանակություն ունի դրանց դեմ արդյունավետ պայքար իրականացնելու հարցում:

1.Օիդիում կամ իսկական ալրացող -*Erysiphe necator* Schwein, Erysiphaceae:

Օիդիումը կամ իսկական ալրացողն ախտահարում է խաղողի վազի բոլոր օրգանները բույսի վեգետացիայի տարբեր փուլերում: Սուսկը սնկամարմնի տեսքով ձևնում է խաղողի վազի կեղևների ճեղքներում և բողբոջներում: Վաղ և տաք գարնանը օիդիումը կարող է արտահայտվել նոր աճող շիվերի վրա բորբոսանման փառ առաջացնելով, իսկ մեղմ կլիմայի դեպքում հիվանդությունը դրսևորվում է հիմնականում տերևների և ողկույզների վրա՝ առանձին բծերի առաջացմամբ: Պաթոգենի ակտիվության համար բարենպաստ միջավայր է 25 C⁰-ի և բարձր խոնավության առկայությունը: Նման պայմաններում սնկի սպորակրությունը առաջանում է տերևների զույգ մակերեսներին, որը խտանում և ստանում է վառ գունավորում: *Erysiphe necator* Schwein-ը պահպանվում է բույսերի վրա ողջ վեգետացիոն շրջանում և անընդհատ առաջացնում է սպորներ, որոնք կարող են կարճ ժամկետում աճել և զարգացնել վարակի նոր օջախներ: Աշնանամուտին սնկամարմինն աճում և նմանվում է թաղիթի: Ախտահարված տերևները դեղնում են, ծածկվում մոխրագույն փառով և ոլորվում: Հիվանդ մատղաշ ողկույզները և ծաղկաբույլերը չորանում են: Վարակված պտուղները լրիվությամբ չեն ձևավորվում կամ ձևավորվելուց չեն հասունանում: Պտուղների մաշկը կարծրանում է: Եթե հիվանդությունը զարգանում է պտուղների հյութալցման փուլում, այդ դեպքում պտղաթաղանթները և պտղամիսը ճարճքում ու սերմիկները բացվում են: Մնկի ինտենսիվ զարգացման ժամանակ խաղողի թփերից կարող է զգացվել նեխած ձկան հոտ: Վերջինս նկարագրվող սնկի բնութագրիչ հատկանիշ է: Հիվանդության զարգացմանը նպաստում է տաք գարունը և մեղմ ձմեռը: Ի տարբերություն կեղծ ալրացողի՝ տևական անձրևները ճնշում են օիդիումի տարածումը: Խոնավ և անձրևային պայմաններում վարակված պտուղները կարող են արագ ոչնչանալ՝ միաժամանակ ախտահարվելով նաև այլ սնկային հիվանդություններով: Նշված սնկով ախտահարված ողկույզների վրա հատկապես արագ կարող է զարգանալ *Botrytis cinerea* սուսկը:

2.Միդիո, պերոնոսպորոզ կամ կեղծ ալրացող - *Plasmopara viticola* (Berk. & M.A. Curtis) Berl. & De Toni նկ, Peronosporaceae:

Նկարագրվող սնկով ախտահարվում են խաղողի վազի տերևները, տերևակոթունները, շիվերը, ծաղկաբույլերը և պտուղները: Կեղծ ալրացողը կամ խաղողի պերոնոսպորոզը լայնորեն տարածված և վնասաբեր սնկատեսակ է: Հիվանդության հարուցիչը *Plasmopara viticola* (Berk. & M.A. Curtis) Berl. & De Toni սուսկն է, որը մակաբույծում է տեր-բույսի առողջ հյուսվածքներում: Հիվանդությունն արտահայտվում է հիմնականում սպիտակ և մոխրագույն թավշենման փառի գոյացմամբ, որը համարվում է սնկի սպորակրությունը: Սպորները և զոոսպորաները ձվաձև են, անգույն: Կոնիդիումները ձևավորվում են ճյուղավորված կոնիդիակիրների վրա /զոոսպորանգիակիրներ/: Մնկի սպորները ձևնում են թափված տերևների վրա կամ հողում և հեշտությամբ դիմանում են սառնամանիքին ու բարձր ջերմաստիճանի առկայությանը:

Գարնանը սպորները ծլում են 10 C⁰-ի դեպքում և քամու կամ ցողի միջոցով տեղակայվում տերևների հակառակ մակերեսներին: Տեր-բույսի մեկ վեգետացիոն շրջանում սուսկը կարող է տալ մոտ 20 սերունդ: Պաթոգենի ինտենսիվ զարգացումը հանգեցնում է խաղողի վազի մասնակի կամ լրիվ ոչնչացման: Հիվանդությունն արտահայտվում է բազմաթիվ դեղին բծերի ի հայտ գալով: Խոնավ եղանակային պայմաններում սնկի ինտենսիվ զարգացման հետևանքով տերևների հակառակ մակերեսները պատվում են բորբոսանման փառով: Վերջինս չոր եղանակային պայմաններում չի դիտվում: Եթե խաղողի վազը կայուն է *Plasmopara viticola* (Berk. & M.A. Curtis) Berl. & De Toni սնկի նկատմամբ կամ ունի բարձր դիմադրողականություն՝ հիվանդության ախտանշանները կդրսևորվեն թեթև: Նման դեպքում առաջանում են փոքր և արագ չորացող բծեր, որի պատճառով տերևների եզրային մակերեսները չորանում են և ստանում յուղանման փայլ: Հիվանդությունը շիվերի վրա դրսևորվում է երկարավուն, սկզբում դեղնավուն, այնուհետև՝ գորշ բծերի առաջացմամբ: Հետագայում դրանք նույնպես ծածկվում են բորբոսանման փառով: Հատկապես ինտենսիվ են ախտահարվում շիվերի գագաթային հատվածները: Այնուհետև վարակվում են ծաղկաբույլերը, ապա պտղակոթունի

տակ ձևավորվում են կապտամոխրագույն սեղմված բծեր: Ավելի ուշ վարակված պտուղները կնճռոտվում են, գորշանում և թափվում:

Վարակը հանգեցնում է բերքի կորստի և ողկույզների արտաքին տեսքի փոփոխության: Միայն համակարգային կանխարգելիչ միջոցառումների կիրառումը հնարավորություն կտա խուսափելու նկարագրվող սնկի տարածումից:

Պտուղների հավաքի և տեղափոխման ընթացքում վարակի զարգացումը չի շարունակվում:

3.Խաղողի անտրակնոզ – *Elsinou ampelina* Shear, *Elsinoaceae*:

Այս հիվանդությամբ վարակվում են խաղողի վազի բոլոր կանաչ օրգանները՝ տերևները, տերևակոթերը, շիվերը և պտուղները: Մնկի սպորակրությունն առաջանում է էպիդերմիսի տակ տեղակայված կոնիդիումների վրա: Սունկը ձևնում է ախտահարված շիվերի, մումիֆիկացված պտուղների վրա և կարող է պահպանվել մինչև 5 տարի: 24-30 C⁰-ի և հաճախակի տեղացող անձրևային պայմաններում սնկի ինկուբացիոն շրջանը տևում է 3-4 օր, իսկ չոր եղանակային պայմաններում սնկի սպորները կաշում են տեր-բույսի վրա առկա կոշտուկներին և չեն ծլում: Բավարար խոնավության առկայության դեպքում այդ օջախում լորձուները փրվում է և ջրի կաթիլի կամ ջրային հոսքի հետ տեղափոխվում տեր-բույսի տարբեր հատվածների կամ այլ բույսերի վրա: Վարակը տեղի է ունենում վեգետացիայի ողջ ընթացքում և շարունակվում մինչև պտուղների հասունացումը: Հիվանդությունը տարածված է ամենուրեք, հատկապես արագ է տարածվում տեղատարափ անձրևների և կարկուտի հետևանքով առաջացած մելխանիկական վնասվածքների առկայության ժամանակ: Հարուցիչի զարգացման համար ջերմաստիճանային տատանման սահմանը լայն է 2-30 C⁰: Մեկ վեգետացիայի շրջանում կարող է տալ մինչև 30 սերունդ: Գարնանն ախտահարվում են մատղաշ տերևները և շիվերը: Տերևների վրա ի հայտ են գալիս գորշ բծեր 1-5 մմ տրամագծով՝ շրջապատված դարչնասևագույն եզրագծով, երբեմն անկյունաձև եզրաշերտով: Վարակված հատվածները հաճախ բազմաբանակ են, կարող են լինել միախառնված կամ մեկական գատված: Բծերի կենտրոնական մասը չորանում է, ստանում սպիտակամոխրագույն գունավորում: Չորացած հատվածները հաճախ պոկվում են տերևներին տալով ծակոտկենություն: Մատղաշ տերևները հիվանդության նկատմամբ ավելի ընկալունակ են: Բծերը կարող են ծածկել տերևների ամբողջ մակերեսը, բայց հաճախ տեղակայվում են ջղերի երկայնությամբ: Վարակված տերևների ջղերի երկայնքով նեկրոտիկ օջախների առաջացումը խախտում է տերևների նորմալ զարգացումը, ինչը հանգեցնում է դրանց ձևափոխման կամ չորացման: Միաժամանակ մատղաշ տերևներով շիվերի ծայրերը ստանում են վառված տեսք: Խաղողի վազի կանաչ և երիտասարդ ընձյուղներն ավելի ընկալունակ են անտրակնոզի հարուցիչի նկատմամբ: Գարնանը վարակը կարող է սկսվել նույնիսկ առաջին տերևը բացվելուց հետո և տարածվել ընձյուղների վրա: Ախտահարված օջախներում առաջանում են կլորավուն սեղմված բծեր, որոնք սկզբում մանուշակագույն են, այնուհետև դառնում են մուգ կարմրավուն ու գորշանում են՝ ստանալով սրճագույն գունավորում, իսկ վերջում բծերն օվալաձև են, մոխրագույն կամ վարդագույն, եզրագծված մանուշակագույն շերտով: Ծիվերի վարակված հյուսվածքների վրա առաջանում է կեղևային շերտի երկարավուն բացվածքներ, որոնք կարող են հասնել մինչև միջուկը: Առաջացած վերքերը խոցեր են հիշեցնում: Ընձյուղները դառնում են փխրուն և հեշտությամբ կոտրվում են: Անտրակնոզի հետևանքով առաջացած խոցերը կամ բծերը չպետք է շփոթել կարկուտից առաջացած մելխանիկական վնասվածքների հետ: Հիվանդության հետևանքով առաջացած վերքերի եզրաշերտերը ցցված են վեր և ունեն բնորոշ սև գունավորում: Խաղողի ողկույզները մինչև ծաղկումը, պտղակալումը և պտուղների հասունացումը նույնպես ընկալունակ են նկարագրվող սնկի նկատմամբ: Վարակված ծաղկաբույլերը լրիվությամբ չորանում են: Ողկույզի որևէ հատվածում նեկրոտիկ օջախ առաջանալու դեպքում դրա ստորին հատվածը թառամում է: Ախտահարված պտուղների մեծ մասը չի հասունանում և ոչնչանում է: Անտրակնոզով վարակված պտուղների վրա առաջանում են հաճախ կլորավուն, երբեմն անկյունաձև սեղմված գորշ կամ մոխրագույն բծեր՝ նեղ և մուգ գունավորության եզրագծով: Բծերի կենտրոնական հատվածը նախ ունենում է մանուշակագույն գունավորում, որն աստիճանաբար ստանում է թավշենման տեսք: Այդ բծերը պտուղների վրա հիշեցնում են թռչունի աչքի, այդտեղից է ստացել նկարագրվող սնկի երկրորդ պայմանական անվանումը՝ «թռչնի աչք»: Ախտահարված պտուղները ճաքճում և բացվում են: Անտրակնոզով հիվանդ պտուղների վրա տաք և խոնավ պայմաններում առաջանում է հեշտությամբ պոկվող վարդագույն կամ նարնջագույն երանգով փառ:

Նշված հիվանդությունից խուսափելու համար խաղողի վազերի առաջին մշակումը պետք է կատարել, երբ շիվերն աճում են 5-10 սմ, որից հետո անհրաժեշտ է իրականացնել համալիր մշակում՝ օգտագործելով մի շարք ֆունգիցիդներ /ռիդոմիլ, արգերիդ, ակրոբադ, սկոր/: Անտրակնոզի դեմ պայքարը հրատապ խնդիր է դառնում կարկուտից անմիջապես հետո:

4.Մոխրագույն փտում – *Botrytis cinerea* Pers., *Sclerotiniaceae*:

Նկարագրվող սունկն ախտահարում է խաղողի ողկույզները: Հիվանդության վաղ դրսևորման պատճառ կարող են հանդիսանալ վնասատուները և կարկուտը, որից հետո ողկույզում հատիկներն ամբողջությամբ ծածկվում են մոխրագույն բորբոսանման կամ թավշն փոշիացող փառով՝ սպորակրությամբ, ու չորանում են:

Հասուն ողկույզների վրա սունկը զարգանում է տևական անձրևներից հետո առաջացած պտուղների մեխանիկական վնասվածքների ի հայտ գալուց հետո: Սկզբում սպորակրությունն առաջանում է ճաքերի և վնասվածքների շուրջը: Պտղահատիկների միջուկը թառամում է, սնկի կողմից արտադրվող ցիտագա ֆերմենտի ազդեցությունից ցելյուլոզային թաղանթը պոկվում է և պտուղները լորձուներտվում են: Վարակված պտուղները ստանում են թթվային համ և բորբոսի անդուր հոտ: Ախտահարված պտուղների տեղափոխման և պահպանման ժամանակ մոխրագույն փտումը հեշտությամբ կարող է վարակել այլ պտուղ բանջարեղենների: Նոր վարակի օջախներ կարող են առաջանալ անմիջական շփման կամ օդում ցրված սպորների միջոցով: Որքան բարձր է օդի խոնավությունը և ջերմաստիճանը, այնքան արագ է ընթանում սնկի զարգացումը: Հատկապես փտանգավոր է պտուղների քրտնեցումը, որը կարող է առաջանալ ջերմաստիճանային պայմանների կտրուկ տատանումներից և շատ հաճախ տեղի է ունենում բերքի տեղափոխման, ինչպես նաև իրացման ժամանակ: Նման դեպքերում առաջացած ջրի նույնիսկ փոքր կաթիլները նպաստում են սնկի վարակի նոր օջախների ի հայտ գալուն և արագ զարգացմանը:

Սնկի զարգացումը ճնշվում է չոր եղանակային պայմաններում: Այդ ժամանակ սնկի միցելիումը չի թափանցում ողկույզները և մնում է հատիկների թաղանթներին: Պտուղների մակերեսներին վարակի սկզբնական փուլում առաջանում են կապտամանուշակագույն կետեր, որոնք հետագայում չափերով մեծանում և ընդգրկում են ողջ հատիկները: Պտուղների մաշկը գորշանում է, պտուղները ստանում են չամիչանման տեսք և քաղցրանում են: *Botrytis cinerea Pers.* սնկի զարգացումը երաշտի ժամանակ հանգեցնում է բերքի զգալի կորստի: Մոխրագույն փտման նման դրսևորումն ավելի հազվադեպ է լինում և դրսևորվում է երաշտի ժամանակ: Նկարագրվող սնկի ախտահարման երկու ձևերն Արցախում իդենտիֆիկացվել են /չոր և խոնավ եղանակային պայմաններում/:

Նկարագրվող սնկի դեմ պայքարի ժողովրդական մեթոդ է խաղողի վազերը յոդի լուծույթով ցողումը: Համապատասխան լուծույթը ստանալու համար մեկ դույլ ջրին անհրաժեշտ է ավելացնել 40-50 կաթիլ յոդ, մինչև լուծույթը դեղնավուն տեսք կստանա, այնուհետև այդ լուծույթով լավ ցողել խաղողի վազերի կանաչ զանգվածները: Այդ գործողությունը կատարել տաս օրը մեկ կամ տեղումներից հետո:

5.Սպիտակ փտում - *Pilidiella diplodiella* (Speg.) Crous & Van Niekerk, Schizoparmaceae:

Նկարագրվող սնկով ախտահարված խաղողի վազի ողկույզները ստանում են գորշ, կարմրագորշ կամ կապտագորշավուն գունավորում կախված սորտից: Հիվանդ պտղահատիկները կնճռտվում են, նրանց մակերեսներին ձևավորվում են բազմաթիվ գունատ սպիտակ, թմբիկավոր սպորակրություն: Սպորները գտնվում են պիկնիդներում, միաբջիջ են, օվալաձև, բաց դեղնականաչավուն, որոշների մոտ պիկնիդների փոխարեն ձևավորվում են երկարավուն, կարմրամանուշակագույն սկլերոցիումներ: Սպիտակ փտումի վարակը սկսում է զարգանալ մինչև պտուղների հասունացումը: Սնկի զարգացման համար բարենպաստ պայման է երաշտը կամ արևային այրվածքները: Վարակի ախտահարման կտրուկ արտահայտված օջախներ են դիտվում կարկուտից վնասված ողկույզների մոտ, որից մի քանի օր հետո պտուղների վրա սկզբում առաջանում են դեղին, այնուհետև կապտագորշագույն բծեր, վերջիններս շրջապատված են տարբեր գույների բծերով: Բարենպաստ պայմանների առկայության դեպքում սնկի զարգացման վեցերորդ օրն ախտահարված օջախներում զարգանում են պիկնիդները: Սունկը հեշտությամբ տարածվում է ամբողջ ողկույզով, որը կարող է հանգեցնել վերջինիս չորացմանը:

6.Սև փտում – *Phyllosticta ampellicida* (Engelm.) Aa, Phyllostictaceae:

Phyllosticta ampellicida (Engelm.) Aa սունկն ախտահարում է տեր-բույսի տերևները և ողկույզները՝ նեկրոզի ենթարկելով էպիդերմիսի տակ գտնվող հյուսվածքները:

Հիվանդության առաջին նշանները նկատվում են մայիս-հունիս ամիսներին: Վարակված տերևների վրա առաջանում են չոր, նեկրոտիկ, կլորավուն, 2-10 մմ տրամագծով բծեր, որոնք կաթնագույն են կամ բաց գորշավուն՝ համեմատաբար մուգ եզրագծով: Բծերի կենտրոնում ձևավորվում են հարուցիչի պիկնիդները, որոնք սև կետիկների տեսքով են: Երբեմն հիվանդ տերևների վրա առաջանում է փառ, որը հիշեցնում է իսկական ալրացող: Հիվանդության նկատմամբ առավել ընկալունակ և զգայուն են մատղաշ տերևները:

Նկարագրվող սնկով ախտահարվում են նաև տեր-բույսի երիտասարդ շիվերը, որոնց վրա դիտվում է 3-20 մմ երկարության սև գունավորությամբ նեկրոտիկ օջախներ: Ժամանակի ընթացքում

դրանք մեծանում են և հիվանդ օջախի կենտրոնական մասում կեղևը բացվում է: Հիվանդությունը կարող է արտահայտվել նաև պտուղների վրա, որոնց ախտահարումը սկսվում է հիմնականում մինչև հասունացումը: Վարակի նախնական փուլում չհասունացած պտուղները ստանում են սպիտակ կամ մոխրագույն երանգ: Ի տարբերություն օիդիումի՝ սև փտման ժամանակ հիվանդ պտուղների վրա առաջացած փառը /սնկամարմինը/ խիտ է, թաղիքավոր, մոխրագույն երանգով, և նույնիսկ հիվանդության ինտենսիվ արտահայտվածության ժամանակ պտուղների ճաքճքումներ չեն դիտվում: Մսկի դրսևորման ախտանշանները հիմնականում կախված են տեր-բույսի սորտերից և միջավայրի պայմաններից: Բարձր խոնավության պայմաններում դիտվում է պտուղների թաց փտում: Չոր և տաք եղանակային պայմաններում պտղահատիկները չորանում են և կնճռտվում: Կարճ ժամանակահատվածում դրանք մոմիֆիկացվում են, ստանում կապտասևավուն գունավորում: Հատիկների մակերեսային թաղանթները պատվում են բազմաթիվ պիկնիդներով, իսկ պտղամիսը գորշանում է և լցվում սնկի հիֆերով: Սպորները պիկնիդներում ձվաձև են կամ գնդաձև, անգույն են:

Մսկի վարակը կարող է տարածվել 2-3 օրում: Սկզբում ախտահարվում են առանձին հատիկներ կամ ողկույզներ, այնուհետև վարակն արագ տարածվում է:

Սև փտման բնորոշ առանձնահատկությունն այն է, որ ախտահարված պտղահատիկները երկար ժամանակ մնում են ողկույզին կապած: *Phyllosticta ampellicida* (Engelm.) Aa սնկի զանգվածային վարակ հիմնականում դիտվում է պտուղների հասունացման ժամանակ:

Նկարագրվող տունկը կարող է ձևերով բուսական մնացորդների վրա պերիտեցիումի /տելիոմորֆ ձև/ կամ պիկնիդների /անամորֆ ձև/ տեսքով: Առաջնային վարակ կարող է առաջանալ պերիտեցիումներից դուրս թռած ասկոսպորաներից: Երկրորդային վարակն առաջանում է ձմեռած պիկնիդներից ազատված պիկնոսպորաներով: Վերջիններս տարածվում են անձրևի կաթիլների և քամու օգնությամբ: Պիկնոսպորաների աճման համար անհրաժեշտ է ջրի կաթիլի առկայություն և բավարար ջերմություն /25-27 C° /:

Խորհուրդ է տրվում խաղողի վազերը նկարագրվող սնկի ախտահարումից զերծ պահելու համար մինչև բողբոջների բացվելը հակասնկային պատրաստուկների կիրառմամբ կատարել վաղ մշակում:

7. Կարմրուկ-Pseudopezicula tracheiphila (Moll.-Thurg.) Korf & W.Y. Zhuang, Helotiaceae:

Ախտահարվում են տերևները, ընձյուղները և պտուղները: Հիվանդությունն ի հայտ է գալիս մայիս-հունիս ամիսներին: Այն կարող է ախտահարված տերևներում երկար ժամանակ մնալ թաքնված վիճակում և բարենպաստ պայմանների առկայության դեպքում կտրուկ զարգանալ: Հիվանդության նկատմամբ առավել ընկալունակ են մատղաշ տերևները: Վարակի ներթափանցումից 2-4 շաբաթ անց հարուցիչի սնկամարմինը թափանցում է տեր-բույսի հյուսվածքային համակարգ և խաթարում կենսագործունեության պրոցեսները: Դժվարանում է հողից անհրաժեշտ սննդանյութերի յուրացումը և հիվանդ բույսի մոտ դիտվում է սննդանյութերի քաղց: Կարմիր սորտերի մոտ հիվանդ տերևները ստանում են մուգ կարմիր գունավորում՝ կանաչադեղնավուն եզրագծով, սպիտակ սորտերի մոտ՝ դարչնագույն գունավորում՝ եզրագծված նեղ դեղնամեղրագույն շերտով: Վարակի նախնական փուլում հիվանդության որոշումը, կապված մի շաբթ հանգամանքների հետ, դժվարանում է: Բանի որ տեր-բույսի տերևները նման գունավորվածություն կարող են ստանալ հողում որոշ քիմիական տարրերի անբավարարության կամ ավելցուկի արդյունքում /կալիումի և ֆոսֆորի պակաս, ֆտոր պարունակող պարարտանյութերի ավելցուկ/: Ախտահարված տերևները չորանում և ժամանակից շուտ թափվում են, և տեր-բույսը մինչև ծաղկումը մերկանում է: Նկարագրվող հիվանդությունն առավել մեծ վնաս է հասցնում, եթե այն զարգանում է մինչև ծաղկման շրջանը կամ ծաղկման փուլում, իսկ ավելի ուշ՝ վեգետացիայի փուլի ավարտին կարմրուկի տարածումը բերքի նշանակալի կորուստ չի առաջացնում: Կարմրուկով ախտահարվում են նաև ընձյուղները, որի հետևանքով դրանց աճը նկատելի թուլանում է: Հիվանդության զարգացման համար նպաստավոր պայմաններ են համարվում բարձր խոնավությունը և բարեխառն ջերմաստիճանը /16-23C°/:

Pseudopezicula tracheiphila (M.Soll.-Thurg.) Korf & W.Y. Zhuang տունկը ձևերում է թափված տերևների և տերևակոթոնների վրա սնկամարմնի ու ապոտեցիումի ձևով: Հիվանդության նախնական վարակի աղբյուր են համարվում ասկոսպորաները, որոնք հասունանում են զարնանը՝ մինչև խաղողի վազի ծաղկումը: Կոնիդիալ սպորակրությունը համարվում է հիվանդության երկրորդային վարակի աղբյուր, որը զարգանում է խաղողի վազի վեգետացիայի փուլում:

Խորհուրդ է տրվում պայքարի միջոցառումներն սկսել 2-րդ և 3-րդ տերևների ի հայտ գալուց սկսած և շարունակել մինչև վազի ծաղկումը: Անհրաժեշտ է կատարել տերևների երկկողմ մշակում՝ հակասնկային պրեպարատներով, քանի որ սնկի աճման հիֆերը հյուսվածքներ են թափանցում տերևների ստորին և վերին մակերեսներով:

8. Խաղողի կանաչ բորբոս - Penicillium expansum Link, Trichocomaceae:

Նկարագրվող սնկի վարակը տարածվում է ողկույզների հասունացման շրջանում հիմնականում տաք և անձրևային պայմաններում: Այստեղից հիվանդություններով և այլ վնասատուներով վարակված կամ մեխանիկական վնասվածքներով խաղողի վազերը: Մահացող բջիջների մակերեսներին սկզբում առաջանում է սպիտակ փառ, որն իրենից ներկայացնում է սնկամարմինը: Այն պատում է ամբողջ ողկույզը, այնուհետև փոխվում է երկնագույն, կանաչավուն կամ դեղնականաչավուն սպորակրոյան: Սպորներն անգույն են, գնդաձև կամ էլիպսոիդալ: Դասավորված են շղթաներով:

Հիվանդ պտուղներին բնորոշ է բորբոսային հոտը և թթվաչափ համը: *Penicillium expansum* Link սնկի վարակը շարունակվում է նաև բերքի պահպանման կետերում և զգալի վնաս է հասցնում՝ ախտահարելով հարակից ողկույզները:

9. Խաղողի վազի թառամում-*Vercillium albo-atrum* Reinke & Berthold, *Plectosphaerellaceae*:

Խաղողի վազի թառամում հիվանդությունը զարգանում է շոգ եղանակային պայմաններում խաղողի որթերի տնկումից 2-3 տարի հետո: Մինչ այդ՝ հիվանդությունը զարգանում է առանց ախտանշանների: Հարուցիչը թափանցում է բույսերի հյուսվածքներ վնասվածքների կամ արմատամազիկների միջոցով /վարակը տեր-բույսին անցնում է հողից/: Հիվանդության ընթացքին բնորոշ է ընձյուղների արագ թառամումը և խաղողի վազի չորացումը: Վարակի թույլ արտահայտվածության դեպքում տեր-բույսի տերևներն աստիճանաբար դեղնում են, գորշանում և մասնակի կամ ամբողջությամբ թափվում: Միայն ընձյուղները փայտանում են ոչ հավասար ավելցուկային խոնավություն ունեցող հողում: Հարուցիչը կարող է պահպանվել տեր-բույսի մահացած օրգաններում և նպաստավոր պայմանների առկայության դեպքում ախտահարել կենսագործունեությամբ թույլ վազերին: Վարակված բույսերի մոտ բնափայտի և կեղևի միջև առաջանում են սնկի սպիտակ թելեր, հաճախ դրանք սպիտակ զանգվածով ծածկում են բույսի ողջ արմատային համակարգը: Հիվանդ թփերի աճը դանդաղում է, չեն պտղակալում, իսկ տեր-բույսի ստորին հատվածում տերևները դեղնում են: Չոր պայմաններում սնկի աճը ճնշվում է, և զարգացման ինտենսիվությունը կրկին դիտվում է խոնավության առկայության դեպքում: Նման դեպքերում ախտահարված բույսը 2-3 տարուց հետո մահանում է: Նկարագրվող սնկի զարգացումն ինտենսիվ է ընթանում, եթե խաղողի արմատային համակարգն արդեն հիվանդ է սնկային կամ այլ հիվանդություններով:

Նկարագրվող սնկային հիվանդության դեմ պայքարելու համար անհրաժեշտ է բացառել խաղողի այգիների հիմնադրումն այն վայրերում, որտեղ նախկինում հիմնված էր խաղողի այգիներ: Հարկ է հավաքել և ոչնչացնել հասուն ու գերհասուն թփերի արմատները և բնափայտը, ինչպես նաև հիվանդ բույսերը: Այլ սնկային հիվանդությունների դեմ պայքարի միջոցառումների կիրառումը համարվում է միաժամանակյա պայքար նկարագրվող սնկի նկատմամբ:

11. Մեպտորիոզ կամ մելանոզ - *Septoria melanosa* Elenkin, *Mycosphaerellaceae*:

Խաղողի վազի սեպտորիոզը հազվադեպ հանդիպող և քիչ վնասաբեր հիվանդություն է: Սունկը կարելի է հանդիպել ամռան կեսերին հասուն տերևների վրա: Հիմնականում ախտահարվում են ստորին տերևները: Սկզբում ի հայտ են գալիս փոքր, բաց դարչնագույն կամ գորշ բծերի տեսքով, ավելի ուշ դրանք մզանում և ստանում են սև գունավորում: Բծերի չափերը տատանվում է մինչև 0.5-3 մմ: Խոնավ պայմաններում ախտահարված տերևների բծերի հակառակ մակերեսներին կարող են նկատվել բորբոսաձև մանր աղվամազիկներ: Աշնանամուտին բծերը կարող են միախառնվել: Դրանց շրջապատող հյուսվածքները դեղնում են: Տերևները չորանում են ծայրերից և կարող է տեղի ունենալ ժամանակից շուտ տերևաթափ, կամ չորացած տերևները երկար ժամանակ կարող են մնալ թփի վրա: *Septoria melanosa* Elenkin սունկը խաղողի վազի այլ օրգանների վրա չի հանդիպել: Նկարագրվող սնկի սնկամարմինն ունի նուրբ և թափանցիկ հիֆեր: Վերջիններս ունեն միջնորմով մեկը մյուսից նկատելիորեն հեռացած մանր հատիկավոր պրոտոպլազմա: Այդ պատճառով հյուսվածքների ներսում դրանց տեսանելիությունը նվազում է: Սնկի միցելիումը տեղակայված է միջբջջային տարածություններում և գրեթե երբեք չեն թափանցում բջիջների մեջ: Խոշորացույցով նայելու դեպքում տերևների գույգ մակերեսներին կարելի է տեսնել բազմաթիվ փոքր, սև փքված ուռած կետիկներ, որոնք համարվում են սնկի պիկնիդները՝ ծածկված էպիդերմիսով: Պիկնիդներն ունեն բավական լայն արտազատիչ բացվածք, որից դուրս են գալիս երկար և նեղ սպորները: Վերջիններս ունեն մի քանի միջնորմ: Սպորների ծյուրը տեղի է ունենում ջրի առկայությամբ 18-30 C⁰ ջերմաստիճանի դեպքում: Սնկի հարուցիչը ձմեռում է բուսական մնացորդների վրա և զարնանը կրկին պիկնիդներում ձևավորվում են սպորները: *Septoria melanosa* Elenkin սունկը չի կարելի համարել խիստ վնասաբեր, այն ամենամյա դրսևորման դեպքում միայն կարող է ազդել խաղողի վազի կենսագործունեության վրա ու ճնշել թփի նորմալ աճը և զարգացումը:

Նկարագրվող սնկի դեմ պայքարի մեթոդներից է ֆունգիցիդների կիրառումը, որոնք կիրառելի են նաև այլ սնկային հիվանդությունների դեմ:

12. Յնկոսպորիոզ - Pseudocercospora vitis (Lev.) Spieg., Mycosphaerellaceae: Նկարագրվող սունկն ախտահարում է խաղողի վազի տերևները, ընձյուղները, ողկույզները և պտղահատիկները: Այն ձմեռում է հողի մակերեսին մնացած բուսական մնացորդների վրա: Սնկի սպորները ծլում են վեգետացիայի սկզբում: Չարգացման համար բարենպաստ պայման է 30-32 C⁰, զարգացման մինիմալ ջերմաստիճանը 15 C⁰, իսկ 40 C⁰-ի դեպքում սնկի զարգացումը դադարում է: Ախտահարված տերևների ստորին մակերեսներին առաջանում է դեղնականաչավուն փառ, այնուհետև առաջանում են բծեր և արդյունքում տերևները չորանում են: Վարակված տերևները կարող են ժամանակից շուտ թափվել: Բծերը կարող են առաջանալ նաև կանաչ պտուղների վրա, այդպիսի պտուղները պնդանում են և հիմքում ստանում են կապույտ գունավորում, կնճռտվում ու թափվում են: Վարակը տարածվում է թույլ կամ գերհասուն թփերի վրա: Հիվանդության տարածումից խուսափելու համար անհրաժեշտ է թույլ կենսագործունեությամբ հասուն կամ գերհասուն խաղողի վազերը հեռացնել և ոչնչացնել: Հարկ է ժամանակին կատարել ագրոտեխնիկական բոլոր միջոցառումները՝ գույակցելով ֆունգիցիդների կիրառման հետ:

13. Ալտերնարիոզ կամ դեղնականաչավուն բծավորություն- Alternaria vitis Cavara, Pleosporaceae: Այս սունկն առաջացնում է բծավորություն և նեկրոտիկ օջախներ տերևների, ընձյուղների և պտղահատիկների վրա: Հիմնականում ախտահարում է թույլ կենսագործունեությամբ խաղողի վազերին: Հիվանդության զարգացմանը նպաստում են շոգ և խոնավ պայմանները: Տարեց տարի հիվանդությունը տարածվելով մեծացնում է վնասաբերության չափը: Ախտահարված տերևները և ընձյուղները ծածկվում են բաց արծաթագույն բծերով, որը կարող է շփոթմունք առաջացնել օդոփումի ախտանշանների հետ: Աստիճանաբար բծերը ստանում են սև գունավորում և չորանում: Նկարագրվող սնկի սնկամարմինը և սպորները հայտնաբերվել են զարնանը երիտասարդ ընձյուղների ախտահարված բողբոջների ու ծաղկակոթունների վրա: Ալտերնարիոզով վարակված հասուն պտուղները դառնում են մետաղափայլ: Այնուհետև պտղահատիկների մակերեսներին զարգանում է մուգ գորշավուն սնկամարմին: Ախտահարված պտուղները կնճռտվում են և ստանում տհաճ համ: Ալտերնարիոզը խաղողի երկարատև պահպանման համար համարվում է վտանգավոր հիվանդություն:

Հարուցիչը ձմեռում է ախտահարված տեր-բույսի կեղևում միցելիումի և կոնիդիումների տեսքով: Միկրոսկոպիկորդիումների և կոնիդիումի տեսքով այն կարող է ձմեռել հողում ու բուսական մնացորդներում, այդպիսով տեր-բույսի մեծաքանակ մնացորդների առկայությունը և սնկի սապրոտրոֆ կենսակերպը նպաստում է վարակի աղբյուրի մշտական կուտակմանը:

Հարուցիչի դեմ պայքարի միջոցառումներն անհրաժեշտ է սկսել զարնանը ֆունգիցիդների համակարգային կիրառմամբ՝ պահպանելով պարբերականությունը:

Այսպիսով՝ չորսամյա հետազոտությունների ընթացքում հայտնաբերվել և պարզաբանվել է խաղողի վազի վրա իդենտիֆիկացված մակաբույծ սնկերի զարգացման կենսաբանական առանձնահատկությունները, արտաքին գործոնների ազդեցությունը դրանց վրա, տեր-բույսերի ընկալունակությունը հիվանդածին սնկերի նկատմամբ և հարմարվածությունն Արցախի բնակլիմայական պայմաններին:

Հարկ է նշել, որ խաղողի վազի աճնցման, որակյալ ու բարձր բերք ստանալու, ինչպես նաև նկարագրված սնկային հիվանդությունների դեմ պայքարելու համար անհրաժեշտ է ոչ միայն մշակել ու բազմացնել վազերը, այլ նաև հատուկ խնամք իրականացնել, որն անպայման պետք է գույակցվի ագրոտեխնիկական, կենսաբանական և քիմիական պայքարի մեթոդների կիրառմամբ:

Մակաբույծ սնկերի տեսակային կազմի բացահայտումը կարևոր և որոշիչ նշանակություն ունի դրանց դեմ արդյունավետ պայքար իրականացնելու հարցում: 2014-2017թթ. Արցախում իրականացված հետազոտական աշխատանքների արդյունքում հայտնաբերվել ու իդենտիֆիկացվել են խաղողն ախտահարող 13 տեսակի սնկային հիվանդություն /ալրացող, անտրակնոզ, սնպտորիոզ, ժանգատունկ, մոխրագույն և մոնիլային փտում, ասկոխիտոզ, թառամում և այլն/:

Պարզաբանվել են նշված սնկերի զարգացման կենսաբանական առանձնահատկությունները, տեր-բույսերի ընկալունակությունը հիվանդածին սնկերի նկատմամբ և հարմարվածությունն Արցախի բնակլիմայական պայմաններին:

Հայտնաբերված սնկերի զարգացման առանձնահատկությունների պարզաբանումը հնարավորություն կտա կազմակերպելու դրանց դեմ արդյունավետ պայքարն ինչպես տվյալ վեգետացիայում, այնպես էլ հետագա տարիներին:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Աբրահամյան Ջ.Ն., Նանագյուլյան Ս.Գ., Ամիրյան Ա.Ա. Ֆիտոպաթոլոգիա, Երևան. - 2004. - 58 էջ:
2. Ա. Նիկոյան, Գ. Խաչատրյան, Ա. Ալեքյան, Ա. Հովսեփյան և ուրիշներ, Հայաստանի հանրապետությունում օգտագործման համար թույլատրված բույսերի պաշտպանության քիմիական և կենսաբանական միջոցների տեղեկատու, 2015թ., 469 էջ
3. Козарь И.М. Болезни и вредители винограда. Меры борьбы., Издательство: Научный центр им. Таирова Год: 2005. Страниц: 64
4. Тетеревникова-Бабаян, Дарья Николаевна, Оидиум виноградной лозы / Проф. Д. Н. Тетеревникова-Бабаян ; Акад. наук Арм. ССР. Ин-т виноделия и виноградарства. - Ереван : Изд-во Акад. наук Арм. ССР, 1951. - 141 с., Оидиум виноградного куста - Арм. ССР, С 214/376
5. Методы экспериментальной микологии: Справочник / Н.А. Дудка, С.П. Вассер, И.А. Элланская и др.: Под ред. В.И. Билай. - Киев: Наук. Думка. - 1982. - 550 с.
6. [Н.М. Коваль](#), [Е.С. Комарова](#) Настольная книга виноградаря, Рипол Классик, – 2013, 320 с
7. Рахимова Е.В., Нам Г.А., Еремкова Б.Д. Краткий иллюстрированный определитель мучнисторосяных грибов Казахстана и приграничных территорий, -2014г, -Новосибирск, -129с.
8. <http://www.indexfungorum.org/names/Names.asp>

Տեղեկություններ հեղինակների մասին՝

1. Կարինն Վալերիի Բալայան կ.գ.թ., դոցենտ, կենսաբանության ամբիոնի դասախոս
2. Գայանն Գևորգիի Մարգարյան կ.գ.թ., դոցենտ ԱրՊՀ գիտաբարտուղար, կենսաբանության ամբիոնի դասախոս
3. Սաթենիկ Բարիսի Պետրոսյան, մագիստրոս:
gayanegeorgevna1981@mail.ru - 097290525
balayan-karine@mail.ru - 097207108

Հողվածը տպագրվում է ԱՀ կառավարության կողմից ֆինանսավորվող Արցախի գիտական կենտրոնի հետ համատեղ իրականացվող «SCS 15.10-003-Մշակովի բույսերի սնկային հիվանդությունների ուսումնասիրությունը Լեռնային Ղարաբաղի տարածքում» գիտական թեմայի շրջանակներում:

Հետազոտությունն իրականացվել է ԱՀ ԿԳՍ նախարարության կողմից տրամադրվող ֆինանսական աջակցության շնորհիվ՝ №SCS 15.10-003-«Մշակովի բույսերի սնկային հիվանդությունների ուսումնասիրությունը Լեռնային Ղարաբաղի տարածքում» գիտական թեմայի շրջանակներում:

ՀՏԴ 37.01(573)

Կենսաբանություն դասավանդման մեթոդիկա

ՈՒՍՈՒՑՉԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ՍՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ**ԿԵՆՍԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԴԱՍԵՐԻՆ****Վարդուհի ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

Բանալի բառեր՝ մանկավարժական մեթոդներ, պատմել, ցուցադրություն, լաբորատոր աշխատանք, էքսկուրսիա, ՏՀՏ միջոցներ, գրավիչ մուտք, պրոբլեմային իրավիճակ, գրավիչ ելք, ցուցադրական աշխատանք, ուսումնական ճամփորդություն:

Ключевые слова: педагогические методы, пересказ, выставка, лабораторная работа, экскурсия, инструменты ИКТ, привлекательный вход, проблемные ситуации, привлекательный выход, демонстрационная работа, ознакомительная поездка.

Keywords: pedagogical methods, retelling, exhibition, laboratory work, excursion, ICT tools, attractive entrance, problematic situations, attractive exit, demonstrative work, study tour.

Творческий подход учителя к урокам биологии**В. Оганесян**

В статье говорится о различных педагогических методах, используемых в преподавании биологии в средних учебных заведениях. Методы являются инструментами и средствами информирования, посредством которых учитель влияет на сознание и чувства учащихся информацией, способствуя формированию их мировоззрения. Творческий подход дает учителю возможность эффективно организовывать урок и обучать учеников мыслить, рассуждать и самостоятельно делать выводы.

TEACHER'S CREATIVE APPROACHES TO BIOLOGY CLASSES**V. Hovhannisyán**

The article includes various methods and tools used in teaching biology in secondary education institutions, which are tools and means of communicating knowledge, and through which the instructor influences the students' awareness and senses by providing them with new information, promoting their outlook. At the same time it gives the teacher an opportunity to organize the lesson in a scientific way, and the students to think independently, to judge and make final conclusions.

Հոդվածում տեղ են գտել հանրակրթական ուսումնական հաստատություններում կենսաբանության առարկայի ուսուցման ժամանակ կիրառվող տարաբնույթ մեթոդներն ու հնարները, որոնց օգնությամբ ուսուցիչը, ներգործելով սովորողների գիտակցության ու զգացմունքների վրա՝ նոր տեղեկություններ է հաղորդում, նպաստում աշակերտների աշխարհայացքի ձևավորմանը: Ուսուցման նկատմամբ ցուցաբերված ստեղծագործական մոտեցումը ուսուցչին հնարավորություն է տալիս արդյունավետորեն կազմակերպելու դասը, իսկ սովորողներին՝ ինքնուրույն մտածելու, դատելու, եզրահանգումներ կատարելու:

Ուսուցչի ստեղծագործական մոտեցումները կենսաբանության դասերին

<< Առանց խորապես իմանալու այն գիտությունը , որը դասավանդում է ուսուցիչը, չկա մանկավարժական կուլտուրա >>:

Վ.Ա. Սուխոմլինսկի

Հանրակրթական ուսումնական հաստատություններում կենսաբանության առարկայի ուսուցման ժամանակ կիրառվող տարաբնույթ մեթոդներն ու հնարները այն միջոցներն են, որոնց օգնությամբ ուսուցիչը, ներգործելով սովորողների գիտակցության ու զգացմունքների վրա՝ նոր տեղեկություններ է հաղորդում, նպաստում աշխարհայացքի ձևավորմանը: Այդ մեթոդներն ուսուցչին հնարավորություն են տալիս գիտականորեն կազմակերպելու դասը, իսկ սովորողներին՝ ինքնուրույն մտածելու, դատելու, վերջնական եզրահանգումներ կատարելու: Մանկավարժական գիտությունների դոկտոր՝ Մ. Ա. Սկրտչյանն այն տեսակետն է հայտնում, որ դաս-դասարանային համակարգը այլևս չի բավարարում հասարակության պահանջները, և որ ժամանակն է այն փոխարինելու ուսուցման կոլեկտիվ ձևով [1]: Մեկ այլ դիտարկում էլ ներկայացված է մասնագիտությամբ ֆիզիկոս,

Ֆիզիկամաթեմատիկական գիտությունների թեկնածու Ս. Բ. Գալոյանի աշխատության մեջ, ըստ որի առաջարկվում է կրթության հիմքում ստեղծել մարդ-բնության մասին գիտա-փիլիսոփայական գիտելիքների համակարգ, որը ուղենիշ կհանդիսանա ուսուցման և դաստիարակության գործընթացների կազմակերպման համար [3]: Յուրաքանչյուր գործնական պարապմունքի ժամանակ ուսուցիչը մեկտեղում է սովորողների դաստիարակությունն ու կրթությունը, ընտրում է ուսուցման այնպիսի մեթոդ, երբ անպայման հաշվի են առնվում սովորողների տարիքային առանձնահատկությունները, ընտրված նյութի դաստիարակչական բովանդակությունը, ինչպես նաև դասարանի պատրաստվածության աստիճանն ու մակարդակը:

Կախված ուսուցանվող թեմաներից ու նրանում շոշափվող հարցերի բնույթից՝ ուսուցիչը պետք է հաշվի առնի նաև դասարանի դիդակտիկ կահավորանքի հնարավորությունները:

Կենսաբանության գործնական պարապմունքների ժամանակ ուսուցչի կողմից կիրառվող մեթոդներն են.

1. Պատմելու կամ խոսքային
2. Ցուցադրական
3. Լաբորատոր-գործնական պարապմունքների
4. Էքսկուրսիայի:

Գաղտնիք չէ, որ պատմելը, բացատրելը գիտելիքներ հաղորդելու ձևերից մեկն է, որի ընթացքում ուսուցիչը սովորողների ուշադրությանն է ներկայացնում նյութի հիմնական բովանդակությունը: Գործնական պարապմունքների ժամանակ պատմելու մեթոդը կիրառվում է հատկապես այն ժամանակ, երբ անհրաժեշտ է խնդիրների, առաջադրանքների, անվտանգության տեխնիկայի կանոնների հետ առնչվող հարցերի, գիտության նվաճումների մասին տեղեկություններ հաղորդել:

Շատ հաճախ գործնական պարապմունքների ժամանակ պահանջ է զգացվում կիրառելու բացատրելու մեթոդը, հատկապես, երբ այն ուղեկցվում է որևէ նյութի ցուցադրմամբ՝ փորձ, մակետներ, պաստառներ, գծապատկերներ, մանրադիտակային ուսումնասիրության համար նախատեսված պատրաստուկներ և այլն: Առավել հետաքրքիր է գրույցի ձևը, որի հիմքում ուսուցչի ու աշակերտի երկխոսությունն է: Զրույցի մեթոդի առավելությունն այն է, որ սովորողներին հանարավորություն է տալիս պարզել ու իմաստավորել աշխատանքային տարբեր գործողություններ կատարելու ձևերը և ստացած գիտելիքները գործնական աշխատանքներում կիրառելու ուղիները: Գործնական պարապմունքների ժամանակ տարաբովանդակ գրույցների անցկացման մեթոդիկային գումարվում են նաև ցուցադրությունները:

Չննական մեթոդի կիրառումը ուսուցման կարևորագույն միջոցներից է, քանզի առանց կենդանի օրինակների ցուցադրման ոչ կարելի է ճիշտ սովորեցնել, ոչ էլ հաջողությամբ սովորեցնել: Այստեղ մեկ անգամ ևս տեղին է հիշել հայտնի ասացվածքը.

<<Պատմիր ինձ, և ես կմոռանամ:

Ցույց տուր ինձ, և ես կհիշեմ:

Ներգրավիր ինձ, և ես կհասկանամ>>:

Հմուտ ուսուցիչը, աշակերտներին ներգրավելով ակտիվ ուսուցման պրոցեսում, հասնում է նրան, որ բանավեճի, համագործակցության, ընդհանուր քննարկումների արդյունքում ակտիվանում է սովորողների մտածողությունն ու եզրահանգումներ կատարելու կարողությունը: Այս մեթոդի ընտրության դեպքում ցուցադրվում է առարկան, բնական օբեկտը՝ կենդանի, նրա խրտվիլակը, կմախքը, հերբարիումը, մանրադիտակային ուսումնասիրության համար նախատեսված թաց կամ չոր պատրաստուկը: Կենսաբանության գործնական պարապմունքների ժամանակ կիրառվում են նաև զննական պարագաների նմուշների ցուցադրություններ՝ պաստառներ, գծապատկերներ, աղյուսակներ, սխեմաներ, որոնք սովորողներին պատկերացում են տալիս ուսումնասիրվող օբեկտների ձևի, կառուցվածքի, գույնի, մեծության, կենսակերպի մասին: Մեթոդի առավելություններից է այն, որ ուսուցչի բացատրություններն ուղեկցվում են ցուցադրություններով, որի դեպքում ուսումնասիրվող նյութն էլ ավելի տեսանելի է դառնում: Սի խոսքով. <<Պետք է եղածին չափ քիչ ուսուցանել, և կարելի եղածին չափ շատ գտնել տալ>> (Հ.Սպենսերի):

Ժամանակակից դասին ներկայացվող պահանջների մեջ կարևոր է առանձնացնել ՏՀՏ-ի միջոցների՝ համացանցի ռեսուրսային հնարավորությունների լայն կիրառությունը դասի արդյունավետության ապահովման գործում: Ուսուցման բարդ ու հետաքրքիր պրոցեսում որքան բազմազան լինեն զգալարանների վրա ներգործող գործոնները, այնքան սովորողները հեշտությամբ կընկալեն ու կյուրացնեն մատուցվող նյութը:

Այսօր կենսաբանության ուսուցիչը, զինված լինելով մանկավարժական ու մեթոդական նորագույն գիտելիքներով, ձեռքի տակ ունի այն բոլոր հնարավորությունների բազան, որից օգտվելով կարելի է կազմակերպել գեղեցիկ ու գրավիչ դասեր: Օգտվելով տարբեր օժանդակ նյութերից՝ ուսուցչին հնարավորություն է տրվում դասը դարձնելու ցանկալի ու հետաքրքիր, հատկապես, երբ խոսքը վերաբերվում է խթանման փուլում դասի գրավիչ մուտքի ապահովմանը:

Դասի սկզբում, կիրառելով գրավիչ մուտքի մեթոդը, ուսուցիչը նպաստում է երեխաների տրամադրությունների ստեղծմանը՝ նրանց տալով մտածելու, կռահելու և ստեղծագործելու հնարավորություններ:

Այսպես, <<Վերարտադրողական համակարգ>> թեմայի ուսուցման ընթացքում նպատակահարմար է գործնականում կիրառել աշակերտակենտրոն ուսուցման սկզբունքը, երբ դասը վարում են 9-րդ դասարանցիները և իրենց գիտելիքներն են փոխանցում 8-րդ դասարանցիներին: Դասի հենց սկզբում, ստեղծելով պրոբլեմային իրավիճակ, ուսուցիչն աշակերտների ուշադրությանն է արժանացնում ԿԳՄ նախարարության կողմից դպրոցին հասցեագրված ենթադրյալ նամակը, որում իբր առաջարկվում է քննարկել և համապատասխան առաջարկություն ներկայացնել հետևյալ հարցի վերաբերյալ. 8-րդ դասարանի կենսաբանության դասագրքերից հանել <<Վերարտադրողական համակարգ>> թեման: Ահա այս հարցի կապակցությամբ առաջարկվում է քննարկել և հիմնավոր ձևով պատասխանել ԿԳՄ նախարարությունից իբր ստացված նամակին:

Գեղեցիկ պլանավորած դասը պիտի ունենա ինչպես գրավիչ մուտք, այնպես էլ՝ գրավիչ ավարտ, ուստի դասի կշռադատման փուլում ուսուցիչն անդրադառնում է խթանման փուլում առաջ քաշած խնդրին: Նա կազմակերպում է նամակի պատասխանի մշակման աշխատանքը, որն իբր պետք է ներկայացվի ԿԳՄ նախարարություն:

Նոր՝ <<Ոսկուց էլ թանկ՝ ջուրը...>> նյութի հաղորդման ժամանակ սովորողների ուշադրությունը կենտրոնացնելու նպատակով նույնպես անհրաժեշտ է ապահովել գրավիչ մուտք: Ջրերի լեզուն յուրացրած գիտնականը մի առիթով ասել է, որ եթե իրեն հնարավորություն ընձեռվեր կազմակերպելու մի փոքրիկ արտադրություն, ապա մարդկանց ուշադրությանը կարժանացներ սեղանի վրայի ջրով լցված 4 սրվակների պարունակությունը: Նրանցից յուրաքանչյուրն ունի իր ազդեցությունների մեխանիզմը օրգանիզմի վրա: Այս մուտքը լսելուց հետո լռություն է տիրում դասարանում, բոլորը խոհուն ու հարցական հայացքներով հետևում են ուսուցչին: Դասի կշռադատման փուլում ուսուցիչն անդրադառնում է խթանման փուլում վեր հանած խնդրին՝ հարցնելով.

- Ինչու՞ է գիտնականն առանձնացրել այս 4 սրվակներով ջրերը և ո՞րն է դրանց գորությունը:

Այնուհետև ուսուցիչը ներկայացնում է անոթներում պարունակվող ջրերն՝ ըստ հետևյալ հաջորդականության.

1-ին անոթում պարունակվող ջուրը հանված է 100 մ խորությունից, սառեցված-հալեցված ջուր է, ու եթե մարդն ամեն օր հնարավորություն ունենա սովորական ջրի փոխարեն խմելու այսպիսի ջուր, ապա նրա կյանքը կերկարի 1,5 անգամ:

2-րդ անոթում արծաթաջուր է, որն ունի ուժեղ մանրէասպան հատկություն:

Նրա ազդեցության արդյունքում բարձրանում է օրգանիզմի դիմադրողականությունը, ճնշվում են մակաբույծ սնկերը և վիրուսները, բարելավվում է աղիների միկրոֆլորան:

3-րդ անոթում օրհնված ջուր է: Տեսակետ կա, որ աղոթքի ժամանակ արտաբերված հնչյունների տատանման հաճախականությունը համընկնում է էլեկտրամագնիսական դաշտի տատանումների հաճախականությանը: Այսպիսի ջուրը բուժում է ոչ միայն մարմինը, այլև հոգին:

4-րդ սրվակին հասնելով շեշտվում է, որ անվանի գիտնականը երեխաների մասին էլ է մտածել, և այդ առումով հատկանշական է ջրի այս տեսակը:

Այնուհետև ուսուցիչը սրվակի պարունակությունը ֆիլտրում և ֆլտրը պահում աշակերտների տեսադաշտում, որի վրա նկատվում են կեղտաբծեր՝ մուր, այլ նյութերի հետքեր: Դրանից հետո պարզաբանվում է, որ այս ջուրը հավաքվել է ձյան հալոցքի արդյունքում և կիրառելի չէ: Ուրեմն, ձյուն ուտել չի կարելի, քանի որ ունի օդից վերցրած շատ վտանգավոր նյութեր /նկատվում է դասարանի աշխուժացում/:

Իրազնական-ցուցադրական մեթոդի կիրառության արդյունքում սովորողների հիշողության մեջ արմատավորվում են առարկաներն ու երևույթները: Լաբորատոր-գործնական պարապմունքների ընթացքում կատարվում է սովորողների տեսական գիտելիքների ստուգում և գնահատում: Արդյունքում ամրապնդվում է նյութը, զարգանում սովորողների աշխատանքային ունակություններն ու հմտությունները: Այստեղ հարկ է մեկ անգամ ևս նշել այն հանգամանքը, որ ուսուցիչը դասի

Ժամանակ որևէ փորձ իրականացնելուց առաջ պարտավոր է այն կատարել նախապես՝ համոզվելու իսկության մեջ: Լինում են դեպքեր, երբ դասի ժամանակ կատարվող փորձը չի տալիս անհրաժեշտ արդյունքը կամ արդյունքը լինում է ոչ այնքան գոհացնող՝ կապված ինչ-ինչ պատճառների հետ: Ուստի նախապես իրականացրած նախապատրաստական բնույթի աշխատանքները ուսուցչին հնարավորություն են տալիս ճիշտ ժամանակին վերացնելու փորձի հետ առնչվող բոլոր անճշտությունները:

Գասարանում ուսուցչի կողմից իրականացվող փորձերը կազմակերպվում են ցուցադրական խմբային եղանակով և կարող են լինել կարճ կամ տևական ընթացքի մեջ: Կարճ փորձերի օրինակ են՝ սերմերի ծլման անհրաժեշտ պայմանները, տերևներում ածխաջրերի առաջացման կամ տերևի կողմից ջրի գոլորշիացման պրոցեսները, բույսի սերմերում հանքային աղերի ու ջրի պարունակությանը վերաբերվող փորձերը՝ բուսաբանության բաժնից: Կարճատև փորձեր են իրականացվում նաև կենդանաբանության, մարդ-անատոմիայի բաժինների ուսումնասիրության ժամանակ՝ կապված բջջի, բակտերիաների կառուցվածքի նկարագրության, կենդանիների և նրանց օրգան-համակարգերի կառուցվածքային առանձնահատկությունների, տեղադրության, զգայական օրգանների նշանակության, ոսկրերի կառուցվածքի, բաղադրության ու կատարած գործառույթների շուրջ:

Տևական փորձերը դրվում են բորբոսասնկերի, բակտերիաների, միաբջիջ կենդանիների, տարբեր կուլտուրաների աճեցման, հյուսվածքների պատրաստուկների պատրաստման, կենդանիների և բույսերի խաչասերման, ռեֆլեքսների հետ կապված դիտումների, ինչպես նաև տարբեր էկոլոգիական գործոնների՝ օրգանիզմների վրա ունեցած ազդեցությունների ուսումնասիրման ժամանակ:

Մարդ անատոմիայի դասագրքում տեղ գտած <<Լսողական վերլուծիչ>> կամ <<Մեր տեղեկատվական գործակալները>> թեմայի ուսուցման ժամանակ դասը ցանկալի է սկսել աշխարհահռչակ երաժիշտ Բեթհովենի նկարի ցուցադրությամբ: Ապա հաջորդում է կենսագրական որոշ մանրամասների նկարագրությունը, որն ուղեկցվում է կոմպոզիտորի հեղինակած <<9-րդ սիմֆոնիայով>>: Ներկայացվում է, որ այն ստեղծելիս Բեթհովենն այլևս չէր լսում լսում [2, էջ 49]: Որսալով աշակերտների զարմացկոտ հայացքները՝ պարզաբանվում է, որ Բեթհովենին այդպես էլ բախտ չվիճակվեց լսելու իր հրաշալի ստեղծագործությունը՝ սիմֆոնիկ նվագախմբի կատարմամբ, և լսում էր միայն այն ժամանակ, երբ անձամբ էր կատարում դաշնամուրի վրա: Այստեղ է, որ նախապատվությունը տրվում է ոչ թե խոսքին, այլ փորձին, քանի որ ոչ մի կանոն ու խոսք այդպես չի կարող սովորեցնել երեխային, որքան փորձն ու ցուցադրությունը: Ընտրելով սովորողներից մեկին, ցուցադրվում է, թե ինչպես է իրականում լսել խուլ երաժիշտը: Փորձի համար օգտագործվում է կամերտոն: Աշակերտին հանձնարարվում է կոմպոզիտորի սուր մասը պահել կտրիչ ատամներով, իսկ հակառակ կողմը մոտեցնել կամերտոնի ոտիկին: Թևիկներին հարվածելիս փորձարկվող աշակերտը լսում է ձայնը, սակայն մնացած երեխաները չեն լսում: Փորձն ասում է, որ բացի ձայնային հաղորդականությունից կա նաև ոսկրային հաղորդականություն, որի շնորհիվ աշակերտը լսել է ձայնը: Նույն կերպ Բեթհովենն իր դիրիժորական փայտիկի ծայրը պահել է կտրիչ ատամներով, իսկ մյուս ծայրը հպել դաշնամուրի ստեղծերին և այդպես լսել: Ահա թե որն է խուլ կոմպոզիտորի ստեղծագործելու գաղտնիքը [2, էջ 49]:

Կենսաբանության դասերի արդյունավետության գործում անգնահատելի դերակատարում ունի էքսկուրսիան, որի միջոցով սովորողները մոտիկից ծանոթանում հայրենի բնությանը, անմիջական շփման մեջ գտնվում կենդանի օրգանիզմների հետ: Ծանաչողական բնույթի ցանկացած էքսկուրսիա միայն ու միայն ամրապնդում է սովորողների գիտելիքների պաշարը, ընդլայնում նրանց մտահորիզոնը:

Ծանաչողական էքսկուրսիաները կամ, ինչպես շատ հաճախ ասում են՝ ուսումնական ճամփորդությունները, որպես ուսումնական նախագծեր, կարևոր դեր են կատարում սովորողների աշխարհայացքի ձևավորման համար: Ոչ ֆորմալ կրթության այս ձևը նպաստում է նոր փոխհարաբերությունների, նոր գիտելիքների և կարողությունների ձևավորմանը: Սովորողը դարձնում է հորիզոնական հանդիպում է տվյալ բնագավառի լավագույն մասնագետներին, լսում նրանց խոսքը, որը նպաստում է նաև մասնագիտական կողմնորոշմանը:

Նախօրոք քննարկվում է տվյալ ճամփորդության նպատակը, խնդիրները և այլ կազմակերպչական հարցեր: Սովորողները համացանցից նյութեր են հայթայթում՝

պատրաստվելով ճամփորդությանը:
Շատ կարևոր է, որ սովորողը ընկալի տվյալ ճամփորդության կատարությունը և այն չդիտի որպես հերթական ժամանց, այլ նյութը յուրացնի գործնական կիրառման մեջ, հասկանա ստացած գիտելիքի նշանակությունը:

Առհասարակ, սինանթրոպների էկոլոգիան և ակտիվությունը ուսումնասիրելիս հաճախ անհրաժեշտություն է առաջանում ֆիքսելի և հաստատել կենդանու առկայությունը որևէ վայրում: Հենց այս նպատակով են մեր աշխատանքներում օգտագործվել 5 լուսորսիչները, որոնք տեղադրվել են նախապես ընտրված տներում, դրանց նկուղներում և հարակից այգիներում: Սարքերը հիմնականում աշխատել են շուրջօրյա ռեժիմով: Կրծողների փոքր չափսերից ելնելով՝ սարքերը տեղադրվել են գետնին կամ կախվել են ծառերից՝ ցածր բարձրության վրա:

Այս մեթոդն ունի մի շարք առավելություններ: տեսանյութերը, որոնք ստացվում են անմիջականորեն բնրիմուտքերի և տարատեսակ շինությունների տարածքում, թույլ են տալիս նկարագրել սինանտրոպ կենդանիների վարքագծային որոշ առանձնահատկությունները: Հարկ է նշել, որ չնայած թվացյալ պարզությանը, լուսորսիչի տեղադրման ժամանակ պետք է հաշվի առնել մի շարք նրբություններ, որոնք կապված են կոնկրետ կենդանու չափերի և տեղաշարժման առանձնահատկությունների, տվյալ տեղանքում մարդու և ընտանի կենդանիների մշտական ներկայության հետ:

Արդյունքների ամփոփում: Դաշտային աշխատանքների, թվային սարքերից ստացված կադրերի և դրանց համակարգչային մշակման արդյունքում ստացվել են գոհացուցիչ արդյունքներ: Ստացվել են բազմաթիվ լուսանկարներ, մի քանի տեսանյութ, ինչպես նաև ֆիքսվել են կենդանիների մի քանի օրինակներ՝ սինանտրոպների տեսակային կազմը ճշգրտելու նպատակով: Մոխրագույն առնետից (RattusNorvegicus) և տնային մկնիկից (Mus Musculus) գատ նկարագրվել են անտառաակների (Apodemus) և մոխրագույն դաշտամկների (Microtus) ներկայացուցիչներ: Դրանցից ամենամեծաքանակը, ամենատարածվածն ու ամենահաճախ հանդիպող տեսակներն են անտառային մուկը (ApodemusUralensis) և սովորական դաշտամուկը (Microtus Arvalis): Գիշատիչներից (Carnivora) բնակավայրերում հիմնականում նկատվել են քարակզաքիսը (Martesfoina) և արիսը (Mustelanivalis) [4]:

Վայոց Ձորի մարզում (նկ. 1, նկ. 2) հաջողվել է նկարահանել քարակզաքիսի (նկ. 3, նկ 4)՝ տան պարսպից ներսմտնելու պահը: Նույն գիշերը տանը նկատվել են նաև կրծողներ: Արարատի մարզում (նկ. 5) սարքերը ֆիքսել են մոխրագույն առնետի (նկ. 6) առկայությունը տներից մեկի նկուղում: Այս փաստը գիտական արժեք չէր ունենա, եթե չլիներ առնետի արտասովոր պահվածքը: Կենդանին չափազանց լավ էր հարմարված մարդու հետ համատեղ կյանքին: Մերկողմից կատարված փորձի արդյունքները որոշակի անհանգստության առիթ են հանդիսանում: Առնետին տրվել էր երկու տարբեր ձկան կտորներ, որոնցից մեկը թունավորված էր: Ինչպես երևում էր ստացված տեսանյութում, կենդանին սկզբից մոտենում է թունավորված խայծին, մի քանի վարկյան ուսումնասիրում է այն, ապա մոտենում է մյուս խայծին և, համոզվելով, որ այն թունավորված չէ, վերցնում է խայծը: Մյուսիքի մարզում ստացված տվյալները փոքրաքանակ են և համարժեք են Վայոց Ձորից ստացված տվյալների հետ:



Նկ.1.2. – Տուն Վայոց Ձորում, որի այգում հաջողվել է ֆիքսել քարակզաքիսին



Նկ. 3.4. - քարակզաքիսը (*Martes foina*)՝ տան բակ մտնելիս



Նկ.5. – Տնամերձ այգի Արարատի մարզում Նկ. 6. – Մոխ. առնետը (*Rattus norvegicus*) տան նկուղում

Մեր աշխատանքների ընթացքում ստացված արդյունքները զարմանալի չեն: Հայաստանի հարավային շրջաններն ավելի քիչ են բնակեցված, քան նրա կենտրոնական և հյուսիսային հատվածները: Բնությունն այստեղ առայժմ շատ չիտուժել մարդածին գործոններից, ինչի արդյունքում սինանտրոպ կրծողների և դրանց հետանդող գիշատիչների տեսակային կազմը ոչ այնքան մեծաքանակ ստացվեց: Մենք նաև եկանք այն եզրահանգման, որ դրանում իր ազդեցությունն ունեն նաև կլիմայական պայմանները:

Մոխրագույն առնետն ու տնային մուկը սպասելիորեն, ինչպես և մնացած բոլոր շրջաններում, տարածված են ամենուր: Ընդ որում, առնետները զբաղեցնում են քաղաքների բազմահարկ շենքերի աղբատարերն ու հարակից աղբամանները, իսկ մկները հիմնականում հանդիպում են տների նկուղներում և պահուստարաններում: Այգիներում բոլորից շատ հանդիպում են անտառային մկները (*Apodemus uralensis*): Հենց այս կրծողներին են ամենահաճախը հետապնդում գիշատիչ կենդանիները: Եւս մի հետաքրքիր երևույթ արձանագրվեց դաշտամկների մոտ: Սրանց հիմնական մասը, ինչպես պարզվեց, սեզոնային սինանտրոպներ են: Սրանք հաջողությամբ տարվա մեջ մի քանի անգամ փոխում են իրենց բնակության վայրերը և, օրինակ, ցորենի և այլ հացահատիկների հավաքի շրջանում բնակություն են հաստատում ամբարներում և դրանց հարող տարածքներում [7]:

Ստացված տվյալների հիման վրա կարելի է պնդել, որ մանր կաթնասունների սինանտրոպ պոպուլյացիաները հետզհետե ավելանում են և դառնում են ավելի մեծաքանակ: Դա օգնում է նրանց զոյատևել չափազանց արագ փոփոխվող շրջակա միջավայրում և հարմարվել նոր պայմաններին: Ճիշտ է, ավելի տաք, չոր և քիչ բնակեցված հարավային մարզերում այս երևույթը դեռ այնքան վառ արտահայտված չէ, ինչքան Հայաստանի հյուսիսային և կենտրոնական մարզերում:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Сидорчук Н.В. и др. – Опыт использования фотоловушек при изучении поведенческой экологии барсука *Melesmeles*//Териофауна России и сопредельных территорий: матер. VIII съезда Териологич. об-ва. М., 2007. – с. 455.
2. Эрнандес-Бланко и др. - Опыт применения цифровых фотоловушек для идентификации Амурских тигров, оценки их активности и использования основных маршрутов перемещений животными. // В кн.: «Амурский тигр в Северо-Восточной Азии: проблемы сохранения в XXI веке». 2010. Отв. Ред. Журавлев Ю.Н. Владивосток, Дальнаука: с. 100-103.
3. Н.В. Сидорчук, В.В. Рожнов - Дистанционные методы изучения барсуков: некоторые особенности использования фотоловушек//Дистанционные методы изучения в зоологии: матер. научн. конф. М.: Товарищество научных изданий КМК. 2011. с. 87.
4. Павлинов И. Я. 2006. Систематика современных млекопитающих. 2-е изд. — М.: Изд-во Моск. ун-та, 297 с.
5. Папян Л.Г., Гамбарян Г.Г. - Исследование поведения и активности мелких млекопитающих методом использования фотоловушек. Ломоносов-2015.
6. Папян Л.Г. - Формирование синантропизма в некоторых северных районах Армении на примере представителей отряда хищных млекопитающих. Вестник Российско-Армянского Университета, Серия: Физико-Математические и Естественные Науки, № 2. 2015. с. 91-94.
7. Папян Л.Г., А.М. Саргсян - Исследование синантропизма у некоторых представителей млекопитающих методом использования фотоловушек. Вестник Российско-Армянского Университета, Серия: Физико-Математические и Естественные Науки, № 2. 2016. с. 94-97.

Հոդվածը տպագրության է նրաշխարհում խմբագրական կոլեկիայի անդամ, կ.գ.դ. Վ. Տ. Հայրապետյանը:

ՆՏԴ.911.33

Տնտեսական աշխարհագրություն

**ՇՈՒԿԱՅԻ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ
ՉԱՐԳԱՑՄԱՆԸ ԽՈՉԸՆԴՈՏՈՂ ՄԻ ՔԱՆԻ ՊԱՏԿԵՐԱՑՈՒՄՆԵՐ
ԼՂՀ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՄԵՉ**

Անահիտ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Բանալի բառեր՝ Շուկայական ենթակառուցվածք, կոլեկտիվ տնտեսություն, սեփականաշնորհում, ագրարային, պարենային, ներքին շուկա, արտարին շուկա, ցածր մրցունակություն, փոքր արտադրողներ, ներդրումներ:

Ключевые слова - Рыночная инфраструктура, коллективное хозяйство, приватизация, аграрный, пищевой, внутренний рынок, внешний рынок, низкая конкурентоспособность, малые производители, вложения.

Keywords - Market infrastructure, collective farm, privatization, agrarian, food, domestic market, foreign market, low competitiveness, small producers, investments.

**НЕКОТОРЫЕ ФАКТОРЫ, ПРЕПЯТСТВУЮЩИЕ РАЗВИТИЮ СЕЛЬСКОГО ХОЗЯЙСТВА НКР
В РЫНОЧНЫХ УСЛОВИЯХ**

Анаит Григорян

В статье представлены факторы, препятствующие развитию сельского хозяйства Республики Арцах, анализ существующих недостатков и упущений. В сфере сельского хозяйства явной проблемой является небольшой размер и разрозненность хозяйств. Это мешает процессу использования новых технологий и навыков, что, в свою очередь, влияет на качество продукта, становится причиной низкой конкурентоспособности на рынке. Для решения этих проблем предлагается использовать международный опыт.

SOME IDEAS OF OBSTACLES IN DEVELOPMENT OF AGRICULTURE OF NKR IN MARKET CONDITIONS

Anahit Grigoryan

The factors interfering development of agriculture of the Artsakh Republic, the analysis of the existing shortcomings and omissions are presented in the article. The small size and separation of farms appears to be an obvious problem in the sphere of the rural economy. It interferes with the process of use of new technologies and skills that, in its turn, influences the quality of a product, becomes the reason of low competitiveness in the market. It is offered to make use of the international experience for the solution of these problems.

Նորվածում ներկայացված է Արցախի հանրապետության գյուղատնտեսության զարգացմանը խոչընդոտող գործոնների, առկա թերությունների և բացթողումների վերլուծությունը: Գյուղատնտեսական բնագավառում ակնհայտ խնդիրներից են համարվում տնտեսությունների փոքրությունն ու կտրտվածությունը: Այս հանգամանքը դժվարացնում է ագրոհամակարգում նոր տեխնոլոգիաների և հմտությունների օգտագործման գործընթացը, որն ազդում է ապրանքի որակին, պատճառ դառնում շուկայում գյուղատնտեսական արտադրանքի ցածր մրցունակությանը: Այս խնդիրների լուծման համար առաջարկվում է օգտագործել միջազգային փորձը:

Գյուղատնտեսության զարգացմանը խոչընդոտող և արգելափակող որոշ պատկերացումների մասին վերլուծության նպատակն է երևան հանել այն թերություններն ու բացթողումները, որոնք կնպաստեն առավել ճիշտ և արդյունավետ ուղիներ փնտրել շուկայական ենթակառուցվածքները զարգացնելու ու գյուղատնտեսական մթերքներ արտադրողների համար ավելի նպաստավոր պայմաններ ստեղծելու համար:

1991թ. «Գյուղացիական և գյուղատնտեսական կոլեկտիվ տնտեսությունների մասին» օրենքն ընդունելուց և հապճեպ սեփականաշնորհում իրականացնելուց հետո Արցախի իշխանավորների մոտ ձևավորվեց այն համոզմունքը, որ նոր բարեփոխումների ալիք կբարձրանա ագրարային ոլորտի կարգավորման գործընթացում: Սակայն քաղաքականություն մշակողները կամ չգիտեին ինչպես պետք է անել, կամ միամտաբար կարծում էին, որ շուկան կկարգավորի ամեն ինչ:

2016թ. տվյալներով Արցախում զբաղվածների մոտ 28.1%-ն ընդգրկված է գյուղատնտեսական արտադրության ոլորտում՝ ապահովվելով համախառն ներքին արդյունքի 13.2%-ը [7]:

Ագրարային ոլորտի զարգացման ռազմավարության հիմնական նպատակն է նպաստել հանրապետության գյուղատնտեսության կայուն զարգացմանը, պարենային ապահովության մակարդակի բարձրացմանը և գյուղական բնակչության եկամուտների ավելացմանը՝ գյուղատնտեսությունում տնտեսվարողների համար գործունեության բարենպաստ պայմանների ստեղծման միջոցով: Հիմնական նպատակից բխող ենթանպատակներից են գյուղմթերքի արտադրության ծավալների ավելացում և արտադրության եկամտաբերության բարձրացում, գյուղատնտեսական ներուժի արդյունավետ օգտագործում, սննդամթերքի անվտանգության հիմնախնդիրների լուծում, գյուղական բնակչության կենսամակարդակի բարձրացում, գյուղատնտեսության հարկային և վարկային համակարգի բարելավում:

Հարկ է նշել, որ վերջին տարիներին բավականին աճ է գրանցվել առաջին անհրաժեշտության մի շարք պարենամթերքների արտադրության բնագավառում: Այսպես՝ Արցախի հանրապետության ազգային վիճակագրական ծառայության տվյալների վերլուծությունը ցույց է տալիս հետևյալը՝ 2016թ. տվյալներով հանրապետությունում արտադրվող վերը նշված ապրանքների արտադրությունը բավարարում է բնակչության ներքին պահանջարկի մեծ մասը (կաթ՝ 95,5%-ը, ձու՝ 84.6%-ը, թռչնամիս՝ 78,3%-ը, տավարի միս՝ 82,5 %-ը, խոզի միս՝ 73,3 %-ը, ոչխարի միս՝ 100 %-ը, ձուկ՝ 3 %-ը): [6]: Վերջիններս վկայում են առաջին անհրաժեշտության պարենամթերքի ներմուծումը որոշակի հիմնավորված սահմաններում տեղական արտադրությամբ փոխարինելու կարևորության մասին: Դրան հնարավոր է հասնել տեղական արտադրության մթերքի որակի ու մրցունակության բարձրացման և արտադրության ծավալների ավելացման միջոցով: Այդ նպատակով նախատեսվում է՝ գյուղացիական տնտեսություններին և գյուղատնտեսության բնագավառում տնտեսվարողներին աջակցության ցուցաբերում՝ անասնապահության, բուսաբուծության, գյուղմթերքի վերամշակման բնագավառում առաջադիմական և արդյունավետ տեխնոլոգիաների ներդրմանն ուղղված խորհրդատվության, մատչելի պայմաններով արտոնյալ և նպատակային վարկերի ծավալների ընդլայնման և ներդրումների համար բարենպաստ պայմաններ ստեղծելու միջոցով: Կարևոր է նաև ագրարային ոլորտի տեխնոլոգիաների գնահատման ծրագրերի իրականացումը կարևորագույն համարվող բնագավառներում, մասնավորապես մշակաբույսերի նոր սորտերի մշակության արդյունավետ տեխնոլոգիաների ներդրում, բարձր ավելացված արժեք ապահովող և շուկայական պահանջարկ ունեցող մշակաբույսերի ներդրում: Ոլորտում պետք է ներդրվեն նաև անասունների բուծման, խնամքի և կերակրման արդյունավետ տեխնոլոգիաներ:

Արցախի հանրապետությունը արտերկրից պարենամթերքի ներքին շուկա մուտք գործելու հնարավորության տեսանկյունից համարվում է ազատական շուկա ունեցող երկիր: Հանրապետություն ներմուծվող, թարմ և վերամշակված սնունդ արտադրող տնտեսվարող սուբյեկտների բազմազանությունը, դրանց կողմից տարբեր տեխնոլոգիաների կիրառումն ու սննդամթերքի անվտանգության վերահսկման ամբողջական համակարգի բացակայությունը լուրջ վտանգ են ստեղծում սպառողների առողջության համար: Սննդի անվտանգության անհրաժեշտ ստանդարտների համապատասխանության պարագայում կբարձրանա Արցախի հանրապետության գյուղատնտեսության արտադրանքի մրցակցությունը, որի համար գյուղատնտեսական և ագրոպարենային հատվածը պետք է կարողանա նաև արդյունավետ կերպով արձագանքել տեղական սպառողների սննդամթերքի անվտանգությանն առնչվող պահանջներին և մրցակցել ապրանքների, իսկ արտահանման դեպքում՝ արտասահմանյան ապրանքների որակական ստանդարտների հետ:

Միջազգային շուկա մուտք գործելու նախադեպ է նաև Արցախի հանրապետության սննդամթերքի անվտանգության համակարգի զարգացումը, ինչպես նաև սննդամթերքի որակի բարելավումը: Այս պարագայում անհրաժեշտ է ներկայացնել երաշխիքներ, որ սննդամթերքներն արտադրվել են այնպիսի վայրերում, որտեղ չկան որոշ տեսակի վնասատուներ և հիվանդություններ. գործում են սննդամթերքի արտադրության, փաթեթավորման և առաքման հիգիենայի տարրական կանոնները, կամ որ պնտիցիդների կամ անասնաբուժական դեղերի մնացորդները և շրջակա միջավայրի աղտոտիչները սննդամթերքում չեն գերազանցում իրենց թույլատրելի չափերը: Արտահանող երկիրը և արտադրական ամբողջ ճյուղը պետք է համապատասխանեն այս պահանջներին և, շատ դեպքերում, նաև ապացուցեն, որ համապատասխանությունն ապահովված է: Սննդամթերքի անվտանգության և բույսերի ու կենդանիների առողջության վերահսկման կարողությունը շատ կարևոր է ոչ միայն արտահանման համար սահմանված պահանջներին համապատասխանություն ապահովելու, այլ նաև ներկրվող

և տեղական արտադրության գյուղատնտեսական և պարենային ապրանքների նկատմամբ արդյունավետ հսկողություն իրականացնելու համար: Մենդի անվտանգության համակարգի զարգացման համար անհրաժեշտ է իրականացնել հետևյալ միջոցառումները՝ սննդամթերքի որակի և անվտանգության հսկողության գործընթացի կազմակերպման համար փորձաքննություն անցկացնող լաբորատորիաների ստեղծում և ուժեղացում՝ ապահովելով դրանց տեխնիկական հագեցվածությունը, համապատասխան կադրերի ուսուցումը և վերապատրաստումը: Մենդի անվտանգության համակարգի զարգացումը կնպաստի պարենամթերքի որակի բարելավմանը և արտահաման խթանմանը, արդյունքում կբարելավվի պարենամթերքի ապրանքաշրջանառության հաշվեկշիռը:

Ագրոպարենային հիմնախնդիրների լուծման գործում կարևոր է գոտիական մասնագիտացումը և արտադրության ռացիոնալ տեղաբաշխումը: Գյուղատնտեսության արտադրական գործոնների արդյունավետ օգտագործումը, տարածաշրջանների սոցիալ-տնտեսական զարգացման ուղղությամբ հիմնավորված քաղաքականության կիրառումը և գյուղական աղքատության հաղթահարումը պահանջում են բազմակողմանիորեն հիմնավորված գոտիական մասնագիտացում և արտադրության արդյունավետ տեղաբաշխում: Ազատական տնտեսության պայմաններում այս գործընթացները կարգավորվում են շուկայական գործոններով, բայց նկատի ունենալով հիմնախնդիրների ռազմավարական նշանակությունը, անհրաժեշտ է, որ պետությունը տարածքային զարգացման քաղաքականության շրջանակներում անուղղակիորեն նպաստի արտադրության մասնագիտացմանը և արդյունավետ տեղաբաշխմանը [2]:

Նոր տնտեսահարաբերություններով պայմանավորված՝ ագրարային ոլորտի վերափոխումների ընթացքում, պայմանավորված տարբեր սոցիալ-տնտեսական գործոններով, նկատելի կերպով խաթարվել է գյուղատնտեսական գոտիների մասնագիտացումը, ինչի հետևանքով ռեսուրսների օգտագործման արդյունավետությունը զգալիորեն նվազել է, կրճատվել են միավոր տարածությունից ստացվող համապատասխան արտադրանքը և աշխատանքի արտադրողականությանը: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Արցախի հանրապետությունում առանձնացված գյուղատնտեսական գոտիները չեն համընկնում ըստ շրջանների բաժանմանը՝ կառավարելիության տեսանկյունից գոտիական մասնագիտացումը և արտադրության տեղաբաշխումը նպատակահարմար է ներկայացնել ենթաշրջանների կտրվածքով:

Ըստ գյուղնախարարության ներկայացրած ռազմավարական ծրագրի՝ նախատեսվում է նաև գյուղատնտեսության ռացիոնալ տեղաբաշխման և մասնագիտացման քաղաքականության իրագործում, որի հիմնական ուղղություններն են՝ շրջանների սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրավորումը, նպատակային վարկավորման և մարքեթինգային աջակցության միջոցով փոքր և միջին ձեռնարկատիրության աշխարհագրության ընդլայնումը, միջշրջանային տնտեսական ինտեգրացման խթանումը և զարգացումը, շուկայական ու արտադրական և գյուղի սոցիալական ենթակառուցվածքների զարգացման ճանապարհով ներդրումային պայմանների բարելավումը և այլն: Նախարարության կարևոր հաջորդ ծրագիրը սահմանամերձ բնակավայրերի տնտեսական և սոցիալական զարգացման համալիր աջակցությունն է, ինչի նպատակով էլ փորձում են իրականացնել մի շարք միջոցառումներ: Դրանցից առաջնայինն ու գլխավորը սակավաբնակ բնակավայրերի ամրապնդումն է, որի միջոցով կավելանա գյուղըլորտում աշխատողների թիվը, ինչն էլ իր հերթին կբերի պարենամթերքի արտադրության ծավալների ընդլայնման և ինչու չէ նաև որակի բարձրացման՝ միաժամանակ լուծելով բնակչության աշխատունակ զանգվածի զբաղվածության խնդիրը: Հաջորդ կարևոր քայլն է տրանսպորտային և ինժեներական ենթակառուցվածքների ցանցի, տեղական նշանակության ճանապարհների ցանցի ընդլայնումը:

Ագրոպարենային հիմնախնդիրների լուծման գործընթացում կարևոր նշանակություն ունի նաև հողաբարելավումն ու շրջակա միջավայրի վրա բացասական ներգործության մեղմացումը: Հանրապետության համար մեծ նշանակություն ունի հողաբարելավման համալիր միջոցառումների իրականացումը, որոնց կարևոր բաղադրիչներից են ոռոգման համակարգերի և հողերի բարելավման միջոցառումները: Վերջիններիս կուղղվեն վարկային և ԱՀ պետական բյուջեյից ֆինանսավորվող մի շարք ծրագրեր: Նմանատիպ ծրագրերի իրագործումը կնպաստի ոռոգման համակարգերի մեխանիկական եղանակից ինքնահոսի անցմանը, նոր և ավելի մեծ տարողությամբ ջրամբարների կառուցմանը, ոռոգման համակարգերի կառավարման կառուցվածքի կատարելագործմանն ու տեխնիկական վիճակի բարելավմանը: Այս գործընթացների հիմնական և կարևորագույն նպատակն է ԱՀ ագրոարդյունաբերության ճյուղում ոռոգման նոր համակարգերի և նոր տեխնոլոգիաների ներդրումը, որը կնպաստի ջրի արդյունավետ օգտագործմանը: Բացի հողաբարելավման գործընթացներից, ագրոարդյունաբերության մեջ մեծ է օրգանական

գյուղատնտեսության զարգացումը, որի համար պետք է ստեղծվեն նախապայմաններ և իրավական հիմքեր, իսկ դրա համար հարկավոր է ուսումնասիրել միջազգային փորձն ու ձեռքբերումները: Օրինակ՝ միջազգային շուկայում, հատկապես զարգացած երկրներում, տարեցտարի աճում է պահանջարկը ինչպես թարմ, այնպես էլ վերամշակված օրգանական պարենամթերքի նկատմամբ: Օրգանական գյուղատնտեսական արտադրությունը հիմնված է կայուն և հավասարակշռված ագրոէկոհամակարգերի ստեղծման, պահպանման, ադոտոտող տեխնոլոգիաների օգտագործման բացառման, քիմիական նյութերի կիրառման խիստ սահմանափակման, բույսերի տնասկների, ինչպես նաև կենդանիների ցեղերի կենսաբազմազանության ավելացման և հողի բնական բերրիության բարձրացման և այլն: Այս բնագավառում արգելվում է գենետիկական վերափոխված օրգանիզմների և դրանց ածանցյալների, ինչպես նաև ժամանակակից որևէ կենսատեխնոլոգիական մեթոդների կիրառումը:

Անասնաբուժական ծագման մթերքի և դրա վերամշակումից ստացվող օրգանական սննդամթերքի արտադրության համար կարևոր նախադրյալ է երկրի ալպյան և ենթալպյան գոտու արտավայրերի առկայությունը: Հանրապետությունում օրգանական գյուղատնտեսության ձևավորման ու զարգացման համար անհրաժեշտ է մշակել և գործողության մեջ դնել «Օրգանական գյուղատնտեսության մասին» ԼՂՀ-ի օրենքը, որը սահմանելու և կարգավորելու է օրգանական գյուղատնտեսության հիմնական սկզբունքները, տնտեսվարողների պարտականությունները և այլն: Օրենքի կիրառումն ապահովելու համար անհրաժեշտ է մշակել համապատասխան ենթաօրենսդրական ակտեր, մասնավորապես՝ սահմանել տնտեսական գործունեության և պետական վերահսկողության կարգը, օրգանական արտադրանքին ներկայացվող պարտադիր պահանջները, ոչ օրգանական ծագման նյութերի ցանկը, որոնք կարող են օգտագործվել որպես բաղադրամասեր, բուսական և կենդանական ծագման գյուղատնտեսական հումքից վերամշակված սննդամթերքի փաթեթավորման կարգը: Օրգանական գյուղատնտեսության զարգացման համար մեծ նշանակություն ունի մասնավոր հատվածում համապատասխանությունը հավաստող մարմինների ձևավորմանն ուղղված աջակցությունը: Այդ մարմինները պետք է ունենան վերահսկողության համապատասխան փորձ, ռեսուրսներ, որակավորված աշխատակազմ, աշխատանքները իրականացնեն թափանցիկ և համապատասխանության գնահատման գործառնությունների իրականացման ընթացքում ապահովեն տնտեսվարողների առևտրային գաղտնիությունը: Օրգանական արտադրությանը ԱՀ-ում նպաստելու համար անհրաժեշտ է դրա արտադրության ազգային ստանդարտների մշակում և դրանց ներդաշնակեցում ընդունված չափորոշիչներին: ԱՀ-ում օրգանական արտադրության խթանման համար անհրաժեշտ է ապահովել աջակցությունը խորհրդատվության և տեղեկատվության տրամադրման ուղղությամբ:

Արցախի հանրապետությունում բուսաբուծության զարգացումը պահանջում է ագրոտեխնիկական առաջադիմական տեխնոլոգիաների ներդրում, բարձր ավելացված արժեք ապահովող մշակաբույսերի մշակության ընդլայնում, սելեկցիայի և սերմնաբուծության համակարգի զարգացում, սերմերի որակի հսկողության գործուն մեխանիզմների կիրառում, բույսերի գենետիկական բազմազանության, ներառյալ՝ մշակաբույսերի վայրի ցեղակիցների պահպանության ապահովում: Գյուղատնտեսության ռազմավարության շրջանակներում բուսաբուծության զարգացման գերակայություններից են՝

1. ագրոտեխնիկայի առաջադիմական համակարգերի ներդրման միջոցով գյուղատնտեսական մշակաբույսերի բերքատվության բարձրացումը և միավոր արտադրանքի հաշվով արտադրական ծախսերի կրճատումը,
2. ցանքատարածությունների կառուցվածքի բարելավումը և միավոր տարածությունից ստացվող եկամտի ավելացումը,
3. բարձր ավելացված արժեք ապահովող մշակաբույսերի ներդրումը, մշակության ագրոտեխնիկայի յուրացումը,
4. դաշտային կերարտադրության արդյունավետության բարձրացումը և կերային մշակաբույսերի ցանքատարածությունների զգալի ավելացումը,
5. 118.3 հազ. հա վարելահողերի լիարժեք օգտագործումը, դրանից առնվազն 80.6 հազ. հա ինտենսիվ մշակությունը [2]:
6. բազմամյա տնկարկների հիմնադրում մինչև 6.9 հազ. հա, որից պտղատու այգիներ՝ 3.9, իսկ խաղողիներ՝ 3 հազ. հա:

Ոլորտում կանխատեսվող մակարդակի ռազմավարության ուղղություններից են հանրապետության գոտիական առանձնահատկություններին համապատասխան մշակության և բերքահավաքի առաջադիմական տեխնոլոգիաների արմատավորումը, որի համար նոր

տեխնոլոգիաների ներդրման ծրագրի իրականացումը, բուսաբուծության ճյուղում բարձր ավելացված արժեքով արտադրության անցման ուղղությամբ հանրապետության տարբեր շրջաններում տեխնոլոգիաների գնահատման ծրագրերի իրականացումը, սելեկցիայի և առաջնային սերմնաբուծության գիտական ապահովում, երկրորդային սերմնաբուծության ոլորտում մասնավոր ձեռներեցության խթանում և սերմնարտադրության հավաստագրումը: Պետք է առանձնակի ուշադրություն դարձնել ֆիլոքսերադիմացկուն տնկանյութի արտադրության և հիվանդությունների ու վնասատուների դեմ պայքարի առաջավոր տեխնոլոգիաների ներդրմանը: Նախատեսվում է պետքյուջեից և այլ աղբյուրներից կատարվող հատկացումների հաշվին արդյունավետ մեխանիզմների կիրառման միջոցով ավելացնել բույսերի առավել վտանգավոր և մասսայական վարակիչ հիվանդությունների դեմ պայքարի աշխատանքների ծավալները: Բուսասանիտարական առավել կայուն վիճակ ստեղծելու նպատակով բույսերի պաշտպանության միջոցառումների իրականացում նաև ընդհանուր օգտագործման տարածքներում: Բուսաբուծության զարգացման համար կարևոր է բույսերի պաշտպանության միջոցների և պարարտանյութերի ներկրման, պահպանության ու վաճառքի գործընթացների իրավական կարգավորում և տեսչական հսկողության ուժեղացում, ինչի արդյունքում տարվող աշխատանքները կլինեն առավել նպատակային և արդյունավետ: Բուսաբուծության զարգացմանն ու առավել ևս բերքատվությանը մեծ վնաս են հասցնում տարբեր տեսակի բազմաթիվ միջատներ և կրծողներ [3]:

Դրանց դեմ պայքարելու համար նույնպես անհրաժեշտ է արդյունավետ միջոցառումների կիրառումը: Բերքատվության բարձրացմանն նպատակով նախատեսվում է գյուղտնտեսական մշակաբույսերին պատճառված վնասի չափը հասցնել նվազագույնի և կրծողների դեմ պայքար իրականացված տարածքներում դրանց տարածվածությունը կրճատել առնվազն 80 %-ով: Հողերի ագրոքիմիական հետազոտության և բերրիության բարձրացմանն նպատակով 2008-2015 թթ. ծրագրի իրականացման շնորհիվ գյուղատնտեսությունում պարարտացման արդյունավետ սխեմաների կիրառել: ԱՏ ագրարային հատվածում մշակվող և իրականացվող քաղաքականությունն աջակցելու է կենսաբազմազանության պահպանությանը, ինչպես նաև լանդշտաֆների արդյունավետ կառավարման և ծրագրավորմանը: Գյուղատնտեսական մշակաբույսերի վայրի ցեղակիցների պահպանության աջակցությունն իրականացվելու է հետևյալ ուղղություններով՝ մշակաբույսերի և դրանց վայրի նախնիների գենետիկ բանկի ստեղծում, բնական հանդակների բարելավում, բնական աղետների կանխատեսում և հետևանքների մեղմմանն ուղղված համալիր միջոցառումների իրականացում [4]:

Ագրոպարենային հիմնախնդիրների լուծման գործում կարևոր է նաև երկրում անասնապահության և անասնաբուծության զարգացման դերը: Անասնաբուծության ճյուղերի արդյունավետ զուգակցման և ռացիոնալ տեղաբաշխման աջակցություն, տոհմային գործի զարգացման համալիր միջոցառումների իրականացում, անասնաբուծության համակարգի բարելավում և անասնաբուծական միջոցառումների արդյունավետության բարձրացում, անասնաբուծության կերի բազայի զարգացում, անասնաբուծական առևտրային կազմակերպությունների զարգացմանը աջակցություն, գյուղատնտեսական կենդանիների ցեղերի գենետիկական բազմազանության պահպանության ապահովում: Ռ-ազմավարության շրջանակներում անասնաբուծության զարգացման գերակայություններն են թարմ կաթի և կաթնամթերքի, թռչնի, մսի և ձվի նկատմամբ հանրապետության ներքին շուկայի պահանջարկի ամբողջական բավարարում, մթերքի արտադրության խթանում: Կարևոր է կերային մշակաբույսերի տարածքների ընդլայնման, արտոների արդյունավետ օգտագործման մեխանիզմների կիրառման միջոցով անասնակերների սեփական արտադրության հնարավորությունների լիարժեք օգտագործում, «Անասնակերի մասին» ԼՂՀ օրենքի մշակումը: Անասնապահներին պետք է ապահովել խորհրդատվությամբ և նպատակային վարկավորման միջոցով անասնապահական առևտրային կազմակերպությունների ձևավորման խթանման ծրագրերի ներկայացում: Ռ-ազմավարության շրջանակներում առաջնային է նաև անասնազվաքանակների հաշվառման բարելավման և համարակալման ու տեղեկատվական համակարգի ձևավորման հիման վրա տոհմային գործի ու անասնաբուծական համակարգի բարելավումը, ինչպես նաև՝ պետական ուղղակի աջակցության ծրագրերի իրականացումը: Անասնազվաքանակի կայունացման տնտեսական հիմքի համար անհրաժեշտ է սեփական կերարտադրության իրական հնարավորությունների ընդլայնումը՝ այդ թվում խտացրած կերի արտադրության ներդրում և խթանում: Դրանից ելնելով՝ մոտակա ժամանակահատվածում կարող է պահպանվել անասնազվաքանակի ավելացման միտումները: Եթե վերը նշված ռազմավարական գյուղատնտեսական ծրագրերը իրականացվեն ճիշտ այնպես,

ինչպես որ նախատեսվում են, ապա գյուղացիական տնտեսությունները կավելացնեն խոշոր եղջերավոր անասունների, ոչխարների, այծերի ու խոզերի գլխաքանակը, քանի որ անգամ եկամտաբերության ցածր մակարդակի պարագայում դրանք ապահովում են զբաղվածության կայուն մարդակ, դրամական հոսքերի սեզոնայնության մեղմացում, թարմ և վերամշակված անասնապահական մթերքների նկատմամբ ներտնտեսային կարիքների բավարարում և բարձր իրացվելիություն ունեցող ակտիվների առկայություն: Գյուղացիական տնտեսություններում անասնազվաքանակի ավելացմանը կնպաստեն նաև գյուղական համայնքներում ստեղծվելիք կաթի հավաքման և իրացման կառույցները, սպանդանոցները, արտավայրերի բարելավման ծրագրերը և դաշտային կերարտադրության զարգացումը: Անասնապահական մթերքների արտադրության ուղղվածություն ունեցող առևտրային կազմակերպությունները նույնպես կավելացնեն թռչունների, խոզերի և խոշոր եղջերավոր անասունների գլխաքանակը, որովհետև համեմատաբար խոշոր տնտեսություններն ունեն տոհմային ուղղվածություն, թարմ իրացումից բացի՝ նաև վերամշակման հնարավորություններ:

Արցախի հանրապետության պարենային ապահովության մակարդակի բարձրացմանը կնպաստի նաև մեղվաբուծության և ձկնաբուծության զարգացումը: Այդ նպատակի համար ավելի կընդլայնվի մեղվաբույծներին խորհրդատվական և տեխնիկական աջակցության ցուցաբերումը, մեղվաբույծների հասարակական կազմակերպությունների մասնակցությամբ ոլորտի օրենսդրական կարգավորման, մեղրի և նրա հետ առնչվող ապրանքների արտահանման գործընթացների սկիզբը: Ձկնաբուծության ոլորտի ընդլայնման ուղղությամբ աշխատանքներ կտարվեն ձկնաբուծական արտադրանքի ավելացման ներքին շուկան բավարարելու ուղղությամբ: Խորհրդատվությամբ և նպատակային վարկավորման միջոցով առևտրային կազմակերպությունների ձևավորմանն աջակցելը՝ անասնապահական ճյուղի նախընտրելի մասնագիտացմանը համապատասխան, ևս կարևոր նախապայման է: Հիմք ընդունելով վերոնշյալ գերակայությունները և զարգացման միտումները՝ կանխատեսվել են անասնաբուծության հիմնական ցուցանիշները: Կանխատեսվող մակարդակի ապահովման ռազմավարական ուղղություններն են. համալիր միջոցառումների իրականացում, որոնց նպատակն է տոհմային գործի զարգացումը: Գյուղատնտեսության բնագավառում իրականացված վերափոխումներին հաջորդող ժամանակահատվածում տոհմային գործի անտեսման և արհեստական սերմնավորման ծավալների զգալի կրճատման արդյունքում հանրապետության պայմաններին հարմարեցված անասունների ցեղերի գենոֆոնդի պահպանությունը վտանգվել է, տեղի է ունեցել հետադարձ տրամախաչում և, հատկապես, խոշոր եղջերավոր անասունների տոհմային հատկանիշները վատացել են: Տոհմային գործի զարգացման նպատակով նախատեսվում են տոհմային գործի զարգացմանը միտված՝ երկարաժամկետ նպատակային ծրագրի մշակում և իրացում, հանրապետության պայմաններին հարմարեցված անասունների ցեղերի գենոֆոնդի, գյուղատնտեսական կենդանիների ցեղերի գենետիկական բազմազանության պահպանության և սելեկցիոն նպատակներով դրանց օգտագործում, արհեստական սերմնավորման ենթակառուցված անասնազվաքանակի ավելացում և դրա արդյունքում սերնդատվության ցուցանիշների և մատողաչի տոհմային հատկանիշների բարելավում:

Ինչպես Հայաստանի Հանրապետության, այնպես էլ Արցախի գյուղատնտեսության հիմնական դիմագծերից ամենակարևորը գյուղացիական տնտեսությունների փոքրությունն ու կտրտվածությունն է: Ընդունված է ասել, որ Արցախյան գյուղատնտեսության մեջ առաջացած բոլոր խնդիրները կապված են հենց փոքրության, կտրտվածության հետ: Ակնհայտ է, որ տնտեսությունների փոքրությունը խոչընդոտում է տնտեսապես արդյունավետ ծավալների, կայուն որակի արտադրանքի ապահովմանը, նրանց վերահսկողության կազմակերպմանը, առանձնապես դժվարացնում է բերքահավաքի, փոխադրման և պահեստավորման արդյունավետ կազմակերպումը, որոնք ընդունված է անվանել լոգիստիկ դժվարություններ: Փոքր տնտեսությունները հաճախ մեծ վնասներ են կրում բերքահավաքի ժամանակ՝ պահեստավորման կամ վերամշակման կարողությունների բացակայության կամ անբավարար լինելու պատճառով: Արդյունքում ստեղծված է այն իրավիճակը, որ փոքր տնտեսությունների խոշոր բանակը կախվածության մեջ է ընկնում մի քանի խոշոր վերամշակողներից, թուլանում է բանակցային գործընթացը ներքին և արտաքին շուկայում և արտադրանքը վաճառվում է ոչ շահավետ գնով, իսկ որոշ դեպքերում իրենց ինքնարժեքով: Մեծաթիվ փոքր և անջատ տնտեսությունների առկայությունը լրջորեն դժվարացնում է նաև նոր տեխնոլոգիաների ու հմտությունների կիրառման և տարածման գործընթացը: Եվ այս ամենը չի կարող չազդել արտադրողականության, արտադրանքի որակի, հետևաբար նաև գյուղարտադրանքի ցածր մրցունակության վրա:

Նշված խնդիրները անկասկած կապ ունեն տնտեսությունների փոքրության հետ: Սակայն եթե հաշվի առնենք միջազգային փորձը և մի հայացք գցենք Արցախի գյուղատնտեսական շուկայի վրա, կարելի է նկատել, որ այդ խնդիրների մեծ մասի պատճառը ոչ թե տնտեսությունների փոքրությունն է, այլ դրանց միջև համագործակցության թուլությունը կամ բացակայությունը: Ստացվում է, որ փոքրության և թույլ համագործակցության համակցությունն է, որ դառնում է նշված խնդիրների պատճառ, կամ, ինչպես ասում են, գյուղատնտեսության զարգացումը զսպող սահմանափակում: Միջազգային փորձը ցույց է տալիս, որ գյուղատնտեսության մեջ փոքրության հետ կապված խնդիրների զգալի մասը կարելի է լուծել գյուղատնտեսության միջև արդյունավետ համագործակցության, կամ, ինչպես ընդունված է ասել, կոոպերացիայի միջոցով: Ի դեպ, համագործակցությունը չպետք է դիտել որպես ինքնանպատակ: Այն պետք է բխի կարիքից և ուղղված լինի որոշակի խնդիրների լուծմանը:

Հոլանդական կամ Շվեդական ֆերմերների փորձը ցույց է տվել, որ առողջ համագործակցությունը պահանջում է նաև ինքնուրույն մտածելակերպ և հույսն առաջին հերթին սեփական ուժերի վրա դնելու վարքագիծ [5]: Դա նշանակում է, որ առաջացած ցանկացած խնդրի դեպքում պետք է ոչ թե դիմել գյուղատնտեսության կամ շրջվարչակազմին, այլ տեսնել, թե նման իրավիճակում հայտնված հարևան ֆերմերն ինչպես է վարվում և փորձել համատեղ լուծել այն:

Մեր կարծիքով, ինչպես Հայաստանյան, այնպես էլ Արցախյան շուկաներում կան որոշ անկատարություններ, որոնք զգալիորեն զսպում կամ արգելակում են գյուղատնտեսության զարգացմանը: Դրանցից թերևս կարելի է նշել հետևյալը՝

1. Գյուղական համայնքներում չկան պահեստավորման և նախնական վերամշակման բավարար կարողություններ: Փոքր արտադրողները չունենալով բերքը և մթերքը (ցորեն, խաղող, կաթ և այլն) հավաքելու ու պահեստավորելու հնարավորություններ, ստիպված են լինում դրանք էժան գներով վաճառել:

2. Շուկայի աշխատանքի վրա ազդում է նաև սննդամթերքների անվտանգության և որակի ստանդարտների թերի ներդրումը, քիչ ուշադրություն է դարձվում արտադրանքի որակի որոշ կարևոր ցուցանիշներին: Օրինակ՝ կաթի շուկայում հիմնվում են կաթի յուղայնության վրա, անտեսելով ասեմբլ հակաբիոտիկների առկայությունը, որը ազդում է գնագոյացման վրա: Կամ խաղողի շուկայում հաշվի է առնվում բերքատվությունը և քաղցրությունը, անտեսելով գինի ստանալու համար նրա մեջ պարունակող այլ որակներ: Մեր կարծիքով անհրաժեշտ է ներդնել գնագոյացման նոր համակարգ, առանց որի այս ոլորտում անհնար կլինի հետագա որակական զարգացում ապահովելը:

3. Շուկայի գործունեությունը տուժում է փոքր թվով խոշոր վերամշակող գործարարների դիրքի չարաշահման պատճառով: Դա առավել նկատելի է հացահատիկի, եգիպտացորենի, խաղողի մթերման և վերամշակման ոլորտներում: Նրանք գներ են թելադրում և կիրառում արտադրողների համար ոչ ձեռնտու ընթացակարգեր:

Այսպիսով՝ հիմք ընդունելով մեր կողմից կատարված վերոհիշյալ նկատառումները, հատկանշվել են Արցախի գյուղատնտեսության զարգացումը զսպող հետևյալ սահմանափակումները.

1. փոքր տնտեսությունների գերակշռություն, որին համակցում է շատ թույլ համագործակցություն, իսկ որոշ դեպքերում անգամ այն բացակայում է:
2. նշված ոլորտում ընդգրկված մասնակիցների գիտելիքների և հմտությունների պակաս
3. շուկայական ենթակառուցվածքի աշխատանքի անկատարություններ
4. ներդրումների ցածր մակարդակ

Ամփոփելով վերոհիշյալները՝ նշենք, որ ՄԱԿ-ի տվյալներով ներկայումս աշխարհում կան գյուղվթերքներ արտադրող 570 մլն. փոքր տնտեսություններ, ընդ որում յուրաքանչյուր 10 տնտեսություններից 9-ը ընտանեկան է: Հետևաբար ընտանեկան տնտեսությունը դառնում է գյուղատնտեսության վարման գերիշխող ձև, դառնալով նաև վճարող գործակալ կայուն պարենային ապահովությունն ու սովի վերացմանն ուղղված բարեփոխումներում: Հենց ընտանեկան տնտեսություններում է արտադրվում աշխարհի պարենի 80%-ը, և դա կենսական դերակատարում ունի մոտ 800 մլն. սովից տառապող մարդկանց պարենային հիմնախնդրի լուծման գործում:

Մենք առաջարկում ենք, որպեսզի կառավարությունը կանոնակարգման և աջակցության նոր մեխանիզմներ մշակի ու ներդնի, որը կօգնի հաղթահարել և նվազագույնի հասցնել գյուղատնտեսության ոլորտում արտադրությանն ու մթերմանը խոչընդոտող սահմանափակումները:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Գասպարյան Է. Խ., Գյուղատնտեսության ոլորտն Արցախ-Ղարաբաղում, Երևան, 2010թ., էջ 316
2. Գրիգորյան Ա. Վ., Հողային ռեսուրսների օգտագործման խնդիրները ԼՂՀ-ում, Գյումրու Մ. Նալբանդյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտի հանրապետական գիտական նստաշրջանի նյութեր, Գյումրի, 2011թ., էջ 528
3. Հակոբյան Գ. Ա., Գյուղատնտեսական մշակաբույսերի վնասատուները և հիվանդությունները ու նրանց դեմ պայքարի միջոցները, Երևան, 2010թ., էջ 214
4. Մինասյան Մ.. Տնտեսական բարեփոխումների տրամաբանությունը և փուլերը ԼՂՀ-ում, Երևան, 2002թ., էջ 75-78
5. Коваленко Н. Я., Экономика сельского хозяйства, Москва, 1999г, ст. 198
6. www.minagro.nkr.am
7. www.stat-nkr.am

Տեղեկություններ հեղինակի մասին՝
Գրիգորյան Անահիտ Վլադիմիրի,
ա.գ.թ., դոցենտ, ԱրՊՀ
srbuhi.tovmassian@mail.ru

Հոդվածը տպագրության է նրաշխարհում խմբագրական կոլեկիայի անդամ, աշխ. գ. դ., Ա.Ռ. Ավագյանը:

ՆՏԴ.911.33

Տնտեսական աշխարհագրություն

ՌԵԿՐԵԱՑԻՈՆ ԵՎ ԵՎՈԼՈԳԻԿԵՍԻ ՍՊԵՑԻԱԼԻԶԱՑԻԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՀԱՄԱԼԻՐ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐՆ ԱՐՑԱԽԻՄ

Անահիտ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Ակսել ՊՈՏՈՍՅԱՆ

Բանալի բառեր՝ Ռեկրեացիոն, էկոլոգիական հիմնախնդիրներ, նրկրագրություն, բնօգտագործման, տուրիստական, նրկրաբանագնորֆոլոգիական, լանդշաֆտաէկոլոգիական, բնատնտեսական, բուժկուրորտային, հնագիտական:

Ключевые слова- Рекреационный, экологические проблемы, туристический, страноведение, геолого-геоморфологический, ландшафтный, экологический, натуральное хозяйство, природопользование, здравница, археологический

Keywords - Recreational, environmental problems, tourist, countryology, geological and geomorphological, landscape, ecological, subsistence economy, environmental management, health resort, archaeological.

ПРОБЛЕМЫ ИСПОЛЬЗОВАНИЯ КОМПЛЕКСА ТЕРРИТОРИЙ ВЫДЕЛЕННЫХ НА РЕКРЕАЦИОННЫЕ ЦЕЛИ В АРЦАХЕ

А. Григорян, А. Погосян

В статье представлены возможности территорий, выделенных на рациональную организацию рекреационной экономики в республике Арцах, возникшие в этой сфере проблемы. Затронуты различные вопросы охраны природы и природопользования. Исследован потенциал природных ресурсов Арцаха, виды организации отдыха и выделенные территории. Разумное использование рекреационных ресурсов, комплексная эксплуатация выделенных территорий является важной частью стратегической программы социально-экономического развития Республики Арцах.

PROBLEMS OF USE OF A COMPLEX OF THE TERRITORIES ALLOCATED FOR THE RECREATIONAL PURPOSES IN ARTSAKH

A. Grigoryan, A. Poghosyan

The article deals with the possibilities of the territories allocated for the rational organization of recreational economy in the Artsakh Republic, the problems which have arisen in this sphere. Various questions of conservation and environmental management are raised. Potential of natural resources of Artsakh, types of the organization of rest and the allocated territories is investigated. Reasonable use of recreational resources, complex operation of the allocated territories is an important part of the strategic program of social and economic development of Artsakh Republic.

Նորվածում ներկայացված է Արցախի հանրապետությունում ռեկրեացիոն տնտեսության բացահայտ կազմակերպման նպատակով առանձնացված տարածքների օգտագործման հնարավորությունները, այս բնագավառում առաջ եկած խնդիրները: Շոշափված են բնօգտագործման և բնապահպանական ամենատարբեր խնդիրներ: Վերլուծված է Արցախի ռեկրեացիոն օգտագործման բնատնտեսային ներուժը ըստ տնտեսային պոտենցիալի հանգստի կազմակերպման ձևերը և առանձնացված տարածքները: Ռեկրեացիոն տնտեսության հաշվենկատ օգտագործումը, առանձնացված տարածքների համալիր օգտագործումը Արցախի հանրապետության սոցիալ-տնտեսական զարգացման ռազմավարական ծրագրերի կարևորագույն մասն է:

Արդի համաշխարհային տնտեսության առավել արագ զարգացող ոլորտներից մեկը համարվում է ռեկրեացիոն գործունեությունը (լատ. recreation՝ վերականգնում): Տնտեսության այս ճյուղի զարգացումն արդիական է այն իմաստով, որ այն մի կողմից պայմանավորված է բնակչության արտասաշխատանքային հանգիստը կազմակերպելու, նրա ֆիզիկական ուժերը վերականգնելու և հոգևոր պահանջմունքները բավարարելու, մյուս կողմից՝ ռեկրեացիոն նպատակներով առանձնացված տարածքների համալիր օգտագործման սոցիալ-տնտեսական և էկոլոգիական հիմնախնդիրները լուծելու անհրաժեշտությամբ:

Գիտական մի շարք հետազոտություններ ցույց տվեցին, որ Արցախում բնակչության զանգվածային հանգստի և զբոսաշրջության կազմակերպման ոլորտներում առաջ եկան բազում հիմնախնդիրներ՝ կապված պատերազմյան և հետպատերազմյան ժամանակաշրջաններում տեղի ունեցած օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառների հետ: Ռեկրեացիոն տնտեսության կազմակերպման աշխատանքներում ի հայտ եկան աշխարհագրական-էկոլոգիական հիմնախնդիրներ, որոնք ընդգրկվեցին աշխարհագրական գիտության համակարգի մի շարք ճյուղերի հետազոտությունների ոլորտում: Դա

վերաբերում է ֆիզիկական, սոցիալ-տնտեսական, բնակչության աշխարհագրությանը, ռեսուրսագիտությանը, երկրագրությանը, ինչպես նաև բժշկական աշխարհագրությանը: Արդյունքում ստացվեց այն, որ հիմնախնդիրների միջառարկայական ուսումնասիրությունները նպաստեցին աշխարհագրական նոր գիտության՝ ռեկրեացիոն աշխարհագրության ձևավորմանը, որը հակված է լուծելու արդյունավետ բնօգտագործման և բնապահպանական ամենատարբեր բնույթի մի շարք խնդիրներ: Դրանք հիմնականում վերաբերում են ռեկրեացիոն տարածքային համակարգերի կազմակերպման, տեղավայրերի ճիշտ ընտրության, դրանց արդյունավետ տեղաբաշխման, բնական ռեսուրսների ռեկրեացիոն գնահատման, ռեկրեացիոն նպատակներով առանձնացված տարածքների անթրոպոգեն ծանրաբեռնման սահմանային մակարդակների որոշման հետ: Ակնհայտ է, որ բնօգտագործումը միջոցառումների համակարգ է՝ ուղղված բնական միջավայրի տնտեսական յուրացմանը, վերափոխմանն ու պահպանմանը [3]: Սակայն պետք է նկատել, որ հետպատերազմյան տարիներին, շատ հաճախ ռեկրեացիոն գործունեությունը ուղեկցվում է բնական գեոհամակարգերի վրա թույլատրելի նորմերի խախտմամբ, որի հետևանքով դրանք կորցնում են իրենց ռեկրեացիոն արժեքն ու նշանակությունը և ենթարկվում դեգրադացիայի: Մեր կարծիքով նման խնդիր կպահանջի ոչ միայն գեոհամակարգերի բնօգտագործման ձևերի ճիշտ կազմակերպում, այլ նաև անթրոպոգեն ներգործության անցանկալի հետևանքների կանխատեսում և դրանց կանխարգելման միջոցառումների մշակում և կիրառում: Դրանք անգն աչքով դիտարկելի է Արցախի հյուսիսային տարածքներում՝ երկրի ընդերքի օգտագործման, անտառախախտման և ճանապարհաշինության ոլորտներում: Այս տեսակետից կարևոր նշանակություն կունենա լանդշաֆտային պլանավորումը: Դա կենթադրի ռեկրեացիոն համալիրների այնպիսի տարբերակների ստեղծում, որոնք կլինեն տնտեսապես արդյունավետ, սոցիալապես հարմարավետ, էկոլոգիապես բարեկարգ և գեոագիտական առումով ճաշակով:

Արցախի ռեկրեացիոն բնօգտագործման ռեսուրսային ներուժի մեջ կարելի է դասակարգել մակերևույթի ձևաբանությունը՝ հատկապես ներկայումս, երբ զարգացման առավել մեծ տեմպեր ունի էկոգրոսաշրջությունը, մեծանում է հետաքրքրությունը լեռնային ռելիեֆի նկատմամբ [2]: Այստեղ տարածվում են բնական գեոլեցիկ համայնապատկերներ: Լանջերի դիրքադրությունից ելնելով՝ կարելի իրականացնել հարմար վերելքներ, որը մարզի տարածքում կնպաստի էքստրենալ տուրիզմի մասնավորապես ալպինիզմի և էկոգրոսաշրջության զարգացմանը:

Ռելիեֆի դերը զբոսաշրջության զարգացման մեջ ունի հիմնականում երկու ուղղվածություն՝ առողջարարական և սպորտային: Առողջարարական զբոսաշրջության ժամանակ հաշվի են առնում մինչև առավելագույնը ծովի մակարդակից 3000 մետր լեռնային շրջանները: Արցախի տարածքը հիմնականում ներկայացվում է տարբեր թեքության և դիրքադրության լեռնալանջերով: Թեքությունների մեծությունները պատճառական կապի մեջ են գտնվում ուղղածիզ և հորիզոնական մասնատվածության հետ: Թեքությունների ազդեցությունը հասարակական կյանքի տարածքային կազմակերպման վրա ունի ընդհանուր մեկ ուղղվածություն. թեքության մեծացումը հանգեցնում է բնական և տեխնիկական պայմանների բարդացմանը, շինարարական աշխատանքների թանկացմանը, եկթակառուցվածքների շահագործման ծախսերի մեծացմանը:

Ռեկրեացիոն մեծ նշանակություն ունի Արցախի տարածքի մեղմ և բարենպաստ կլիման: Կլիմայական զբոսաշրջային ռեսուրսները կլիմայական այն պայմանների ամբողջությունն է, որոնք նպաստավոր են հանգստի տարբեր ձևերի կազմակերպման համար: Կլիմայական պայմանները բաժանվում են հետևյալ խմբերի՝ բարենպաստ, համեմատաբար բարենպաստ, որի դեպքում հանգստի որոշակի տեսակներում հնարավոր են սահմանափակումներ, անբարենպաստ, երբ հանգստի որոշակի տեսակներ արգելվում են:

Արցախի Հանրապետության կլիման աչքի է ընկնում մեծ բազմազանությամբ, որը հիմնականում պայմանավորված է վայրի աշխարհագրական դիրքով, մթնոլորտի ընդհանուր շրջանառությամբ, կապից ծովի մոտիկությամբ, մակերևույթի բարձրությամբ, լեռնաշղթաների կողմնադրությամբ և այլ գործոններով [4]:

Երկար ժամանակ հետազոտողներն իրենց ուշադրությունը սևեռում էին, թե եղանակային տարրերն ինչ ազդեցություն են թողնում մարդկանց վրա: Գործընթացի արդյունքում մշակվել է չափագրման նոր մեթոդներ, որոնցից ամենահայտնին ջերմաստիճանների էֆեկտիվությունն է: Դրանում առկա են՝ օդի ջերմաստիճանը, հարաբերական խոնավությունը, քամու արագությունը, արեգակնային ճառագայթումը և երկարալիքային ճառագայթումը: Ջերմաստիճանների և հարաբերական խոնավության միջև փոխազդեցությունը բնութագրվում են որպես էֆեկտիվ ջերմաստիճան (ԷՋ):

Ամենից առաջ կլիմայական գործոնի դերը կայանում է նրանում, որ երկրագնդի շրջանների մեծ մասում, եղանակային պայմանները զբոսաշրջության և հանգստի համար ամենուրեք նույն ամիսներին չեն հանդես գալիս, մարդիկ ձգտում են արձակուրդ վերցնել ավելի շատ տարվա հարմարավետ եղանակների ժամանակ: Սակայն երբեմն, հատկապես նրանց համար, ովքեր զբաղվում են ձմեռային

մարզաձևերով գերադասում են ընտրել ձմեռային հանգիստը: Ամառային ամիսները բայց և այնպես միշտ գերակշռել է զբոսաշրջային հոսքերի քանակով:

Տաքորդ ռեկրեացիոն նախադրյալը ջրառեկրեացիոն պայմաններն են: Զբոսաշրջության զարգացման համար շատ կարևոր նախապայման է ջրային ռեսուրսների առկայությունը: Հատկապես կարևորվում է ԼՂՏ գետերի նշանակությունը: Արաքսի ավազանին պատկանող խոշոր վտակներն են Հակարին (Աղավնո), Վարանդան և Իշխանագետը: Կուրի ավազանին են պատկանում Թարթառ, Ինջան, Խաչենագետը, Կարկառը: Մի քանի մշտական հոսք չունեցող փոքր գետեր (Չախմախ, Ճղպորագետ, Խոնաշեն, Կավարտ, Իննմասիջուր, Սուալջուր), ԼՂՏ սահմաններից դուրս չեն գալիս [4]:

ԼՂՏ գետերի ռեկրեացիոն արժեքը շատ մեծ է, սակայն դեռևս չնչին չափով է օգտագործվում, հատկապես պետք է ընդգծել գետերի ու դրանց հովիտների գեղագիտական նշանակությունը: Համեմատաբար խոշոր են Աղավնո և Թարթառ գետերը: Դրանք իրենց բնույթով լեռնային են, արագընթաց, հարուստ սահանքներով, որը և հնարավորություն է ստեղծում ջրային տուրիզմի զարգացման համար: Առանձնահատուկ դեր ունեն նաև Սարսանգի, Խաչենի, Արաքսի և մանր ջրամբարների առկայությունը, որտեղ բացի ձկնորսությունից կարելի է զբաղվել թիավարությամբ [1]:

Ջրային ռեսուրսների դերը խիստ բազմազան է: Ձուրը վճռական դեր է կատարում մարդու կենսագործունեության բոլոր բնագավառներում: Նրա դերը վճռական է նաև զբոսաշրջության և հանգստի ինդուստրիայի կազմակերպման գործում: Այս առումով մեծ հետաքրքրություն են ներկայացնում Արցախի տարածքի ինքնատիպ լեռնային արագահոս գետերն ու առվակները, խոր կիրճերն ու գահավիժող ջրվեժները, տարբեր ծագման լեռնային անգուգակա լճերը:

Ջրային ռեսուրսների՝ զբոսաշրջության և հանգստի ինդուստրիայի կազմակերպման նշանակությունը թերի կլիներ, եթե չնշվի հանրապետության հանրային ջրերի մասին: ԼՂՏ հանրային ջրերը պատկանում են ածխաթթվային հանրային ջրերի խմբին: Առավել հայտնի են Շոլանի հանրային ջրերի խումբը և Թթուջուր աղբյուրը (Լխագոր), ինչպես նաև Քարվաճառի հիդրոգեոքիմիական զոնայի հանրային ջրերի խումբը (Շահումյանի շրջան): Հիանալի գեղատեսիլ տեղանքը, սառնորակ կլիման, մաքուր ու առողջ օդը խթանում են, որ բարձրանա Թթուջուր և Շոլան տեղամասերի հանրային ջրերի արդյունավետությունը՝ հիվանդությունների բուժման նպատակով օգտագործելու առումով: Այստեղ կարելի է կառուցել առողջարաններ և զբաղվել կուրորտային տնտեսությամբ: գեղատեսիլ բնությունը, բուժիչ հանրային ջրերի աղբյուրների առկայությունը նպաստավոր պայմաններ կստեղծեն, որպեսզի տարածքը վերածվի առողջարանային կենտրոնների և կնպաստի զբոսաշրջության այդ ուղղության զարգացմանը:

Ռեկրեացիոն տնտեսության զարգացման համար ոչ պակաս կարևոր են կենսաբանական ռեսուրսները: Արցախի տարածքը բավականին հարուստ է կենսածին ռեսուրսներով: Այստեղ աճում է շուրջ 2000 բուսատեսակ՝ սկսած կիսաանապատային եթերայուղային տեսակներից, վերջացած մերձալպյան գոտու արժեքավոր տեսակներով: Այստեղ կարելի է հանդիպել բուժական նյութեր պարունակող բազմաթիվ դեղաբույսեր: Արցախի տարբեր լանդշաֆտային գոտիներում հանդիպող ուտելի, բուժիչ և զեղազարդային բույսերը, մրգերն ու հատապտուղները, որսակենդանիները, գիտաճանաչողական և զեղագիտական նշանակության հազվագյուտ և էնդեմիկ բույսերն ու կենդանիները, բնության հուշարձանները կազմում են հանրապետության կենսաբանական ռեկրեացիոն ռեսուրսները և հիմք են տալիս զարգացնելու էկոլոգիական զբոսաշրջությունը:

Զբոսաշրջության զարգացման համար վճարող նշանակություն ունեն պատմամշակութային և հնագիտական արժեքները: ԼՂՏ ռեկրեացիոն ռեսուրսների շարքում կարևոր են նաև եկեղեցիները (Գանձասար, Դաղիվանք, Ամարաս, Սբ. Ամենափրկիչ եկեղեցին, կամ Ղազանչեցոց, Գուչավանք և այլն), թանգարաններն ու պատկերասրահները: Արցախի պետական պատմաերկրագիտական թանգարանը ԼՂՏ պատմամշակութային այն եզակի օջախն է, որտեղ ներկայացվում է Արցախի պատմությունը հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը: Արցախի պետական պատմաերկրագիտական թանգարանի ֆոնդապահոցներում և ցուցադրության մեջ ընդգրկված են ավելի քան 50 հազար պատմամշակութային արժեքներ [7]:

Արցախն ունի բացառիկ հնարավորություններ, որոնք մեր կարծիքով հեռանկարում թույլ կտան զարգացնել լեռնային պայմաններում ռեկրեացիոն զբաղմունքի բոլոր տիպերը՝ բուժկուրորտային, ռեկրեացիոն-առողջարանային, ռեկրեացիոն-սպորտային և ռեկրեացիոն իմացական: Զբոսաշրջային-մարզական ինդուստրիայի կազմակերպման համար շատ նպաստավոր պայմաններ ունեն Ղարաբաղի, Մռավի լեռնաշղթաների և դրանց բազմաթիվ լեռնաճյուղերի զագայթներն ու լանջերը, որոնք տարվա զգալի մասը ձյունածածկ են լինում և հարմար են նաև դահուկային մարզաձևերի զարգացման համար:

Այս տնասկեսից մեծ հետաքրքրություն են ներկայացնում նաև Թարթառ, Կարկառ, Իշխանազնտ, Վարանդա գետերի անդնդախոր կիրճերը, ջրվեժները, բազմատեսակ քարանձավային համալիրները:

Ոչ պակաս կարևոր գործոն է լեռնային հանգստի գեղագիտական արժեքը, էկոլոգիական և ճանաչողական տուրիզմի նկատմամբ հատկապես Սփյուռքի անընդհատ աճող հետաքրքրությունը: Արցախում այդպիսի տարածքներ կարող են հանդիսանալ Ղարաբաղի, Մոսկվի լեռնաշղթաների և դրանց բազմաթիվ լեռնաճյուղերի գագաթներն ու լանջերը, որոնք տարվա զգալի մասը ձյունածածկ են լինում և հարմար են նաև դահուկային մարզաձևերի զարգացման համար: Այս տնասկեսից մեծ հետաքրքրություն են ներկայացնում նաև Թարթառ, Կարկառ, գետերի անդնդախոր կիրճերը, ջրվեժները, բազմատեսակ քարանձավային համալիրները, Կուսանաց բնապատմական զոնան, Հունոտի կիրճի գոտին, Իշխանազնտի գոտին, Մեծ Թաղերից մինչև Ջրաշխարհ ընկած տարածքը, Վարանդայի գոտին, Դիզափայտից Խծաբերդ-Առաքյալ ընկած գոտին, Խաչենի գոտին: Այս բնագավառում կան մշակված ծրագրեր: Այդ առումով արժե նշել նաև բացառիկ ռեկրեացիոն և բնապահպանական նպատակների համար հատուկ պահպանվող տարածքների ազգային և բնական պարկերի, բնապատմական արգելոցների կազմակերպումը: Այսպիսիք Արցախի հանրապետությունում չորսն են.

Հունոտի կիրճ՝ պետական պատմական արգելոցի գեղեցկությունը այցելուներին զարմանալի զգացողություն է ներշնչում: Կիրճի 250մ բարձրությամբ պատերը, վեր են խոյանում բերդաքարաբ Ծուշիի հարավարևմտյան մասում գտնվող Կարկառ գետի վրա: Ճանապարհորդները, որոնք նախընտրում են ոտքով զբոսնել կիրճով ականատես են լինում Հունոտ գյուղի ավերակներին, հնամենի կամուրջների, ջրվեժների՝ Մամռտ քար ջրվեժ-տրավերտինային քարայր,որը Հունոտի կիրճի զարդն է, խիտ անտառների, դեռևս քարի դարում բնակելի եղած քարանձավների, որոնցից նշանավոր են Ալեքսանա Ղուզե կարան, Էծին կարան, Ավան հարյուրապետի կարան: Պատմական, բնական և ճարտարապետական բազում հրաշքներ հավաքվել են շուրջ 400 հեկտար մակերես ունեցող այս արգելոցում:

Տիգրանակերտ՝ գտնվում է Մարտակերտ քաղաքից 18կմ հեռավորության վրա՝ Վանքասար բլրի լանջին: Արցախի Տիգրանակերտը մեկն է այն երեք նույնանուն քաղաքներից, որոնք կառուցվել են Տիգրան Մեծի հրահանգով Ք.ա. I դարում:

Ազոլի քարանձավ՝ Ազոլս գյուղի մոտ գտնվող քարանձավը հանդիսանում է աշխարհում նախամարդու հնագույն ու հայտնի կայանատեղիներից մեկը: Հնագույն մարդկանց այդ կացարանը ունի բազմաթիվ մուտքեր ու ելքեր, լաբիրինթոսի նմանվող վեց մեծ սրահներ, որոնցից ամենախոշորի մակերեսը կազմում է 3000 քառ. մ: Այստեղ առաջին անգամ հենաբանական մշակույթի այսպես կոչված աշելյան շերտում հայտնաբերվել են ավելի քան 300 հազ. տարի առաջ այստեղ բնակված նախամարդու աշխատանքի և որսորդության քարե գործիքներ, որմնանկարներ, որոնք վկայում են՝ աշխարհը մշակույթի միջոցով ճանաչելու, նրա առաջին փորձերի մասին և այն ժամանակաշրջանի բուսական ու կենդանական աշխարհի մնացորդների գտածոներ:

Տողի մելիքական ապարանքում հայտնաբերված արձանագրության համաձայն այն կառուցվել է 1737թ.-ին՝Դիզակի մելիք Մելիք Եզանի կողմից: 2009 թվականից ապարանքը գտնվում է վերականգնման փուլում, իսկ արդեն 2014 թվականի հուլիսի 1-ց ԼՂՀ կառավարության որոշմամբ սկսեց գործել. Տողի մելիքական ապարանքի պետական պատմամշակութային արգելոցը [7]:

Տուրիստական լավագույն վայրեր ունենալը դեռևս բավական չէ նման տեսակի խնդիրների լուծման համար: Ռեկրեացիոն նպատակներով առանձնացված տարածքների համալիր օգտագործման արդյունավետությունը բարձրացնելու համար չափազանց կարևոր է զբոսաշրջության և էքսկուրսիոն երթուղիների ճիշտ ընտրությունը (հաշվի առնելով մարդկանց հետաքրքրությունները, ֆինանսական կարողությունները, տարվա եղանակը և այլն), բարեկարգ տրանսպորտային ուղիների, հարմարավետ և ժամանակակից տրանսպորտային և կապի միջոցների առկայությունը, սպասարկող բարեկիրթ անձնակազմը, հուշանվերների առկայությունը, զուտ ազգային ճաշատնասկների առաջարկը և այլն:

Արցախի հանրապետության համար կարելի է նախագծել հետևյալ հնարավոր երթուղիները.

- 1.Ստեփանակերտ-Մլիխթարաշեն-Քարին տակ-Ստեփանակերտ (Հունոտի կիրճ, Մամռտ քար, Ավան հարյուրապետի կարան, Ալեքսանա Ղուզե կարան, Էծին կարան)
- 2.Ստեփանակերտ-Մարտակերտ-Ստեփանակերտ (Շահ աղբյուր, Ճգնավորի կացարան, Խաչենի ջրամբար, Կավարտի սոսու պուրակ, Սպանդատելայի բրածո մնացորդների տեղամաս, Մարտակերտի բրածո մնացորդների տեղամաս)
- 3.Ստեփանակերտ-Աստղաշեն-Պատարա-Քոլատակ-Վանք (ծովաշուշաններ, ջրվեժներ, Կուսանաց լեռներ, Մեյդան, Հաչա ժայռ, Կաչաղակաբերդ, Խոխանաբերդ)

4.Մարտակերտ-Նաթերք-Դադիվանք (Մաղավուզի քարածխի հանք, Մարսանգի ջրամբար, Նաթերքի բազալտային պոմներ, Թարթառի հովիտ, Լևոնաբերդ)

5.Դադիվանք- Չուարի տաք ջուր (Դոխտի կիրճ, անտիկլիինալ, հանքային աղբյուրների շարք, լիստվենիտի, հասպիսի, օնիքսի հանքավայրեր)

6.Քարվաճառ-Եղեգնուտ-Քարվաճառ (Լև գետի կիրճ, սինկլինալ, Քարվաճառի պոմնածև բազալտներ, հրաբխային քարանձավներ և թունելներ, սիֆոնային տաք աղբյուր, տաք ջրեր)

7.Քարվաճառ-Ծար-Ձերմաջուր (բազալտային պոմներ, տաք ջրեր, քարանձավներ)

8.Բերձոր-Նոչանց-Լեռնագոգ (ողջաբերդի հասակի հրաբխանստվածքային շերտում առաջացած քարե սնկեր, քարե բուրգեր, քարայրներ, Նոչանցի ջրվեժների շարք)

9.Ստեփանակերտ-Սյստորաշեն-Ագոլս-Մեծ Թաղեր (Ագոլսի քարանձավ, Ծմանելի քարանձավ, սոսի ծառ)

10.Մեծ Թաղեր-Տող-Սարինշեն- Արփագյաղուկ (Դիզափայտ, Լսծաբերդ)

11. Մեծ Թաղեր-Տումի (Դլեն քար-քարանձավ)

12.Ստեփանակերտ-Ներհերի-Սոս (սոսու պուրակներ, Մաճկալաշենի քյահրիզ, Նարնաղբյուրի ոկլյուզային աղբյուր)

13.Ստեփանակերտ-Քասանի-Նարավ-Մյուրիշեն (Քասանի ժայռտ քարափեր, ամոնիտների կուտակումներ, Ավրուռ (խլանդական սպաթի հանքավայր), սպիտակ մարմարի հանքավայր)

14.Ստեփանակերտ-Սարգսաշենի-Ստեփանակերտ (ջրվեժների շարք, իսլանդական շպաթի հանքավայր, Թաս գետ)

15.Ստեփանակերտ-Լիսագոր- Քիրս (Վիշապաքար, պառկած ծալքեր):

Ռեկրեացիոն ռեսուրսների հաշվենկատ օգտագործումը, առանձնացված տարածքների համալիր օգտագործումը Արցախի Նանրապետության սոցիալ-տնտեսական զարգացման ռազմավարական ծրագրերի կարևորագույն մասն է, որի համար անհրաժեշտ է ցուցաբերել պատշաճ ուշադրություն, հաշվի առնելով բնական միջավայրի լանդշաֆտաէկոլոգիական առանձնահատկությունները, այսինքն առանձնացված տարածքների օգտագործման բոլոր միջոցառումները պետք է հիմնվեն լանդշաֆտային պլանավորման սկզբունքների վրա և լանդշաֆտի հորինվածքային առանձնահատկությունների վրա:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Առաքելյան Յու. Ա., Ռեկրեացիոն ռեսուրսների գնահատումը և տուրիզմի զարգացման հեռանկարները ԼՂՏ-ում, Աշխարհագրություն-99, գիտական աշխատանքների ժողովածու, Երևան, 1999թ., էջ 140-143
2. Գրիգորյան Ա. Վ., Տուրիզմի և հանգստի ինդուստրիայի զարգացման հեռանկարները Լեռնային Ղարաբաղի հանրապետությունում, ԲԱՆԲԵՐ Երևանի համալսարանի, Երևան, 1999թ., էջ. 192-194
3. Մարդկային զարգացման հիմունքներ, ուսումնական ձեռնարկ մագիստրանտների համար, գլխ. խմբ. Սարգսյան Ն. Լ, Երևան, 2004թ., էջ 117-119
4. Մնացականյան Բ. Պ., Առաքելյան Յու. Ա., ԼՂՏ ու հարակից տարածքների ջրագրությունը և ջրային հաշվեկշիռը, Երևան, 2005թ., էջ 66-75
5. Косолапов А. Б., Теория и практика экологического туризма, Москва 2005г., ст. 75-88
6. Самвелян Н. И., Погосян В. Х., Ландшафтная структура территории как основа территориального планирования хозяйственной деятельности, Ереван, 2010г., ст. 42-56
7. www.karabakh.travel

Տեղեկություններ հեղինակների մասին՝
 Գրիգորյան Անահիտ Վլադիմիրի,
 ա.գ.թ., դոցենտ, ԱրՊՀ
srbuhi.tovmassian@mail.ru
 Պոստոյան Ակսել Հարությունի
 աշխ.գիտ.թեկ., դոցենտ, ԵՊՀ

Նողվածը տպագրության է երաշխավորել խմբագրական կոլեգիայի անդամ, աշխ. գ. դ., Ա.Ռ. Ավագյանը:

ԺԳ.00.02

Աշխարհագրության դասավանդման մեթոդիկա

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ, ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՆՐԱՆՑ ԿԻՐԱՌՄԱՆ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ (ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑՈՒՄ)

Անի ՄԿՐՏՈՒՄՅԱՆ

Բանալի բառեր. Ուսուցման ժամանակակից տեխնոլոգիաներ, մանկավարժական համակարգ, ուսուցման ժամանակակից տեխնոլոգիաների կառուցվածք, աշխարհագրության ուսուցման գործընթաց, դպրոցականների հետազոտական կարողությունների զարգացում

Keywords: modern educational technologies, pedagogical system, the structure of modern educational technologies, the teaching process of Geography, development of students' research skills

Ключевые слова: современные педагогические технологии, педагогическая система, структура современных педагогических технологий, процесс преподавания географии, развитие исследовательских умений школьников.

СТРУКТУРА ПЕДАГОГИЧЕСКИХ ТЕХНОЛОГИЙ, ИХ ОСОБЕННОСТИ, АКТУАЛЬНОСТЬ ИХ ПРИМЕНЕНИЯ В ПРОЦЕССЕ ОБУЧЕНИЯ ГЕОГРАФИИ (В СРЕДНЕЙ ШКОЛЕ)

Ани Мкртумян

Одной из современных проблем, стоящих перед образованием, является развитие исследовательских умений школьников, что также важно в преподавании географии. Одним из способов преодоления последнего является использование современных педагогических технологий. Педагогические технологии имеют сложную структуру. Им свойственны концептуальность и новизна, системность, целостность, тотальность, воспроизводимость, эффективность и оптимизация.

В случае эффективного использования педагогических технологий можно получить гарантированные результаты.

THE STRUCTURE OF EDUCATIONAL TECHNOLOGIES, THEIR FEATURES, THE ACTUALITY OF THEIR IMPLEMENTATION IN THE PROCESS OF TEACHING GEOGRAPHY (IN THE SECONDARY SCHOOL)

Ani Mkrtumyan

One of the modern challenges facing education is the development of research skills of students of secondary schools, which is also important in the teaching process of Geography. The usage of modern educational technologies is a way to overcome the above-mentioned problem. Educational technologies have a complex structure. They are inherent in conceptuality and novelty, system, integrity, totality, reproducibility, efficiency and optimization.

The effective implementation of educational technology can provide guaranteed results.

Կրթության առջև ծագած ժամանակակից մարտահրավերներից է դպրոցականների հետազոտական կարողությունների զարգացումը, որը կարևորվում է նաև աշխարհագրության ուսուցման գործընթացում: Վերջինիս հաղթահարման ուղիներից է ուսուցման ժամանակակից տեխնոլոգիաների կիրառումը: Ուսուցման տեխնոլոգիաներն ունեն բարդ կառուցվածք: Նրանց բնորոշ են կոնցեպտուալությունն ու նորոյթը, համակարգային, ամբողջական և գումարային լինելը, վերարտադրողականությունը, արդյունավետությունը և լավարկումը:

Ուսուցման տեխնոլոգիաների արդյունավետ կիրառման դեպքում կարելի է ստանալ երաշխավորված արդյունքներ:

Գիտատեխնիկական առաջընթացը նպաստեց կրթության բնագավառում տեղեկատվական տեխնոլոգիաների ոչ միայն կիրառմանը, այլև ուսուցման ժամանակակից տեխնոլոգիաների առաջացմանը և զարգացմանը: Նշված միտումները շարունակվում են նաև արդի ժամանակներում: Կատարվում են արմատական որակական փոփոխություններ՝ կապված կրթության մեջ դասավանդողի և դպրոցականի դերակատարության փոփոխությունների հետ: Կարևորվում է ուսուցման գործընթացի մասնակիցների հարաբերությունների ազատականացումը և մարդասիրականացումը, հարկադրված ուսուցման մերժումը, տարբերակված ուսուցումը,

դպրոցականի կողմից ինքնուրույն աշխատանքների իրականացումը, երաշխավորված արդյունքների ապահովումը: Ուսումնական գործընթացի կենտրոնական դեմքն է դարձել ուսումնառողը [1, էջ 16]:

Ուսուցման ժամանակակից տեխնոլոգիաները հնարավորություն են տալիս ուսուցման գործընթացում մեր ուշադրության կենտրոնում պահել դպրոցականին, նրա անձը, հետաքրքրությունները, հոգեբանական և տարիքային առանձնահատկությունները, նպաստել նրա ինքնուրույն ուսումնառությանը, կատարել հետազոտական աշխատանքներ, որոնք կիրառելի են գործնականում [4]: Նկատենք, որ հետազոտական աշխատանքների կիրառումն ուսուցման գործընթացում ժամանակակից կրթության պահանջներից մեկն է [3, էջ 4]:

Հարկ է նշել, որ ուսուցման տեխնոլոգիաները սկզբնական շրջանում ներդրվել են բարձրագույն և մասնագիտական ուսումնական հաստատություններում, իսկ հանրակրթական համակարգում վերջիններս ներմուծվել են ավելի ուշ: Աշխարհագրության ուսուցման գործընթացում ևս ուսուցման ժամանակակից տեխնոլոգիաների ներդրումը, արդյունավետ կիրառումը և լավարկումը արդիական հիմնախնդիրներից են, որոնց հաղթահարման գործին է միտված սույն աշխատանքը:

Նշենք, որ <<ուսուցման տեխնոլոգիա>> հասկացությունը տարբեր հեղինակների մոտ սահմանվում է տարբեր կերպ: Ստորև ներկայացված բնորոշումը մեր պատկերացմամբ առավել ընդունելի է:

<<Ուսուցման տեխնոլոգիան կոնկրետ ուսումնադաստիարակչական նպատակների իրականացումն ապահովող և կրթական գործընթացի փոփոխվող պայմաններում, տրված ժամանակում կանխորոշված արդյունքների հասնելու երաշխիքների, ուսուցման մոդելիների մշակման և իրականացման տեխնոլոգիական գործընթացն է, ինչպես նաև հենց ուսուցման մոդելների նկարագրություն (տեխնոլոգիական հերթագայություն, քարտ, քարտեզ)>> [1, էջ 14]:

Ուսուցան տեխնոլոգիան մանկավարժական համակարգի բաղադրիչ է և կրթական տեխնոլոգիայի տարր, նրա գործընթացային մասը (Հավելված նկ. 1) [1, էջ 21]:

Մանկավարժական համակարգը (ՄՀ) փոխկապակցված միջոցների, մեթոդների և գործընթացների որոշակի ամբողջություն է, որոնք անհրաժեշտ են տրված որակներով անձի ձևավորման վրա կազմակերպված, նպատակաուղղված և կանխամտածված մանկավարժական ազդեցության համար:

ՄՀ համարվում է դասավանդողի, դպրոցականի, կրթական նպատակների, արդյունքների, կրթության բովանդակության, ուսուցման տեխնոլոգիաների և գնահատման բաղադրիչների համախումբը և գործիքակազմը, որոնք փոխկապակցված են միմյանց հետ:

Ուսուցման տեխնոլոգիան ՄՀ-ի բաղադրիչն է, և նրա կառուցվածքը կարելի է ներկայացնել երկու տարբերակով (աղյուսակ 1) ` ըստ այն կազմող տարրերի (մեթոդներ, ձևեր, եղանակներ, հնարներ, միջոցներ և ուսուցման, տեղեկատվության, դեկավարման ձևեր) և ըստ գործառնությունների (նախագծում, իրականացում, վերլուծություն, արժևորում և գնահատում) (Հավելված, նկ.1, 2):

Ուսուցման տեխնոլոգիայի կառուցվածքը. Աղյուսակ 1

Ըստ այն կազմող տարրերի	Ըստ գործառնությունների
<ul style="list-style-type: none"> ❖ մեթոդներ ❖ միջոցներ ❖ հնարներ ❖ եղանակներ ❖ ձևեր՝ ուսուցման, տեղեկատվության, կառավարման 	<ul style="list-style-type: none"> ❖ նախագծում ❖ իրականացում ❖ վերլուծություն ❖ արժևորում ❖ գնահատում

Ուսուցման ժամանակակից տեխնոլոգիաների վերնշաղ կառուցվածքն էլ պայմանավորում է նրանց բնորոշ առանձնահատկությունների առկայությունը, որոնք ներկայացված են ստորև.

1. **Կոնցեպտուալությունը և նորույթը**-ուսուցման տեխնոլոգիան պետք է հենվի գիտական հասկացությունների որոշակի շրջանակի, հայեցակարգի վրա (ներառյալ փիլիսոփայական, հոգեբանական կամ դիդակտիկ գաղափարախոսությունը), ունենա իրական առավելություններ ավանդական ուսուցման նկատմամբ: Այս առանձնահատկությունը կարևորվում է հատկապես նախագծման փուլում, երբ ընտրվում է ուսուցանվող նյութի բովանդակությունը, գիտական հասկացությունների շրջանակը, սահմանվում ուսուցման նպատակները, պլանավորվում արդյունքները:

2. **Համակարգային, ամբողջական և գումարային** (ինտեգրվողականություն) լինելը-ուսուցման տեխնոլոգիան պետք է օժտված լինի համակարգի բոլոր հայտանիշներով, այդ թվում՝ գործընթացի տրամաբանական հաջորդականությամբ, նրա բոլոր փուլերի փոխկապակցվածությամբ, միավորելով

նպատակը, միջոցները, մեթոդները, ուսուցման կազմակերպման պայմանները մեկ համակարգում, և ապահովվի այդ համակարգի ամբողջական գործառնությունը և իրականացումն ուսուցման գործընթացում: Այս առանձնահատկությունը դրսևորվում է ինչպես նախագծման, այնպես էլ՝ իրականացման փուլում, ապահովում է սահմանված նպատակների իրականացում և նախատեսված արդյունքների ստացում:

3. Վերարտադրողականությունը- ուսուցման տեխնոլոգիայի կիրառումն երաշխավորում է ուսուցման նպատակների իրականացում միատեսակ կրթական հաստատություններում ուսուցման գործընթացի այլ մասնակիցների հետ ևս, եթե անգամ կան տարբեր նախադրյալներ (ուսումնառողների պատրաստվածության աստիճան, դասավանդման որակավորում, նյութատեխնիկական բազա և այլն): Այս պարագայում ենթադրվում է, որ պետք է հետևել տվյալ ուսուցման տեխնոլոգիային համապատասխան ընթացակարգերին, տեխնոլոգիական գործողություններին:

4. Արդյունավետությունը և լավարկումը- ենթադրում է, որ նոր տեխնոլոգիայի վերարտադրության ժամանակ պետք է ձեռք բերվի որոշակի ցուցանիշներ, պետական կրթական չափորոշիչների իրականացման երաշխիքներ, մարդկային, տեխնիկական, ֆինանսական հնարավորությունների լավարկված իրականացում: Արդյունավետությունը գնահատվում է ստացված արդյունքների վերլուծության և արժևորման արդյունքում՝ նպաստելով ուսուցման գործընթացի ամբողջական անդրադարձին, իրականացված նպատակների գնահատմանը, ուսուցման տեխնոլոգիայի կատարելագործմանը:

Ուսուցման տեխնոլոգիայի արդյունավետ իրականացման գրավականն է հստակ նպատակների սահմանումը՝ խուսափելով երկիմաստություններից: Նպատակները պետք է լինեն իրատեսական և կոնկրետ, որոնց հասնելու համար պետք է առաջնորդվել տեխնոլոգիական համապատասխան գործողություններով: Պետք է պլանավորել ուսումնական և դաստիարակչական այնպիսի գործընթացներ, որոնք կապահովեն տրված պայմաններում սահմանված նպատակների իրագործում: Կարևոր է նաև նշված գործընթացների վերահսկողությունը և գնահատումը: Գնահատման արդյունքները տեսանելի և չափելի դարձնելու նպատակով կիրառվում են թվանշային (միավորային կամ քանակական) գնահատման առաջադրանքներ և անել միանշանակ եզրակացություններ նպատակի իրականացման աստիճանի վերաբերյալ: Հետևաբար, նպատակահարմար է կրթական նպատակները ձևակերպել դպրոցականի ուսումնական (կրթական) արդյունքների միջոցով:

Աշխարհագրության ուսուցման գործընթացում ևս կիրառելի են ժամանակակից ուսուցման տեխնոլոգիաները, որոնք հնարավորություն են տալիս դպրոցականին զինել քսանմեկերորդ դարին համարժեք գիտելիքներով, կարողություններով ու հմտություններով, որոնց շարքում են քննադատական և ստեղծագործական մտածողության, հետազոտական կարողությունները և հմտությունները [3, 5]: Հաշվի առնելով այս հանգամանքը՝ստորև կներկայացնենք վերջիններիս զարգացմանն ուղղված ուսուցման նպատակները (աղյուսակ 3):

Աղյուսակ 2-ի վերլուծությունից պարզ է դառնում, որ այստեղ առանձնահատուկ ուշադրության են արժանանում ուսումնառողների ինքնուրույն, ստեղծագործական հետազոտական գործունեությունը, անձանոթ իրավիճակներում կողմնորոշվելու և լուծումներ գտնելու կարողությունները: Հետևաբար՝հետազոտական կարողությունների զարգացումը առավել բարդ կրթական նպատակներից է, որը ենթադրում է ուսումնառողների հետազոտական աշխատանքների իրականացում, յուրացրած գիտելիքների փոխակերպում:

Ուսումնառողների կողմից կրթության բովանդակության յուրացման չորրորդ մակարդակը.

Աղյուսակ 3

Ուսուցման նպատակները	
<ul style="list-style-type: none"> Մովորեցնել ինքնուրույն առանձնացնել և լուծել հիմնախնդիրները, ձևակերպել/ընտրել հետազոտական հարցը և մշակել հետազոտության պլանը, իրականացնել հետազոտական գործունեությանը, Նախապատրաստել անձանոթ իրավիճակներում գործունեության: 	Դասավանդողը կառավարում է ուսումնառողների ինքնուրույն ուսումնական գործունեությունը:
Արդյունքները	
<p>Ուսումնառողները</p> <ul style="list-style-type: none"> Կարողանում են ինքնուրույն առանձնացնել հիմնախնդիրները, Կարողանում են գտնել հակասությունների հաղթահարման 	Ուսումնառողները <ul style="list-style-type: none"> Իրականացնում են հետազոտական արգասաբեր

<p>ճանապարհներ հետազոտական խնդիրների լուծման համար,</p> <ul style="list-style-type: none"> • Գտնում և օգտագործում են նոր տեղեկատվություն, • Հետազոտում են, հայտնաբերում, • Գիտելիքները և կարողությունները հմտորեն օգտագործում են անձանոթ իրավիճակներում: 	<p>գործունեություն</p> <ul style="list-style-type: none"> • Փոխակերպում են ունեցած գիտելիքները:
---	--

Աղբյուրը [1, էջ 29-31]:

Ինչպես հայտնի է, ուսուցման տեխնոլոգիան կրթական գործընթացի մասնակցիների փոխազդեցության միջոցներն ու եղանակներն են (գործիքակազմ և տեխնիկա): Մեթոդները, միջոցները, ձևերը, եղանակները, հնարներն ուսուցման տեխնիկայի բաղադրիչներն են, որոնք ընտրվում և օգտագործվում են

- ✓ կրթական նպատակներին
- ✓ ուսումնական տեղեկատվության բովանդակությանը և բարդությանը,
- ✓ ուսումնառողների տարիքային և ֆիզիոլոգիական առանձնահատկություններին,
- ✓ դասավանդողի մանկավարժական վարպետությանն ու անհատական առանձնահատկություններին,
- ✓ ուսումնական հաստատությունների նյութական հագեցվածությանը համապատասխան:

Ուսուցման տեխնոլոգիայի կարևոր բաղադրիչ են նաև տեղեկատվական և ղեկավարման միջոցներն ու եղանակները (դիագնոստիկական և վերահսկողությունը), որոնք հնարավորություն են տալիս ստանալ օպերատիվ տեղեկատվություն, ընդունել անհրաժեշտ որոշումներ ճիշտ ժամանակին, կատարել շտկումներ վերջնական արդյունքների հասնելու գործընթացում, որոշել ստացած արդյունքների և դրված նպատակների համապատասխանության աստիճանը:

Կրթության, դաստիարակության ելակետային և ընթացիկ դիագնոստիկական կրթական գործընթացի նախագծման բոլոր հանգամանքների պարզաբանումն է, դրա ճշգրիտ որոշումը ստացված արդյունքներով ադեցությունը ժամանակին, դրա արգասավորության (սահմանված նպատակների իրականացման աստիճանը) հետ կապված ընթացքի նկարագրությունը և վերլուծություն:

Ըստ Հ. Պետրոսյանի՝ դիագնոստիկական իր մեջ ընդգրկում է

- ❖ վերահսկողություն – ազդեցություն
 - _ չափանշում
 - _ գնահատում
- } ստուգում

- ❖ վիճակագրական տվյալների կուտակումը
- ❖ դրանց վերլուծությունը
- ❖ դինամիկայի, միտումների բացահայտումը
- ❖ իրադարձությունների հետագա արգացման կանխատեսումը:

Ուսուցման տեխնոլոգիան նախագծելիս ընտրվում են չափանիշները, որոնք անհրաժեշտ են վերահսկման համար, հայտանիշները՝ դիագնոստիկայի իրականացման համար, որոշվում են դիագնոստիկայի ենթարկվող որակի ինտենսիվության չափման և արժևորման մեթոդիկաների հավաքածուն է:

Վերահսկողությունն ենթադրում է ուսումնառողների գիտելիքների, կարողությունների, հմտությունների, իրազեկությունների վրա ազդեցություն, դրանց չափանշում, արժևորում և գնահատում:

Ստուգումն ապահովում է դասավանդողի հետադարձ կապն ուսումնառողների հետ և ուսումնական նյութի յուրացման աստիճանի մասին օբյեկտիվ տեղեկատվության ստացումը:

Ուսուցման տեխնոլոգիայի նախագծման ժամանակ մենք որոշում ենք

1. Վերահսկողության տեսակները

- ❖ անհատական և ճակատային հարցում, նախագծի սահմանում կատարված աշխատանքի մասին հաշվետվություն, քննարկում, գրույց,
- ❖ ստուգողական և ստեղծագործական աշխատանքներ,
- ❖ գրաֆիկական աշխատանք, լաբորատոր և փորձնական աշխատանք, պահանջվող փորձարարական խնդիրների լուծում,
- ❖ լատենտողական վերահսկողություն,
- ❖ թեստերի և թեստային առաջադրանքների կատարում,
- ❖ անհատական աշխատանքների և նախագծերի կատարում,
- ❖ գիտական գրականության և սկզբնաղբյուրների հետ աշխատանք,

- ❖ հետազոտական և վերլուծական աշխատանքներ,
- ❖ ինքնավերահսկում
- ❖ ավարտական քննություններ

2. Վերահսկողության ձևերը

- նախնական
- ընթացիկ
- թեմատիկ
- միջանյալ
- ամփոփիչ
- դասավանդման և ուսումնառության գործընթացների վիճակի արդիական վերահսկողություն

Հիմնական դպրոցում աշխարհագրության ուսուցման գործընթացում կիրառվող վերահսկողության տեսակներին կարելի է ավելացնել հետևյալը.

1. խմբային հարցում,
2. զեկուցում,
3. սահիկաշարի բանավոր ներկայացում,
4. քարտեզով աշխատանք (նաև ուրվագծային քարտեզով),
5. անհատական աշխատանքների կատարում,
6. նախագծերի ստեղծում և ներկայացում,
7. հետազոտական աշխատանքներ

Վերահսկողության ձևերի մեջ կարելի է ընդգրկել ուսուցանող (ձևավորող) գնահատումը [2, էջ 67]:
Ուսուցման տեխնոլոգիայի գործընթացն ընդգրկում է հետևյալ փուլերը (տեխնոլոգիական գործողությունները) [1, էջ 35].

1. նախագծում (նախագծային կառուցահատված),
2. կատարում կամ իրականացում (կատարողական կառուցահատված),
3. վերլուծություն, արժևորում և գնահատում (գնահատման վերլուծական կառուցահատված) (Հավելված նկար 4):

Նախապատրաստման փուլում լուծվում են այնպիսի կարևոր խնդիրներ, ինչպիսիք են

- նպատակադրումը,
- պայմանների դիագնոստիկական (սկզբնական և ելակետային պայմաններ),
- արդյունքների կանխատեսում,
- վերջնական արդյունքների ձևակերպումը:

Նախագծային կառուցահատվածում

1. կատարվում է ուսուցման տեխնոլոգիայի ժամանակային պլանավորում,
2. ուսումնական գործընթացի յուրաքանչյուր միավորի համար ձևակերպվում են մասնավոր նպատակներ և արդյունքներ,
3. կառուցվում և/կամ լավարկվում է ուսուցման տեխնոլոգիան՝ ընտրելով համապատասխան մեթոդներ, մանկավարժական հնարներ, ուսուցման կազմակերպման ձևեր և միջոցներ,
4. կառուցվում է տեղեկատվական և դեկլարման համակարգը,
5. իրականացվում է պլանավորում, կազմվում են ուսումնական պարապմունքների տեխնոլոգիական հերթագայության քարտեզը (դասի պլանները),
6. մշակվում է մանկավարժական մշտադիտարկում:

Ուսուցման **տեխնոլոգիայի կատարարողական** կառուցահատվածը նախագծային փուլում սահմանված նպատակների իրականացմանն ուղղված գործընթացն է:

Այս փուլում ներառված է հետևյալը.

- առաջիկա գործողությունների նպատակների և սպասվող արդյունքների պարզաբանում ուսումնառողների համար,
- դասավանդման և ուսումնառության ընտրված մեթոդների, միջոցների և ձևերի օգտագործում,
- ուսումնառողների ուսումնական գործունեության խթանման տարբեր միջոցների կիրառում,
- դասավանդման և ուսումնառության գործընթացի ընթացիկ որակի գնահատում և վերահսկողություն, դրանց վերլուծություն և շտկում,
- հետադարձ կապ:

Ուսուցման տեխնոլոգիայի **գնահատման-վերլուծական** կառուցահատվածում կիրառվում են գնահատման տարբեր գործիքներ՝ պարզելով կրթական նպատակների և կրթական գործընթացների մասնակիցների գործունեության արդյունքների համապատասխանության աստիճանը (արգասարքերությունը):

Քանի որ ժամանակակից կրթական տեխնոլոգիաները հիմնվում են տեղեկատվական նորագույն տեխնոլոգիաների և եղանակների օգտագործման վրա, ապա ժամանակակից ուսուցման գործընթաց իրականացնելու համար անհրաժեշտ է բարձրացնել դասավանդողների որակավորումը, տեղեկատվական տեխնոլոգիաներից օգտվելու կարողությունները: Ասվածը սերտորեն առնչվում է հետազոտական կարողությունների զարգացմանը և ս, քանի որ այս կարողությունները բաղկացած են երկու խմբից՝ տեղեկատվական գրագիտության և մեդիա գրագիտության կարողություններ [2, էջ 30]:

Հետևաբար, ժամանակակից ուսուցման տեխնոլոգիաների նախագծման և իրականացման հարցում կարևոր գործոն է դասավանդողի մասնագիտական պատրաստվածությունը, մասնավորապես՝ նորագույն տեղեկատվական տեխնոլոգիաների տիրապետումը, կիրառումը, ինչը հնարավորություն է տալիս ուսուցման տեխնոլոգիաներն ազատորեն ներդնել ուսուցման ավանդական համակարգ՝ փոփոխելով ուսուցման գործընթացի և ուսումնառողների նկատմամբ մոտեցումները, մասնավորապես՝


- կրթական գործընթացում կենտրոնական դեմքը հանդիսանում է ուսումնառողը, ոչ թե դասավանդողը,
- գլխավորն ուսումնական գործունեությունն է, և ոչ թե դասավանդումը,
- նախապատվությունը տվում է գիտելիքների ինքնուրույն ձեռքբերմանը և հատկապես կիրառմանը, և ոչ թե պատրաստի գիտելիքների մտապահմանը ու վերարտադրմանը,
- անհրաժեշտ է հաշվի առնել դպրոցականի անձի ֆիզիկական, մտավոր, բարոյական զարգացման ամբողջական և ոչ թե առանձին որակների յուրահատկությունները:

Այսպիսով՝ ժամանակակից ուսուցման տեխնոլոգիաների կիրառման շնորհիվ արմատապես փոխվել է դպրոցականի դերակատարությունը, նրա գործունեության բնույթը, ուսումնական գործընթացից ակնկալվող արդյունքները՝ հիմնական շեշտադրում կատարելով դպրոցականի ինքնուրույն ճանաչողական ուսումնական գործունեության վրա, գործնականում կիրառելի գիտելիքների ձեռքբերման վրա և հաշվի առնելով նրա անձնային, տարիքային և հոգեբանական առանձնահատկությունները:


ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Պետրոսյան Հ.Հ. Ուսուցման ժամանակակից տեխնոլոգիաներ: Եր.-ՋՈՆ, 2008-316 էջ
2. From principles into practice: MYP Published on behalf of the International Baccalaureate Organization, Geneva, 2014, p. 138.pdf
3. MYP: Individuals and societies guide, Published on behalf of the International Baccalaureate Organization, Geneva, 2014, p. 64, pdf
4. <http://ext.spb.ru/2011-03-29-09-03-14/79-genera-didactic-techniques/4899-2014-03-23-16-33-40.html>
5. <http://nsportal.ru/blog/shkola/obshcheshkolnaya-tematika/all/2011/11/04/sovremennye-pedagogicheskie-tehnologii>

Հավելված




Նկար 1. Մանկավարժական համակարգի մոդելը




Նկար 2. Ուսուցման տեխնոլոգիայի կառուցվածքը՝ ըստ այն կազմող մասերի

Ուսուցման տեխնոլոգիա



Նկար 3. Ուսուցման տեխնոլոգիայի կառուցվածքը՝ ըստ գործառնությունների

Դասավանդման գործընթացը



Նկար 4. Ուսուցման տեխնոլոգիայի գործառնային կառուցահատվածը

Տեղեկություններ հեղինակի մասին՝

Մկրտումյան Անի Սեյրանի

Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ աշխարհագրության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի ասպիրանտ, <<Շիրակացու ճեմարան>> միջազգային գիտակրթական համալիր>> ՓԲԸ, աշխարհագրության ուսուցչուհի,

Գիտական ղեկավար՝ Խ.Աբովյանի անվան ՀՊՄՀ աշխարհագրության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի պրոֆեսոր, աշխ. գ.թ.Մուրադյան Յուրիկ Հայկազի

Էլ.հասցե՝ animyan@mail.ru

Նողվածը տպագրության է նրաշխարհում խմբագրական կոլեգիայի անդամ, աշխ. գ. դ., Ա.Ռ. Ավագյանը:

ՀՏԴ 338.4

Տնտեսական աաշխարհագրություն

**ՄԵՐՎԻՍԻ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ,
ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ ԵՎ ՄԵԹՈԴՆԵՐԸ
Ա.Ռ. Ավագյան**

Բանալի բառեր. – մեթոդ, մոտեցում, մեթոդաբանություն, սերվիս, աշխարհագրություն, համակարգ, շրջան, օբյեկտ

Ключевые слова: методология, подходы, методы, сервис, география, гуманизм, комплекс, район.

Key words: Methodology, Approaches, Methods, Service, Geography, Humanistic, Complex, Circulation.

МЕТОДИКА, ПОДХОДЫ И МЕТОДЫ ГЕОГРАФИИ СЕРВИСА

А.Р.Авагян

В основе методики географии сервиса лежит общее мышление, философия жизни. Для превращения этой теории в практику применяются следующие подходы: позитивизм, гуманистические, структурные и системные формы, географическая информация, методы компьютерного, математического моделирования и районирования.

METHODOLOGY APPROACHES AND METHODS OF GEOGRAPHY OF SERVICE

A.R.Avagyan

The main methodological approaches for Geography of Service are Positivism, Humanism and Structuralism which have been applied by using GIS, mathematical modeling, zoning and other methods. The problem is the selection of appropriate methodology, approaches and methods wich allows to create harmonized and scientifically approved research objects for Geography of Service.

Սերվիսի աշխարհագրության մեթոդաբանության հիմքում հասարակական ընդհանուր մտածելակերպն է, ապրելու փիլիսոփայությունը: Մեթոդաբանությունը ուսմունք է գիտական մեթոդի մասին, կամուրջ է ստեղծում գիտության որպես իրական աշխարհի մասին, գիտելիքների ամբողջության և փիլիսոփայության միջև:

Մեթոդաբանությունը հասարակության աշխարհայացքն է՝ մոտեցումը, իրերի և երևույթների բովանդակությունը, գործունեությունը, մարդու ապրելակերպին հարմարեցնելու անհրաժեշտությունը:

Մեթոդաբանության հենքի վրա կառուցվում են գիտական մոտեցումները:

Ջ.Ջոնսոտոնը սոցիալական աշխարհագրության մեջ առանձնացնում է մոտեցման երեք ձևեր՝ **պոզիտիվիզմի, հումանիստական և կառուցվածքային:** [5, էջ 268]

Պոզիտիվիզմը ճշմարիտ և իրական իմացության միակ աղբյուրը համարում է կոնկրետը (Էմպիրիկը): Այն գիտական ճանաչողության աղբյուր է համարում փորձը, որը հաստատում է իրականը, դրականը: Ըստ Լ.Հ.Վալեսյանի պոզիտիվիզմը գիտական տեսություններն ու օրենքները համարում է սոսկ Էմպիրիկ փաստերի ընդհանրացում [3, էջ 54]:

Պոզիտիվիզմը միավորում է տեսականը և գործնականը և տեսության կողմից առաջադրվածը ապացուցում է փորձի միջոցով, բացահայտվում է իրերի և երևույթների իրական կապերը: Պոզիտիվիզմը վարկածից դեպի գիտականը տանող ուղին է: Այս մոտեցումը գիտությանը օգնում է կատարելու բացահայտումներ, բացահայտելու ավելի կայուն սիստեմներ, սահմանելու այդ սիստեմները, կառավարող օրենքները:

Հումանիստական մոտեցումը ուսումնասիրում է անհատի գործունեությունը, որը ընդունվում է որպես էտալոն: Ըստ դրա էլ ուսումնասիրվում է գիտության և հասարակական աշխարհայացքի միասնությունը:

Հասարակական աշխարհայացքի մտածելակերպի ճշմարտացիության վրա հենվում են գիտական դրույթները, իսկ անհատի գործունեությունը իր հերթին կապվում է հասարակական գաղափարի վրա:

Հումանիստական մտածելակերպը միմյանց է միացնում հասարակական գաղափարախոսությունը, անհատի մտածելակերպը և դրանց հենքի վրա հյուսված գիտությունը, ստեղծում է կայուն եռադաշնություն և պայմաններ գիտահետազոտական աշխատանքների իրագործման համար:

Կառուցվածքային մոտեցումը ուսումնասիրում է հասարակության բազային պրոցեսները: Այն հնարավորություն է տալիս վերլուծության ենթարկել բարդ, բազմամակարդակ սոցիալ-տնտեսական կառուցվածքները, որն իր հերթին հնարավորություն է տալիս նպատակային ձևով կազմակերպել արտադրության մասնագիտացումը, հասարակական կյանքի տարածքային ձևերը, բազիսային ճյուղերը և ենթակառուցվածքները:

Կառուցվածքային մոտեցումը կարևոր նշանակություն ունի որոշելու սերվիսի ոլորտի բարդ կառուցվածքը, նրա կապը տնտեսության մյուս ոլորտների հետ: Բազային ճյուղերի և ենթակառուցվածքների փոխկապակցությունները, գիտատեխնիկական ներդրումների տնտեսավարման սպասարկման գործունեության էֆեկտիվությունը, կանխագուշակել զարգացման հեռանկարները: Կարևոր են նաև տարբեր սիստեմների միջև եղած կապերը, հիերարխիկ կարգը:

Կառուցվածքային մոտեցման շարունակությունն է կազմում համակարգայինը:

Համակարգային մոտեցումը հնարավորություն է տալիս ոչ միայն ամբողջական պատկերացում կազմել սերվիսային ոլորտի մասին, այլ ծառայում է գործնական միջոց սերվիսի ոլորտի կազմակերպման և կառավարման համար:

Այս մոտեցումները իրականության են վերածվում (կիրառական բովանդակություն են ստանում) որոշակի մեթոդների միջոցով:

Ջ.Ջոնստոնի կարծիքով գիտական մեթոդը հիմնված է իրական աշխարհի վրա, որտեղ տիրում է կարգուկանոն և սպասում է իր հայտնաբերմանը: Գիտնականը վերցնում է որևէ վարկած և մոդելի ստեղծման միջոցով փորձում է ստանալ իրական աշխարհի պատկերը, այնուհետև վիճակագրական նյութերի միջոցով ավելի է ամրագրում այդ պատկերը մոտեցնելով իրականությանը: Իհարկե գլխավորը ոչ թե իրականության պատկերումն է, այլ այդ իրականությանը հասնելու գործունեության միջոցը [5, էջ 268]:

Մեթոդը որպես ճանաչողության միջոց այն եղանակն է, որով մտածողության մեջ վերարտադրվում է ուսումնասիրվող առարկան [2, էջ 288]: Մեթոդը դեպի նպատակը գնացող ճանապարհն է, ուղին, նպատակին հասնելու միջոց: Ըստ Պիտեր Մյուլերի աշխարհագրության մեջ նպատակային է օգտագործել քանակական, քարտեզագրական և դաշտային մեթոդները [1, էջ 19]: Էդուարդ Տեյնթը առավելություն է տալիս վերլուծական, աղբյուրագիտական, ակնարկային մեթոդներին [1, էջ 19]: Ա.Վորնոնովի մոտ կարևորը համեմատական աշխարհագրական վիճակագրական մեթոդներն են (1, էջ 20), Գ.Դուբինսկին և Ա.Ռիմանը առաջ են մղում փորձարարական, մաթեմատիկական մեթոդները, Բ.Ռոդոմանը՝ քարտեզագրական մեթոդը [1, էջ 20]:

Մ.Մ.Գոլուբչիկը, Է.Լ.Ֆայբուսովիչը և Ա.Ս.Նոսոնովը սոցիալ-տնտեսական աշխարհագրության հետազոտությունների ընթացքում հաճախակի օգտագործվող մեթոդները համախմբում է հետևյալ խմբերի մեջ.

1. Աշխարհագրական տեղեկատվության ստացման և նախնական մշակման մեթոդներ
2. Աշխարհագրական տեղեկատվության համակարգման և ընդհանրության վերլուծության մեթոդներ
3. Մաթեմատիկական մոդելավորման մեթոդներ [4, էջ 36-59]

1. Աշխարհագրական տեղեկատվության ստացման և նախնական մշակման մեթոդներ

Աշխարհագրական տեղեկատվության ստացման և նախնական վերամշակման խմբի մեջ են մտնում դիտարկումների, դաշտային հետազոտությունների, հեռահաղորդակցության և բնակչության հարցման մեթոդները:

ա/ Դիտարկումների մեթոդի միջոցով դիտվում, ուսումնասիրվում է օբյեկտը իր ամբողջականության մեջ: Այդ ընթացքում մտածին կերպով նախնական ընտրության են

ենթարկվում օբյեկտի այն տարրերը, նրա ներսում կատարվող այն երևույթները, որոնք առավել կարևոր նշանակություն ունեն օբյեկտի կառուցվածքի մեջ:

բ/ Դաշտային հետազոտությունների մեթոդի միջոցով փաստական նյութեր են հավաքվում արդեն ընտրված տարրերի և երևույթների վերաբերյալ, ճշգրտվում են դիտարկումների ընթացքում ունեցած փաստական նյութերը, երկրորդ անգամ կատարվում է ընտրություն, վերցնելով ամենակարևորները, ամենակայունները:

գ/ Հեռահաղորդակցության մեթոդի միջոցով փաստական նյութեր են հավաքագրվում ավելի հեռավոր օբյեկտի կամ մոտիկ գտնվող օբյեկտի արտաքին կապերի վերաբերյալ:

զ/ Բնակչության հարցման մեթոդի ընթացքում կազմվում են առանձին հարցաթերթիկներ, որոնց միջոցով բնակչության մեջ կատարվում են հարցումներ հետազոտվող օբյեկտի գործունեությունը ապահովող առավել կարևոր երևույթների մասին, իմանալու բնակչության կարծիքները:

2. Աշխարհագրական տեղեկատվության համակարգման և ընդհանրության վերլուծության մեթոդներ:

Համակարգման մեթոդի ժամանակ կատարվում է ունեցած փաստական նյութերի համակարգում, հետազոտվող օբյեկտի տարրերի հիերարխիկ դասակարգում ըստ իրենց կարևորության:

Վերլուծության մեթոդի ժամանակ կատարվում է արդեն առկա որոշակի կառուցվածք ունեցող օբյեկտի բոլոր տարրերի, օբյեկտի ներսում երևույթների, այլ օբյեկտների հետ ունեցած փոխկապակցությունների, ներքին կապերի վերլուծություն:

Աշխարհատեղեկատվական մեթոդների միջոցով արտացոլվում են տեղեկատվական նյութերի հոսքը, ընդլայնում տեղեկատվությունների դաշտը ավելի բարենպաստ պայմաններ ստեղծելու շուկայական փոխհարաբերությունների կարգավորման, հեռանկարային ծրագրերի կազմման համար:

Տեղեկատվության փոխանցման, ստացման համար լայնորեն օգտագործվում է web (www) մեթոդը, որը կապի միջոց է համարվում ինչպես կազմակերպության (ընկերության) ներսում, այնպես էլ կազմակերպությունների և նրա սպառողների, հաճախորդների և գործընկերների միջև: Web-ը ոչ մեծ ընկերություններին հնարավորություն է տալիս իրենց մասին հայտնել համացանցում, իսկ խոշոր ընկերություններին այն հնարավորություն է ստեղծում որևէ նախահծի ընթացիկ կարգավիճակի մասին տվյալները հասանելի դարձնել տվյալ ցանցում բոլոր աշխատակիցներին:

Web տեխնոլոգիայի շնորհիվ սպասարկումը ինչպես նաև կառավարումը դառնում է ավելի արդյունավետ: Մեծանում են մեծ աշխարհագրություն ունեցող ընկերությունների կամ նրանց գործընկերների համագործակցության հնարավորությունները:

Հեռահաղորդակցության տեխնոլոգիայի կիրառումը պոտենցիալ հաճախորդին տեղեկատվություն է նրանց հետաքրքրող ցանկացած ապրանքի, ծառայության մասին, նրան տալով արագ և անսխալ ընտրելու հնարավորություն:

Հեռահաղորդակցության միջոցով հնարավոր է արագ կապ հաստատել պոտենցիալ հաճախորդի հետ, նրանցից իմանալ սպասարկման որակի, մատուցվող ծառայությունների և բողոքների մասին:

3. Մաթեմատիկական մոդելավորման մեթոդը հնարավորություն է տալիս պատկերացում կազմել հետազոտվող օբյեկտների վերաբերյալ: Մոդելի կազմման ժամանակ փորձաքննություն անցկացնել այլևս պետք է:

Ըստ Դ.Հարվեյի մաթեմատիկայի լեզուն թույլ է տալիս ստանալ այնպիսի տեղեկատվություն, որը հնարավոր չէ ստանալ մեկ այլ ձևով: Մաթեմատիկական ավելի հեշտ հաշվի է նստում մեծ քանակությամբ խնդիրների հետ, իսկ կիրառական մաթեմատիկական հնարավորություն է տալիս ուսումնասիրել երևույթների որակական առանձնահատկությունները, որը չի կարող բացահայտել մեկ այլ գիտություն [6, էջ 173]:

Մաթեմատիկական մեթոդները, թույլ են տալիս կանխատեսել մարդու կողմից բնատարածքային համալիրների վրա թողած ազդեցությունը (Դուրինսկի, էջ 20):

Աշխարհագրական ցանկացած հետազոտություն ավարտվում է շրջանացմամբ: Ինչպես Բ.Խորեն է նշում «Աշխարհագրության մեջ ընդհանրացման բարձրագույն մակարդակը համարվում է շրջանացումը: Աշխարհագրությունը շրջանացման և քարտեզների կազմման մեթոդների և մոտեցումների գլխավոր գեներատորն է [1, էջ 23]:

Շրջանացումը հնարավորություն է տալիս մեկ ամբողջականության մեջ դիտել որոշակի տարածքի սոցիալ-մշակութային ծառայությունների, զբոսաշրջության դեստինացիաները և արտադրողական ուժերը: Շրջանացումը հնարավորություն է տալիս բացահայտելու մարդկանց պահանջմունքների բավարարման դեռևս չօգտագործվող երևույթներ, կարողություններ: Այն կապ է ստեղծում արտադրական և ոչ արտադրական ոլորտի միջև:

Շրջանացումը մեկ ընդհանրության մեջ է տեսնում մարդ-մարդ, մարդ-հասարակություն, մարդ-հասարակություն-բնություն փոխհարաբերությունները: Շրջանացումը հնարավորություն է տալիս կառուցել հասարակական կյանքի այնպիսի ձև, որտեղ մարդը իրեն զգա բնության մի մասնիկ (բնության զավակ) լինեն ներդաշնակ մարդկային հարաբերություններ, ապահով սոցիալական պայմաններ, կայուն մարդկային զարգացման հնարավորություններ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Աշխարհագրության արվեստն ու գիտությունը, Ե. 2007, էջ 19.20,23
2. Փիլիսոփայական բառարան, Ե., 1976, էջ 288
3. Վալեյան Լ.Հ. Աշխարհագրական գիտությունների մեթոդաբանական և տեսական հիմունքներ, Ե. 2004, էջ 54
4. Джонстон Дз. География и географы, М. 1987, 268 с.
5. Голубчик М.М., Файбусович Э.Л., Хосонов А.М. Экономическая и социальная география, М. 2003
6. Харвей Д. – Модели развития пространственных системы в географии человека. В кн. Модели географии, М. 1971, 173 с.

Տեղեկություններ հեղինակների մասին՝

Ավագյան Ա.Ռ. աշխ.գիտ.դոկտոր, պրոֆեսոր ԵՊՀ սերվիսի ամբիոն

Բասսամի Մ., ԵՊՀ, ասպիրանտ սոցիալ-տնտեսական աշխարհագրության ամբիոն

Նորվաճը տպագրության է երաշխավորել խմբագրական կոլեկիայի անդամ, աշխ. գ. դ., Ա.Ռ. Ավագյանը:

ՀՏԴ 581.92

Կենսաբանություն

**ԱՐՅԱԽՈՒՄ ՏԱՐԱԾՎԱԾ ՈՐՈՇ ԵԹԵՐԱՅՈՒՂԱՏՈՒ ԲՈՒՅՄԵՐԻ
ՏԵՍԱԿԱՅԻՆ ԿԱԶՍԸ
Արմիդա ՀԱԿՈԲՅԱՆ**

Բանալի բառեր՝ էթերայուղ, էթերայուղատու բույսեր, կատվախոտ դեղատու, գիհի սովորական, հազարատերևուկ սովորական, ուրց սովորական, կղմուխ բարձր, սրոհունդ, երիցուկ, ռեհան, նանա, ֆիտոնցիդներ:

Ключевые слова: эфирное масло, эфирно-масленные растение, валериана лекарственная, можжевельник обыкновенный, тимьян обыкновенный, тысячелистник обыкновенный, девясил высокий, зверобой, ромашка, базилик, мята, фитонциды.

Keywords: essentialoil, essentialoil plant, Valeriana officinalis, Juniperis communis, Achilea millefolium, Thimus vulgaris, Inula helenium, Hypericum, Matricharia, O. basilicum, Mentha, phytoncides.

ВИДОВОЙ СОСТАВ И ЗНАЧЕНИЕ РАСПРОСТРАНЕННЫХ В АРЦАХЕ НЕКОТОРЫХ ЭФИРНО-МАСЛЕННЫХ РАСТЕНИЙ

А.Н.Акопян

Эфирно-масленные растения являются частью биоразнообразия Арцаха, которые население использует в качестве приправ, лекарственных растений и т.д. Мы изучили распространенность девяти эфирно-масленных растений в Арцахе и их значение. Наши исследования будут продолжаться.

SPECIES COMPOSITION AND VALUE OF SOME ESSENTIAL-OIL PLANTS COMMON IN ARTSAKH

A.N.Hakobyan

Essential oil plants are part of the biodiversity of Artsakh, which the population uses as seasonings, medicinal plants or for another purposes. We studied the prevalence of nine ethereal-oil plants in Artsakh and their significance. Our research is to be continued.

Արցախի կենսաբազմազանության մի մասն են կազմում էթերայուղատու բույսերը, որոնք բնակչությունն օգտագործում է որպես համեմունք, դեղաբույս և այլ նպատակներով: Մեր կողմից հետազոտվել է բնակչության կողմից հաճախակի օգտագործվող ինը էթերայուղատու բույսերի տարածվածությունն Արցախում և դրանց նշանակությունը: Մեր հետազոտությունները շարունակական բնույթ կկրեն:

Բույսերի զանազան օրգանների, հատկապես ծաղիկների բնորոշ բուրմունքը կախված է էթերայուղերից, որոնց քիմիական կազմը տարբեր է: Եթերայուղերի բաղադրիչ մասն են կազմում օրգանական միացությունները, որոնց քանակությունը կարող է տատանվել 5-20-ի սահմաններում: Հայտնաբերված են մոտ 500 տարբեր միացություններ, որոնք մտնում են էթերայուղերի բաղադրության մեջ (1): Եթերատու բույսերը պատկանում են հետևյալ ընտանիքներին. նեխուրազգիներ (գինձ, քեմոն, անիսոն, հոռոմսամիթ և այլն), խուլեղինջազգիներ (դադձ, եղեսպակ մշկահոտ, ռեհան, նարդոս և այլն), վարդազգիներ (վարդենի), խորդենազգիներ (վարդաբույր խորդենի), շքանարգիզազգիներ (բրաբին), ձիթենազգիներ (հասմիկ, եղրևանի), հիրիկազգիներ (հիրիկ) և այլն: Համարյա բոլոր էթերայուղատու բույսերը պարունակում են ֆիտոնցիդներ (2):

Եթերայուղեր կարող են արտադրել բույսի տարբեր օրգանները և հյուսվածքները: Այսպես, դրանք պարունակվում են սերմերում (մուսկատ, ռեհան, ուրց), տերևներում (դադձ), կեղևում(դարչին), արմատներում և կոճղարմատներում(կոճապղպեղ, մասուր, խնկեղեգ), բնափայտում(պիստակենի): Եթերայուղերով հարուստ են հատկապես բույսերի ծաղիկները:

Մաքուր վիճակում էթերային յուղերը, հիմնականում, անգույն կամ դեղնավուն թափանցիկ հեղուկներ են, սակայն հանդիպում են նաև շագանակագույն, կարմիր (ուրցի յուղը), կապույտ (երիցուկի յուղը): Սրանք հեշտ ցնդող են, ունեն արմատիկ հոտ, դուրալի համ, մեծամասամբ ջրից փոքր տեսակարար զանգված (սակայն մեխակի յուղը ջրից ծանր է): Եթերային յուղերը

ցուցաբերում են հակամիկրոբային, հակավիրուսային ազդեցություն, պաշտպանում են բոլոր հիվանդություններից: Դուրեկան հոտերի շնորհիվ եթերայուղ պարունակող բույսերն իրենց են ձգում վնասատուներին: Եթերային յուղերի կուտակման և նրանց որակական կազմի վրա մեծ ազդեցություն ունեն բույսերի վեգետացիոն փուլը և տարիքը (եթերային յուղերի քանակը երիտասարդ բույսերի և բույսի երիտասարդ մասերի մոտ մեծ է), աշխարհագրական տարածքը (եթերային յուղերը հարավում ավելի շատ են կուտակվում բույսի մեջ քան հյուսիսում աճողների մոտ), ծովի մակարդակից բարձրությունը, խոնավությունը և այլ գործոններ: Եթերայուղերի մեծ տոկոս լինում է բույսի զարգացման ամենաինտենսիվ փուլում՝ հասունացման շրջանում:

Եթերայուղատու բույսերի հավաքն ու չորացումն ունեն որոշ յուրահատկություններ: Առաջին հերթին դեղաբուսական հումքի որակը գնահատվում է՝ ելնելով նրանում պարունակվող կենսաբանական ակտիվ նյութերի քանակից: Այս նյութերի կուտակումն ունի յուրահատուկ դիսամիկա: Հումքի հավաքը պետք է կատարվի բույսի զարգացման այն շրջանում, երբ պարունակվող կենսաբանական ակտիվ նյութը բույսում հասել է առավելագույնի: Բացի դրանից հաշվի է առնվում նաև արդյունաբերական կուլտուրայի բեքքատվությունը: Դեղաբույսերի մեծ խմբի համար հավաքի լավագույն ժամը համարվում է ցերեկվա 10⁰⁰-13⁰⁰ ընկած ժամանակը, որովհետև այդ ընթացքում նրանցում կենսաբանական ակտիվ նյութերի քանակն առավելագույնն է: Եթերային յուղեր պարունակող հումքը, սակայն, խորհուրդ է տրվում հավաքել առավոտյան ժամերին: Բույսերի վերգետնյա մասերը (ընձյուղ, տերև, ծաղիկ, պտուղ) անհրաժեշտ է հավաքել չոր եղանակին՝ առավոտյան ժամը 8⁰⁰-9⁰⁰ և երեկոյան մինչև 17⁰⁰ ժամանակահատվածում, որովհետև բույսում եղած մակերեսային խոնավությունը կարող է հումքի արագ փչացման պատճառ հանդիսանալ կամ էլ իջեցնել հումքի որակը: Իսկ ստորգետնյա օրգանների (պալար, արմատ, կոճղարմատ) հավաքը կարելի է կատարել ցանկացած ժամանակ: Հովանոցազգի բույսերի պտուղները հասունանում են ոչ միաժամանակ, ճառագայթների մոտ գտնվողները ավելի շուտ: Դրանք հավաքում են այն ժամանակ, երբ հասունացել է պտուղների մոտ 20%-ը: Հավաքից հետո անմիջապես հումքը չեն օգտագործում, այն անհրաժեշտ է չորացնել(3)::

Չորացումը: Չորացման առանձնահատկությունը կայանում է նրանում, որ հումքը պետք է չորացնել ցածր ջերմաստիճանի տակ՝ 25°-30°C և հաստ շերտերով, որպեսզի եթերային յուղերը չցնդեն: Օդաստվերային չորացման ժամանակ հումքը դարսում են 7-10 սմ հաստության շերտով: Եթերայուղ պարունակող դեղահումքը պահում են այլ հոտեր ունեցող հումքից առանձին՝ լավ հերմետիկ փակված վիճակում, մուգ տարաներում: Իսկ ջերմաստիճանը 15° C-ից չպետք է գերազանցի: Կան եթերայուղերի ստացման տարբեր եղանակներ՝ ջրային գոլորշիներով թորման, պրեսացման և սեղման, էքստրակցիայի, անֆլերաժ (ճարպը հազեցնում են եթերայուղով):

Եթերայուղերի հետազոտումը կատարվում է նորմատիվ պահանջներին համապատասխան և նպատակն է հայտնաբերել իսկությունն ու բարորակությունը: Իսկությունն իրականացնելու համար ստուգում են օրգանոլեպիկ հատկանիշները՝ գույնը, հոտը, համը, իսկ հետո՝ ֆիզիկական և քիմիական հատկանիշները: Ֆիզիկապես ստուգվում են ածուխ կլանելու հատկությունը, հազեցվածությունը, լուծելիությունը սպիրտում: Քիմիական հատկանիշներից է՝ թթվայնության քանակի որոշումը, եթերային քանակ և ալկոհոլիկացումից հետո եթերային թվի որոշումը: Յուրաքանչյուր եթերային յուղի կոնկրետ թիվը նշված է ՆՓ-ում:

Աշխատանքում ուսումնասիրել ենք եթերայինյուղեր պարունակող ստորև նշված բույսերի տարածվածությունն Արցախում և դրանց դեղագործական նշանակությունը: Այդ բույսերն են՝ կատվախոտ դեղատու, գիհի սովորական, հազարատերևուկ սովորական, ուրց սովորական, կղմուխ բարձր, սրոհունդ, երիցուկ, օեհան, նանա:

Աղյուսակ

Արցախում տարածված որոշ էթերայուղատու բույսեր

Բույսի անվանումը				Օգտագործվող մասը	Կիրառությունը	Տարածվածությունը
հհ	Հայերեն	Ռուսերեն	Լատիներեն			
1.	Կատվախոտ դեղատու	ВАЛЕРИАНА ЛЕКАРСТВЕННАЯ	VALERIANA OFFICINALIS	Արմատ, ընձյուղ	Սպազմոլիտիկ, ջերմիջեցնող, հակացնցումային, ցավազրկող, լեղամուղ	միջին լեռնային գոտում
2.	Գիհի սովորական	МОЖЖЕВЯ ЛЬНИК ОБЫКНОВЕННЫЙ	JUNIPERIS COMMUNIS	Պտուղները, տերևները	Խորխաբեր, միզամուղ, ախտահանիչ, ախորժաբեր, լեղամուղ	միջին և բարձր լեռնային գոտու անտառներում
3.	Ուրց սովորական	ТИМЬЯН ОБЫКНОВЕННЫЙ, ПОЛЗУЧИЙ	THIMUS VULGARIS, SERPYLLUM	Ընձյուղը, ծաղիկը	խորխաբեր, հակամիկրոբային, հակաճիճկային, հակաբորբոքային, համեմունք, մեղրատու	ցածր, միջին և բարձր լեռնային գոտիներում
4.	Հագարտերևուկ սովորական	ТЫСЯЧЕЛИСТНИК ОБЫКНОВЕННЫЙ	ACHILEA MILLEFOLIUM	ծաղկաբույլը	արյունականգ, հակաբորբոքային, ախորժաբեր, հակաալերգիկ	ցածր, միջին և բարձր լեռնային գոտիներում
5.	Սրոհունդ	ЗВЕРОБОЙ	HYPERICUM	Ընձյուղը ծաղիկներով	հակաբորբոքային, միզամուղ, լեղամուղ, վերքամոքիչ, ճիճկամուղ, բերանաբորբերի, նյարդային լարվածության, յրվածքների ժամանակ, օդու արտադրության մեջ, որպես համեմունք, թեյին փոխարինող միջոց, մեղրատու, գեղագարդիչ	Բոլոր շրջաններում՝ ծ. մ. -ից մինչև 2300 մ բարձրության վրա
6.	Ռեհան մշակովի	БАЗИЛИК	O.BASILIQUM	թարմ և չորացրած տերևները, ծաղիկը, սերմը	բրոնխիտի, գրիպի, մրսածության և սարսուռի, գլխապտույտի, գլխացավի, միգրենի, դեպրեսիայի, նյարդային հոգնածության, տազնապի, ուշագնացության, պարոդոնտոզի, ստոմատիտի, դիսբակտերիոզի, կոլիտի, մազաթափության դեպքում	Բոլոր շրջաններում
7.	Նանա/դաղձ/	МЯТА	MENTHA	Ընձյուղը ծաղիկներով	Ցավամոքիչ, քրտնաբեր, անոթալայնիչ, խորխաբեր, հրուշակեղենի, լիկյորների, օծանելիքի արտադրությունում, մեղրատու	Բոլոր շրջաններում
8.	Երիցուկ	РОМАШКА	MATRICARIA	ծաղիկները	Քրտնաբեր, կապոդ, ցավազրկող, հակաբորբոքային, միջատասպան	Միջին լեռնային գոտում
9.	Կղմուխ բարձր	ДЕВЯСИЛ ВЫСОКИЙ	INULA HELENIUM	Ծաղիկները, կոճղարմատը	Խորխաբեր, հակաբորբոքային, հակամիկրոբային, հակաճիճկային, խոցերի, էկզեմայի և մաշկային քորի ժամանակ	միջին լեռնային գոտում

**ԿԱՏՎԱԽՈՏ ԴԵՂԱՏՈՒ
ВАЛЕРИАНА ЛЕКАРСТВЕННАЯ
VALERIANA OFFICINALIS**

Պատկանում է VALERIANACEAE ընտանիքին: 2 մ բարձրությամբ բազմամյա խոտաբույս է: Կոճղարմատն առանցքային է, ծածկված հավելյալ թելանման արմատներով: Հողից հանելիս կոճղարմատը հոտ չունի, երբ առաջանում է իզովալերիանաթթու, ձեռք է բերում բնորոշ սուր հոտ (կատունները վրա են հարձակվում): Ունի դառը համ: Տերևները հակադիր են, կենտ փետրածև, կտրտված, անհավասարաեզր, գծային, նշտարածև կամ ձվաձև և աստամնաեզր: Ներքևի տերևները կոթունավոր են, իսկ վերինինը՝ նստադիր: Յողունն ուղիղ կանգուն է, մերկ, գլանաձև, ծաղկատար մասում ճյուղավորված: Ծաղիկները բաց վարդագույն են, հնգաթերթ, խողովակաձև, ծաղկաբույլը հուրան է, պտուղը միասերմիկ: Ծաղկում է մայիս-օգոստոսին: Պտուղը հասունանում է հուլիս-սեպտեմբերին: Տարածված է քարքարոտ վայրերում, ճամփեզրին, արևակեզ լեռնալանջերին: Պարունակում է 100-ից ավելի քիմիական միացություններ՝ եթերային յուղեր(2%), սեսկվիտերպեններ(1.5%), բիցիկլիկ տերպեններ, K, Ca, Mg, օսլա, խեժեր և այլ:

Կիրառումը: Բույսի պրեպարատները քուն չեն առաջացնում, սակայն արգելակելով գլխուղեղի կեղևը, ընդունակ են արագացնելու քնի ֆիզիոլոգիական հասունացումը: Ցուցաբերում է սպազմոլիտիկ ազդեցություն, կարգավորելով սրտի գործունեությունը և ստամոքս-աղիքային ուղու գործառնությունը: Արագացնում է միզարտադրությունը, հանդիսանում է ջերմ իջեցնող, հակացնցումային և ցավազրկող միջոց: Ցուցաբերում է լեղամուղ ազդեցություն: Տարածված է միջին լեռնային գոտում:

**ՀԱՋԱՐԱՏԵՐԵՎՈՒՎ ՍՈՎՈՐԱԿԱՆ
ТЫСЯЧЕЛИСТНИК ОБЫКНОВЕННЫЙ
ACHILEA MILLEFOLIUM**

Պատկանում է ASTERACAE ընտանիքին: Հումքը հայտնի է HERBA անունով: Բազմամյա խոտաբույս է՝ 50-60 սմ բարձրությամբ: Յողունը կանգուն է, ճյուղավորված: Տերևները հերթադիր են, կրկնակի կտրտված, նշտարածև: Արմատային տերևները կտրտված են, իսկ ցողունայինը՝ նստադիր: Ծաղիկները նեղ են և երկար: Լեզվակավոր ծաղիկները բաց վարդագույն են, խողովակայինը՝ դեղին: Պտուղը ձգված սերմիկ է: Ծաղկում է մայիս – սեպտեմբերին: Տարածված է խոտաշատ վայրերում: Պարունակում է եթերայուղեր՝ սեսկվիտերպեններ, ֆլավանոլիդներ, անտոցիաններ, մեծ քանակով վիտամին, կարոտիններ, դաբաղանյութեր:

Կիրառումը: Հազարատերևուկի խոտից ստացված պրեպարատները ցուցաբերում են արյունականգ, հակաբորբոքային, վերք լավացնող ազդեցություն, հեղուկ մզվածքը և ջրաթուրմը կիրառվում են ստամոքս-աղիքային և արգանդային արյունահոսությունների ժամանակ: Արտաքին ձևով կիրառվում է բերանի խոռոչի ողողումների համար՝ ստոմատիտի և լնդային բորբոքումների ժամանակ: Ախորժաբեր է և հակաալերգիկ:

Տարածված է ցածր, միջին և բարձր լեռնային գոտիներում:

**ՈՒՐՑ ՍՈՎՈՐԱԿԱՆ, ԳԵՏՆԱՏԱՐԱԾ
ТИМЬЯН ОБЫКНОВЕННЫЙ, ПОЛЗУЧИЙ
THIMUS VULGARIS, SERPYLLUM,**

Պատկանում է LABIATAE ընտանիքին: Կիսաթուփ է՝ 10-30 սմ բարձրությամբ: Յողունը քառանիստ է, ճյուղավորված, ուղիղ կանգուն է: Տերևները հակադիր են, աղեղնաջիղ, կարճ կտրտված, նստադիր, ձվաձև, եզրերը ներքև դարձած, երկու կողմից պատված նուրբ, եթերայուղ պարունակող մազիկներով, որոնց շնորհիվ բույսն ունի սուր, հաճելի, բուրավետ հոտ: Ծաղիկները վարդագույն են կամ կարմիր, երկշուրթ, ներքին շուրթը բաժանված է երեք մասերի: Ունի 4 առեջներ, հավաքված են գլխիկանման հուրան ծաղկաբույլում: Ծաղկում է հունիս-սեպտեմբերին: Պտուղը չոր է, բաժանված ընկուզիկների: Պտուղը հասունանում է օգոստոսին: Աճում է խոնավ հողում, բայց արևոտ տեղամասերում, սոճու և գիհու անտառներում: Հումքն

օգտագործում են էթերայուղ, ջրաթուրմեր, մզվածքներ /էքստրակտներ/ ստանալու նպատակով: Հումքը պարունակում է էթերայուղեր՝ 1%, որի հիմնական բաղադրիչներն են ֆենոլային միացությունները (թիմոլ, կարվակրոլ) և մոնոտերպենները, ինչպես նաև ֆլավոնոիդներ, լորձանյութեր, դառնանյութեր:

Կիրառումը: Ցուցաբերում է խորխաբեր, հակամիկրոբային և հակաբորբոքային ազդեցություն: Ուրցի պրեպարատներն օգտագործում են հազով ուղեկցվող բրոնխաթոքային հիվանդությունների ժամանակ: Կիրառվում են նաև բերանի և բերան-ըմպանային բորբոքումներով ուղեկցվող հիվանդությունների ժամանակ: Նշանակվում են ստամոքս-աղիքային հիվանդությունների ժամանակ, որոնք ուղեկցվում են աղիների սպազմով, մետեորիզմով, որի շնորհիվ կարգավորվում է աղիների միկրոֆլորան: Ուրցի հեղուկ մզվածքը մտնում է «Պերտուսսին» հմալիր պրեպարատի կազմի մեջ, որն օգտագործվում է հազով ուղեկցվող, շնչուղիների սուր և խրոնիկական հիվանդությունների ժամանակ: Թիմոլի շնորհիվ բույսը ցուցաբերում է հակաճիճվային ակտիվություն: Օգտագործում են շաքարային դիաբետի ժամանակ, ինչպես նաև որպես համեմունք: Չարաշահել չի կարելի, այն զոբագեն է, հնարավոր է նաև սրտխառնոց: Հակացուցված է հղիության, լյարդի և երիկամային հիվանդությունների ժամանակ: Պահում են առանձին այլ հումքերից, արևի ճառագայթներից զերծ:

Տարածված է ցածր, միջին և բարձր լեռնային գոտիներում:

ԳԻՉԻ ՍՈՎՈՐԱԿԱՆ

МОЖЖЕВЕЛЬНИК ОБЫКНОВЕННЫЙ

JUNIPERIS COMMUNIS

Պատկանում է CUPRESACEAE ընտանիքին: Մշտադալար թփեր են՝ 1-3 մ կամ ծառեր՝ 16 մ բարձրության: Լուսասեր են, երկարակյաց, ապրում են 300 տարի: Տերները փշանման են՝ 2-3 մմ լայնությամբ, կիսաձուլված են կենտրոնական ջիղով: Ցողունի շուրջը դասավորված են 3-ական: Երկտուն բույս է, արականները թեփուկանման կոներով հավաքված են նուրբ դեղնավուն պատյաններում, բողբոջների ծայրերին կամ տերևածոցերում, իսկ իգականները՝ կղմինդրանման են, դասավորված 3-ական: Փռչումն ժամանակ ստորին երկու թեփուկները մնում են, իսկ վերին 3-ը մասկալվում են և հենց առաջին տարում տալիս են գնդաձև կանաչ հատապտուղ, որը 2-րդ տարին դառնում է մուգ կապույտ՝ փխրուն նստվածքով: Կոների հավաքը կատարում են 2-րդ տարում, տակը փռում եե քաթան, թափահարում են, հասածները թափվում են: Պտուղները պարունակում են էթերայուղեր՝ բիցիկլիկ տերպեններ, սեսկվիտերպեններ, ցինեոլ, ցիմոլ, լորձեր, շաքար, պեկտինային նյութեր, օրգանական թթուներ:

Կիրառությունը: Խորխաբեր է, միզամուղ, ախտահանիչ, ախորժաբեր, լեղամուղ: Գիտականտառը մեկ օրում կարող է արտադրել մի քանի կգ ֆիտոնցիդ, որն ի վիճակի է վարակագրած պահել մի խոշոր քաղաք(3):

Տարածված է միջին և բարձր լեռնային գոտու անտառներում:

ՄՐՈՀՈՒՆԷ

ЗВЕРОБОЙ

HYPERICUM

Պատկանում է HYPERICACEAE /սրոհունդագգիների/ ընտանիքին

Հայկական տարանունները - արևքուրիկ, եզնածաղիկ դաշտի, թեյի ծաղիկ, հազարածաղիկ:

Համաշխարհային բուսաբուժությունում այս բույսին անվանում են <<դեղաբույս 99 հիվանդության դեմ>>:

Սրոհունդ ցեղը բազմամյա, հազվադեպ՝ միամյա խոտաբույսեր, թփեր, կիսաթփեր են: Ցողունը կանգուն է, ողորկ, վերին մասում՝ ճյուղավորվող, բարձրությունը՝ 15-100 սմ: Տերները հակադիր են, ամբողջական, ձվաձև կամ լայն օվալաձև, լուսաթափանց կետավոր գեղձիկներով: Ծաղկաբույլը հուրանաձև է, վահանաձև կամ ողկուզանման, ծաղիկները՝ դեղին: Ծաղկում է հունիս-սեպտեմբերին: Պտուղը բազմասերմ տուփիկ է: Սերմերը մանր են, փայլուն, դարչնագույն: Մեզ մոտ տարածված են՝ Սրոհունդ անհարթ (H. scabrum), Սրոհունդ սրածայր (H.

acutum), Սրոհունդ խոցված (*H. perforatum*), Սրոհունդ ալպիական (*H. alpestre*) տեսակները: Սրոհունդի շատ տեսակներ դեղաբույսեր են:

Կիրառումը: Պատրաստուկները (ջրաթուրմ, ոգեթուրմ, մզվածք) օգտագործում են որպես հակաբորբոքային, միզամուղ, լեղամուղ, վերքամոքիչ, ճիճվամուղ միջոց, նաև բերանաբորբերի, նյարդային լարվածության, այրվածքների ժամանակ: Խոցված սրոհունդից ստացվել է նովոիմանին հակաբիոտիկը: Սրոհունդի տերևներն օգտագործում են «Սրոհունդ» օղու արտադրության մեջ, նաև որպես համեմունք, թեյին փոխարինող միջոց և այլն: Սրոհունդի որոշ տեսակներ թունավոր են գյուղատնտեսական կենդանիների համար: Մեղրատու է և գեղազարդիչ: Ունի ֆիտոնցիդային հատկություն: Աճում են չոր և լուսառատ տարածքներում, անտառային և անտառատափաստանային գոտիներում, ծովի մակերևույթից մինչև 2300 մ բարձրության վրա՝ հաճախ տալով ցրված բուսուտներ:

ԿՂՍՈՒՆ ԲԱՐՁՐ

ДЕВЯСИЛ ВЫСОКИЙ

INULA HELENIUM

Պատկանում է ASTERACEAE ընտանիքին: 1,5 մ բարձրության բազմամյա խոտաբույս է: Ցողունը կանգուն է, մազեպատ և քիչ ճյուղավորված: Տերևները հերթադիր են, անհավասար, ատամնաեզր, արմատայինը՝ օվալաձև և էլիպսաձև, ցողունայինը՝ ձվաձև, հիմքում՝ սրտաձև, իսկ վերևի տերևները՝ նստադիր: Բույսի գազաթին լինում են մի քանի ծաղիկներ, որոնց եզրայինները երկար, նեղ լեզվակավոր են, դեղնասուկեգույն, իսկ միջին ծաղիկները՝ խողովակաձև: Պտուղը քառանիստ սերմիկ է: Բազմանում է սերմերով: Կոճղարմատը հաստ է, կարճ, բազմազլխիկ: Տարածված էխոնավ վայրերում: Ծաղկում է հուլիս– սեպտեմբերին: Բույսը պարունակում է եթերային յուղեր՝ ալանտոլակտոն, բազմաշաքարներ (ինուլին), խեժեր: **Կիրառումը:** Խորխաբեր է (իջեցնում է բրոնխների սեկրետոր ակտիվությունը), հակաբորբոքային, հակամիկրոբային, հակաճիճվային: Կիրառվում է շնչառական(հազի, բրոնխոսպազմի), ստամոքս-աղիքային (խոցի) ուղիների սուր և խրոնիկական բորբոքումների, էկզեմայի և մաշկային քորի ժամանակ:

ՌԵՀՍՆ

БАЗИЛИК

O.BASILICUM

Պատկանում է LABIATAE /շրթնածաղկավորներ կամ խուլեղինջազգիներ/ ընտանիքին: Տարանուններն են՝ արքայիկ, ասպրամ, պատրուճ: Ցեղում ընդգրկված ներկայացուցիչները խոտաբույսեր կամ կիսաթփեր են: Հայտնի է 50 տեսակ, սակայն առավել տարածված են ռեհանի 2 հիմնական տեսակները՝

Ռեհան կամֆոքային՝ *Ocimum menthifolium*

Ռեհան էվգենոլային՝ *O. Gratissimum*

Արցախի բոլոր մարզերում տարածված է Ռեհան մշակովին՝ *Ocimum basilicum*, որը միամյա բույս է: Ցողունն ուղղաձիգ է, քառանիստ, մինչև 40-80 սմ բարձրության: Արմատն առանցքային է, բազմաթիվ կողային ճյուղավորումներով: Տերևները, ցողունը և ծաղկաբաժակները ծածկված են մազիկներով, որոնց մի մասի բջիջներում կան եթերային յուղեր պարունակող գեղձիկներ: Ծաղկում է հունիսից մինչև հոկտեմբեր: Բազմանում է բացառապես սերմերով, ջերմասեր և խոնավասեր բույս է:

Ռեհանն օգտակար բույս է և անփոխարինելի համեմունք: Հարուստ է եթերային յուղերով և C, B₁, B₂, PP վիտամիններով: Ռեհանն օգտագործվում է նաև որպես տնական խոտային կոսմետիկայի բաղադրիչ: Այն մշակում են նաև կամֆորա և էվգենոլ ստանալու համար:

Կիրառումը: Բժշկության մեջ ռեհանն օգտագործվում է ստամոքսի ցավերը բուժելու, բրոնխիտի, գրիպի, մրսածության և սարսուռի, գլխապտույտի, գլխացավի, միգրենի, դեպրեսիայի, նյարդային հոգնածության, տագնապի, ուշագնացության, պարոդոնտոզի, ստոմատիտի, դիսբակտերիոզի, կոլիտի, մազաթափության դեպքում: Այն նպաստում է կերակուրների լավ մարսմանը: Ժողովրդական բժշկության մեջ օգտագործվում են թարմ և

չորացրած տերևները, ծաղիկը, սերմը: Տերևը պետք է հավաքել ծաղկման շրջանում, չորացնել օդափոխվող ծածկի տակ, որպեսզի պահպանվի գույնը:

ԱՆԱՆՈՒԽ, ԴԱՂՁ

МЯТА

MENTHA

Պատկանում է LABIATAE /շրթնածաղկավորների կամ խուլեղինջագգիների/ ընտանիքին: Անանուխը (դաղձ). բազմամյա, կոճղարմատավոր վայրի կամ մշակովի խոտաբույս է: Հայտնի է մոտ 20 տեսակ, Արցախում հանդիպում են հետևյալ տեսակները. դաղձ դաշտային/ *M. arvensis* /, Դ. երկարատերև / *M. Longifolia*/, Դ. վլածաղիկ/ *M. Pulegium*/: Մշակության մեջ տարածված են պղպեղահամ անանուխը /*M.piperita*/ և գանգուր անանուխը / *M. crispa* /: Աճում են ամենուրեք: Բույսը ցրտադիմացկուն է, խոնավասեր ու պահանջկոտ լույսի նկատմամբ, իսկ շոգ եղանակին, աճը խիստ դանդաղում է: Ծաղկում է հիմնականում հուլիս-օգոստոս ամիսներին: Բուժման նպատակով հիմնականում օգտագործում են բույսի տերևները: Հումքը հավաքում են ծաղկման ժամանակ, մի քանի ժամ թողնում են արևի տակ, հետո լրիվ չորացնում քամոտ վայրում, այսինքն՝ համեմատաբար հով տեղում: Այս բույսի ցեղի «մենթա» անվանումը ծագել է հին հունական դիցաբանության հավերժահարս Մինթայի անունից, որին բուսաշխարհի աստվածուհին՝ Պերսեֆոնեն, դարձրեց անանուխ՝ Աֆրոդիտեին նվիրելու համար:

Կիրառումը: Տերևները և ծաղիկները պարունակում են եթերայուղ, կարոտին, մենթոլ և այլն: Մենթոլն ունի անոթալայնիչ, հանգստացնող և տեղային ցավամոքիչ ներգործություն: Մտնում է վալիդոլի, Զելենինի կաթիլների և այլ պատրաստուկների բաղադրության մեջ: Տերևների թուրմն օգտագործվում է մարսողության կանոնավորման, լնդերի բորբոքման, սրտխառնոցի և այլ դեպքերում: Բժշկության մեջ կիրառվում է ոչ միայն բուսահումքը, այլ նաև նրանից ստացվող եթերայուղերը: Բույսի կաթիլներն ու եփուկը լոզանքի ձևով օգտագործում են երեխաների ռախիտի, գեղձախտի, աղեստամոքսային ուղու խանգարումների ժամանակ: Տերևների թրջոցն օգտագործում են ռևմատիկ հոդացավերի ժամանակ: Նանայով համեմում են շատ ըմպելիքներ և սննդատեսակներ: Այն լայն կիրառում ունի նաև կոսմետոլոգիայում:

ԵՐԻՑՈՒՎ

ПОМАШКА

MATRICARIA

Պատկանում է COMPOSITAE /բարդածաղկավորների/ կամ /աստղածաղկավորների/ ASTERACEAE ընտանիքին: Հայկական տարածություններն են՝ օշոշ, հավածաղիկ, արգանդախոտ, խնձաղեղ, կոկոռճիկ, կուծուռի, լալապնդիկ: Բույսն ունի մի քանի տեսակներ և նմանակներ: Միամյա, բազմամյա խոտաբույսեր են՝ փետրածև տերևներով: Ծաղկաբույլը զամբյուղ է, եզրային ծաղիկներն իգական են, սպիտակ, մեջտեղինը՝ երկսեռ, խողովակաձև, դեղին: Պտուղը սերմնապտուղ է: Հայտնի է երիցուկի մոտ 70 տեսակ, տարածված է հիմնականում հս. կիսագնդում: Մեզ մոտ առավել տարածված տեսակներից է՝ Երիցուկ հոտավետը /*M. suaveolens*, *M. Discoidea*/, որի մոտ բացակայում են կեղծ լեզվակավոր ծաղիկները: Բերվել է Հյ. Ամերիկայից, որը մի քանի տարում տարածվել է ամբողջ նախկին ԽՍՀՄ-ում: Հաջորդը՝ երիցուկ դեղատնայինը (*M.chamomilla*), որն ուժեղ ճյուղավորված,

միամյա բույս է: Ծաղկի զամբյուղներում կա 0,25% եթերայուղ: Բերքահավաքի լավագույն ժամկետը ծաղկման փուլն է: Բժշկության մեջ օգտագործվում է որպես լեղամուղ, քրտնաբեր, ախորժաբեր, հականեխիչ, հակաջղաձիգ միջոց: Թուրմն օգտագործվում է հոգնաների, ողողումների, ինչպես նաև մազերը գունաթափելու համար: Երիցուկ դավաթինյան և կովկասյան տեսակները պարունակում են պիրեթրին նյութը, որը որպես միջատասպան օգտագործվում է գյուղատնտեսական բույսերի վնասատուների, մարդու և կենդանիների մակաբույծ միջատների (փայտոջիլ, ոջիլ, ճանճեր) դեմ պայքարելիս, ինչպես նաև քոսի բուժման ժամանակ:

Կիրառումը: Դեղատնային երիցուկը լայնորեն օգտագործվում է ժողովրդական բժշկության մեջ: Բույսի պատրաստուկներն ունեն հանգստացնող, հականեխիչ, հակաբորբոքային,

վարակազերծ հատկություն: Բույսի եթերային յուղը լավացնում է շնչառությունը, լայնացնում գլխուղեղի անոթները: Բույսի պատրաստուկներն օգտագործվում են բազմաթիվ հիվանդությունների դեպքում, ընդգրկվում են դեղաբուսային փնջերի մեջ: Սուր և քրոնիկ ստամոքսաբորբի, ստամոքսի խոցի, կոլիտի դեպքում կիրառվում է երիցուկի, վաղենակի, հազարատերևուկի խառնուրդը(1): Դեղատնային երիցուկը կիրառվում է օժանելիքի արտադրության մեջ:

Հանդիպում է միջին լեռնային գոտում:

Այսպիսով, Արցախի տարածքում մեր կողմից ուսումնասիրված եթերայուղատու բույսերի տեսակների քանակը կազմում է 9-ը, մեր հետազոտությունները վերջնական չեն ու կկրեն շարունակական բնույթ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Ա.Լ. Հարությունյան, Ֆիտոթերապիա, Երևան, 2001.
2. Լ.Վ. Հարությունյան, Ա.Լ. Հարությունյան, Հայաստանի դենդրոֆլորան, Հատոր 2, Երևան, 1986.
3. Универсальная энциклопедия лекарственных растений, Минск-Москва 2000

**Տնօրինություններ հեղինակների մասին`
armidahakobyan_1@mail.ru**

Նոդվածը տպագրության է նրաշխավորել խմբագրական կոլեգիայի անդամ, գ.գ.դ., Գ.Ա. Նակոբյանը:

ԱՍԿԵՐԱՆԻ ՇՐՋԱՆԻ ԴԱՇՈՒՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՇՐՋԱԿԱՅՔԻ ԴԵՆԴՐՈՖԼՈՐԱՆ

Մ.Ս. ԾԱՍԿՅԱՆ, Մ.Ս.ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ

Բանալի բառեր՝ Դաշուշեն, դենդրոֆլորա, ծառ, թուփ, լիան, բազմազանություն, ընտանիք, ցեղ, վարդազգիներ, ձիթենազգիներ, ցախակենազգիներ

Ключевые слова: Дашушен, дендрофлора, дерево, куст, лиана, разнообразие, семейство, род, розовые, маслиновые, жимолостные

Key words: Dashushen, dendroflora, tree, bush, liane, variety, family, genus, Rosaceae, Oleaceae, Caprifoliaceae

М.Цатурян, М.Арзуманян

ДЕНДРОФЛОРА В ОКРЕСТНОСТЯХ ДАШУШЕНСКОЙ ОБЩИНЫ АСКЕРАНСКОГО РАЙОНА

Был изучен видовой состав дендрофлоры в окрестностях Дашушенской общины Арцахской области. В результате были зарегистрированы 64 вида деревьев, кустарников и лиан, которые принадлежат 43 родам и входят в состав 23 семейств. По разнообразию и орнаментации видов примечательны северо-восточные густые лесные массивы, где также сосредоточены фруктовые деревья и кустарники. Также уточняется таксономический перечень обнаруженных растений в исследованной области, а также биоэкологические и фитоценотические особенности.

M. Tsatryan. M.Arzoumanyan

THE DENDROFLORA OF DASHUSHEN COMMUNITY SURROUNDINGS IN ASKERAN REGION

The dendroflora species composition of Dashushen community surroundings in Artsakh region has been studied. As a result, 64 species of trees, bushes and lianes have been registered, which belong to 43 genera and are included in 23 families. The dense forested areas in the north-east and east are remarkable with their variety and ornamentation, where fruit trees and bushes are also concentrated. The taxonomic list of the plants discovered in the studied area is also clarified, as well as the bioecologic and phytocenotic peculiarities.

Ուսումնասիրվել են Արցախի շրջանի Դաշուշենի շրջակայքի դենդրոֆլորայի տեսակային կազմը: Արդյունքում գրանցվել են 23 ընտանիքների և 43 ցեղերի պատկանող 64 տեսակ ծառեր, թփեր և լիաններ: Տեսակների բազմազանությամբ և գեղազարդությամբ աչքի են ընկնում հյուսիսարևելյան և արևելյան խիտ անտառապատ տարածքները, որտեղ կենտրոնացած են նաև պտղատու ծառերը և թփերը: Պարզաբանվում է նաև ուսումնասիրվող տարածքում հայտնաբերված բույսերի կարգաբանական ցուցակը, ինչպես նաև կենսակերպական և ֆիտոցենոտիկ առանձնահատկությունները:

Դաշուշենը /կամ Քարաշենը/ գտնվում է Արցախի կենտրոնական արևելյան մասում, Կարկառ գետի ձախ ափին, և մտնում է Ասկերանի վարչական շրջանի ու համանուն ֆլորիստական շրջանի մեջ: Այն գտնվում է 830-900 մ բարձրության վրա՝ ընդգրկելով տափաստանային և լեռնատափաստանային գոտիները: Շրջապատված է արևելքից՝ անտառապատ Շաղասար լեռով /980մ/, արևմուտքից՝ չոր լեռնալանջ Ծաղկասարով /833մ/, հարավից՝ թփուտներով, որտեղ գտնվում է Սրաբեկ սրբավայրը, որից վերև՝ հարավ արևելյան մասը՝ անտառապատ է և ամենաբարձր տեղը, որտեղ 2017 թ-ին տեղադրել են Խաչը, հասնում է 1030մ-ի, դեպի հարավ արևմուտք վեր է ածվում «Գյուտնավար» լանջի, իսկ հյուսիսից գյուղին է նայում Ջրղբղուզը՝ իր Հոնուտի կիրճով: Գյուղը մոտիկ է Շուշիին, Շոշին, մայրաքաղաքի նկատմամբ ունի հարավարևմտյան դիրք: Բնորոշ են լեռնային քամիները և բարձր խոնավությունը՝ հատկապես գարնանը:

Գյուղը հարուստ է աղբյուրներով. դպրոցամերձ լանջում՝ «Քարի» աղբյուր, գյուղամիջում՝ «Թազա» աղբյուր, Սուրբ Սրաբեկ սրբավայրի մոտ՝ «Խաչին տակի» աղբյուր, Ծաղկասարի արևմտահայաց լանջի ստորոտում՝ «Չումչումբլախի» աղբյուր, Ծաղկասարի արևմտահայաց մասում՝ «Մաքսիմի» աղբյուր, Շաղասարի ստորոտում՝ «Մաներ» կոչվող վայրում՝

<<Քարիզ>> աղբյուր, որից վերն՝ <<Միշայի>> աղբյուր, Շաղասարի արևելահայաց ձորում՝ <<Կյուշ>> աղբյուր:

Հետազոտության նյութ են հանդիսացել Դաշուշենի շրջակայքից մեր հավաքած դենդրոֆլորայի նմուշները: Նյութը մշակելուց և հերքարիում պատրաստելուց հետո խմբավորել ենք բույսերն ըստ տեսակի, կազմել բույսերի կարգաբանական ցուցակը և կատարել տաքսոնոմիական վերլուծություն: Դաշուշենի շրջակայքի բուսատեսակները որոշելիս հիմք ենք ընդունել բազմաթիվ մենագրություններ, որոշիչներ, գրքեր և այլն[1-3]:

Գյուղի արևմուտքում՝ Ծաղկասարի արևելահայաց մասում, չոր, քարքարոտ լեռնալանջեր են, շիբլակներ: Այստեղ թփերից դոմինանտում են փարթամ ցաքին, (*P. spina-christi*), ցախակեռաս վրացականը (*Lonicera iberica*), դժնիկ Պալլասի (*Rhamnus pallasii*), մասրենի առատափուշը (*Rosa spinosissima*), իսկ հասմիկը (*Jasminum fruticans*), ասպիրակը (*Spiraea hypericifolia*) և ամբողջաեզր չմենին՝ (*Cotoneaster integerrimus*) սակավաթիվ, կիսաթփերից՝ գազ մանրագլխիկը, (*Astragalus microcephalus*)՝ ընդարձակ բուսուտներով:

Սակայն Ծաղկասարի հյուսիս արևմտյան մասում ապրիլին աչքի են գառնում ասպիրակի, հասմիկի և ցախակեռասի մաքուր թփուտները: Սակավաթիվ հանդիպում է մասրենի և սզնի: Իսկ հարավ արևմտյան լանջը վեր է ածվում մաքուր կաղնեբոխային անտառի: Կենտրոնական մասում ենթաանտառում հանդիպել ենք ուռատերև տանձենու (*Pyrus salicifolia*) մի քանի փարթամ ծառ, ինչպես նաև ընկուզենի (*Juglans regia*):

Ծաղկասարի հարավ արևմտյան կաղնեբոխային անտառում դոմինանտում են արևելյան բոխին, ջղանե (*Carpinus orientalis*), տերևառատ թեղին (*Ulmus foliacea*), վրացական և խոշորառեջ կաղնիները (*Quercus iberica*, *Q. macranthera*), սակավաթիվ հանդիպում են դաշտային թխկին (*Acer campestre*), կովկասյան սզնին (*Crataegus caucasica*), հոնին (*Cornus mas*), որոնք անտառկազմող ծառատեսակներ են և մաքուր ծառուտներ չեն առաջացնում: Անտառի վերջում դեպի հարավ մոշուտներ են:

Այսպիսով, Ծաղկասարի արևմտահայաց մասում լայնատերև նոսրանտառներ են: Այստեղ հանդիպում են տիլենի, հոնի, մասրենի, կաղնի, ընկուզենի, սզնի, մամխենի, սալորենի, բոխի /ջղանե/, իսկ ստորոտում՝ <<Մաքսիմի>> աղբյուրի մոտակայքում՝ վայրի խաղող (*Vitis sylvestris*): Ծաղկասարի դենդրոֆլորան ասեղնատերևավորներ չի ընդգրկում:

Գյուղի արևելքում՝ Շաղասարի և՛ արևմտահայաց, և՛ արևելահայաց լանջերը խիտ անտառապատ են: Արևելքում՝ Շաղասարին նույնպես նախորդում են չոր քարքարոտ լեռնալանջեր, ուր միայն հանդիպում են թփերից՝ ցաքին, կիսաթփերից՝ գազ մանրագլխիկը՝ ընդարձակ բուսուտներով:

Գյուղի հյուսիս – արևելյան մասում անտառապատ լանջեր են, որի ստորոտը խառը անտառապատ է, իսկ ենթաանտառը կազմում են մոշենու կիսաթփերը, մասրենու թփերը, հոնին, ցախակեռասը, դեպի վեր խառն անտառներ են: Այստեղ հավասարապես բաշխված են վրացական կաղնին, կովկասյան բոխին (*Carpinus caucasica*), բոխատերև ձելկվան (*Zelkova carpinifolia*), դաշտային թխկին (*Acer campestre*), վրացական թխկին (*Acer ibericum*), լայնատերև իլենին (*Euonymus latifolia*), հարավային ճապկին (*Swida australis*), կիպրոսը (*Ligustrum vulgare*), իսկ հացենին անտառում առաջացնում է (*Fraxinus excelsior*) մաքուր ծառուտ, սակավաթիվ հանդիպում են ցախակեռաս կովկասյանը (*Lonicera caucasica*), զկեռենին (*Mespilus germanica*), լիաններից մեծ տարածում ունի շրջահյուս հունականը (*Periploca graeca*), իսկ անտառի առանձին լուսավոր և նոսր տեղերում գերիշխում են գերիմաստու (*Viburnum lantana* L.) և մամխենու (*Prunus spinosa*) թփերը:

Կենտրոնական արևելյան մասում վեր է խոյանում խիտ անտառապատ Շաղասարը: Ստորոտը խառն անտառապատ է, հանդիպում են հոնին, ճապկին, ձելկվան, սզնին, գիհին, մասրենին, կիպրոսը: Դեպի վեր հիմնականում կաղնեբոխային անտառներ են, այստեղ դոմինանտում են նաև բոխի կովկասյանը, թեղի տերևառատը, կիպրոսը, անտառի ամենավերին սահմաններում դոմինանտում են նաև գերիմաստին, չմենին, սզնին: Անտառի ամենավերին սահմանում ցախակեռաս այծին (*Lonicera caprifolium*) առաջացնում է թփուտներ,

վերջինս հանդիպել է միայն Շաղասարում, անտառերին հանդիպում է եվրոպական իլենին (*Euonymus europaea*): Լիաններից շրջահյուս հունականը (*Periploca graeca*) աճում է անտառի ստորինից մինչև վերին սահմաններում, իսկ հասարակ կնքաբույսը (*Tamus communis L.*) միայն անտառի վերին սահմանում: Անտառեզրերին հանդիպում է դժնիկ Պալասին:

Շաղասարի կաղնեքոխային անտառային դենդրոֆլորան ասեղնատերևավորներից ընդգրկում է երկարատերև գիհին (*Juniperus oblonga*), որն անտառ կազմող ծառատեսակ է, և ընդարձակ գիհուտներ չի առաջացնում: Գիհին հանդիպում է Շաղասարի անտառների ստորին սահմաններում, իսկ անտառեզրին՝ հանդիպում են ցածրած գիհու (*Juniperus hemisphaerica*) թփուտներ և փշատենի (*Elaeagnus angustifolia*): Վայրի պտղատուներից Շաղասարի անտառներում աճում է անտառային կեռասենին (*Cerasus avium*)՝ սակավաթիվ:

Շաղասարի արևմտահայաց լանջի ստորոտում՝ «Քարիզ» աղբյուրի մոտակայքում դոմինանտում են ընկուզենիները և թթենիները:

Հարավ արևելյան մասը /1030մ/ իրիտ անտառապատ է, կարելի է ասել տերևառատ թեղու (*Ulmus foliacea*) մաքուր ծառուտ: Անտառ կազմող գերակշռող թփատեսակ է նաև ամբողջաեզր չմենին (*Cotoneaster integerrimus*), որը հանդիպում է մինչև անտառի վերին սահմանները, սակավաթիվ անտառ կազմող թփերից են ցախակեռաս վրացականը (*Lonicera iberica*) և ցաքին, ամբողջ լիաններից՝ շրջահյուս հունականը (*Periploca graeca*), սակավաթիվ գիհի, սգնի: Անտառի վերին սահմանում 900-1000մ բարձրություններում դրախտածառ սովորականը (*Cotinus coggygia*) առաջացնում է մաքուր ծառուտ: Անտառի վերին սահմաններում հանդիպում է նաև կաղնի: Դեպի հարավ արևմուտք վեր է ածվում «Գյուտնավար» կոչվող լանջի, որը ձևավորում է ենթաստառը: Այտեղ հիմնականում դոմինանտում են մասրենու թփուտները, իսկ ստորին սահմանում /գյուղին մոտ/ առավել շատ հանդիպում են դժնիկ Պալասին, հասմիկ թփայինը, ցաքին և մոշենու կիսաթփերը:

Մեծ հետաքրքրություն է ներկայացնում գյուղամիջից դեպի Սուրբ Սրաբեկ սրբավայրը ընկած տարածքի և Սուրբ Սրաբեկի շրջակայքի ենթաստառի դենդրոֆլորան: Գյուղամիջից դեպի Սուրբ Սրաբեկ սրբավայր տանող ճանապարհի եզրերին առավել շատ հանդիպում են դժնիկ լուծողականը /*Rhamnus cathartica*/, ամբողջաեզր չմենին /*Cotoneaster integerrimus*/, փոշնին (*Celtis caucasica*), ակացիան (*Robinia pseudoacacia*) /Եկեղեցու շրջակայք/, վրացական ճապկին (*Swida iberica*), հացենու (*Fraxinus excelsior*) ծառուտ՝ գյուղամիջում «Թագա» աղբյուրի մոտ, իսկ Սուրբ Սրաբեկ սրբավայրի շուրջը գերակշռում են հարավային ճապկին (*Swida australis*), կովկասյան բոխին (*Carpinus caucasica*), փոշնին (*Celtis caucasica*), մամխենին (*Prunus spinosa*), մասրենին (*Rosa canina*):

Դաշուշենի շրջակայքի անտառներում գերակշռող ծառատեսակներից է սալորենին (*Prunus divaricate*) /շոր/, որն հանդիպում է Շաղասարի և՛ արևելահայաց /դեպի Քոասնի նայող/, և՛ արևմտահայաց անտառներում, որտեղ հանդիսանում է գերակշռող տեսակ, հյուսիսային մասում՝ Կարկառ գետի մոտակայքում, «Էլդորադո» հյուրանոցի շրջակայքում, Ծաղկասարի արևմտահայաց անտառներում և գյուղը տանող ճանապարհի եզրերին:

Առավել շատ հանդիպող ծառատեսակներից է հոնին (*Cornus mas*): Հոնին աճում է ամենուր՝ առաջացնելով ընդարձակ բուսուտներ: Հոնին աճում է Կարկառ գետի մոտակայքում, «Էլդորադո» հյուրանոցի շրջակայքում, գյուղը տանող ճանապարհի եզրերին, հարավային մասի անտառներում: Մաքուր հոնուտներ առաջանում են Ծաղկասարի արևմտահայաց լանջի ստորոտում՝ Չուվչուրլախի աղբյուրի մոտակայքում, Շաղասարի ստորոտում՝ «Մաներ» կոչվող տարածքում՝ «Քարիզ» աղբյուրի մոտակայքում:

Հարավում գտնվող անտառի սկզբնամասում՝ Սուրբ Սրաբեկ սրբավայրում /քարքարոտ վայր/ հանդիպում է փոշնի (*Celtis caucasica*):

Դեռ հին ժամանակներից մարդիկ այցելել և զոհաբերություն են մատուցել փոշնու սաղարթի ներքո: Փոշնու մյուս ծառը, որի բնի շուրջը սրբաքարեր են, մարդիկ 3 անգամ պտտվում են և երազանքի ժապավենը ամրացնում ծառի ճյուղերին: Փոշնի հանդիպել է նաև դպրոցամերձ

քարքարոտ լանջում և գյուղամիջում, Կարկառ գետի մոտակայքում, <<Էլդորադո>> հյուրանոցի շրջակայքում, գյուղը մտնող ճանապարհի եզրերին:

Շաղասարի ենթանտառում աճում են խնձորենին (*Malus orientalis*) /տզգան/ և տանձենի կովկասյանը /*Pyrus caucasica*/, իսկ հյուսիսային մասի ենթանտառում տանձենի ուռատերևը /մոխրատանձ/ *Pyrus salicifolia*:

Զկեռենին հանդիպում է հատուկենտ. գյուղի արևմտյան մասում /Օաղկասար/ ընդհանրապես չենք հանդիպել, հարավային մասում՝ անտառեզրերին, Սուրբ Սրաբեկ սրբավային մոտ՝ սակավաթիվ, հիմնականում հանդիպում է անտառապատ Շաղասարի <<Կյուշ>> և Քարիզ աղբյուրների մոտակայքում: Քարիզ աղբյուրի մոտակայքը մոշուտներ են և սալորենիներ:

Կաղնու մաքուր ծառուտ /կաղնուտներ/ հանդիպում է Շաղասարի դիմացի հարթավայրային մասում, այստեղ հանդիպում է նաև սզենի և զկեռենի: Կաղնուտներ առաջանում են նաև հարավային մասում՝ Սուրբ Սրաբեկ սրբավայրից վերև ընկած անտառներում: Հարավային մասում դոմինանտում են հոնին, սալորենին /մամխենին/, իսկ հարավ արևմտյան մասում՝ տիլենու մաքուր բուսուտներ են:

Սակավաթիվ հանդիպող տեսակներից են նոնենին (*Punica granatum*), կծոխուրը (*Berberis vulgaris*), թզենին (*Ficus carica*), նշենի Ֆենցլին (*Amygdalus fenzilana*), պայթակենի կիլիկյանը (*Colutea cilicica*): Նոնենին (*Punica granatum*) հանդիպել է միայն գյուղամիջում՝ դպրոցամերձ քարքարոտ լանջում, կծոխուրը՝ սակավաթիվ Շաղասարի արևմտահայաց ենթանտառում, ինչպես նաև արևելահայաց անտառներում: Նշենին բնական վիճակում հանդիպում է միայն Օաղկասարի արևմտահայաց լանջի թփուտներում, իսկ պայթակենին՝ սակավաթիվ՝ միայն գյուղ մտնող /մայրաքաղաքից դեպի Շուշի տանող կենտրոնական ուղի/ ճանապարհի եզրերին:

Գյուղամիջում Քարիզից հոսող ջրի ողջ երկայնքով, ճանապարհի եզրերին, գյուղամիջում, և դեպի սուրբ Սրաբեկ սրբավայրը տանող ճանապարհի եզրերին հանդիպում են կտտկենու թփերը (*Sambucus nigra*), իսկ տնամերձ ցանկապատերին՝ լիանները՝ լոշտակ երկտունը (*Bryonia dioica*): Գյուղամիջում հանդիպում է նաև իլենի եվրոպականը:

Ակացիաի տարածվածությունը Դաշուշենի տարածքում (*Robinia pseudoacacia*) սահմանափակ է: Հանդիպում է միայն գյուղամիջում, տնամերձ տարածքներում:

Կառկառի գետահովտի երկարությամբ տարածված են ուռենիները (*Salix excelsa*, *S. caprea*) (գյուղացիներն այդ վայրը անվանում են հոռուտներ, այսինքն՝ ուռենու պուրակ), թխկին, փռշին:

Թխկի դաշտայինը (*Acer campestre*) տարածված է անտառներում /Օաղկասարի արևմտահայաց անտառ/: Աճում է ինչպես չափավոր խոնավ, այնպես էլ համեմատաբար չոր պայմաններում /գյուղամեջ տանող ճանապարհի եզրերին:/ Որպես խառնուրդ հանդես է գալիս հյուսիս – արևելյան անտառում կաղնու, բոխու, գլիհու անտառներում, մաքուր ծառուտ չի կազմակերպում:

Գերիմաստին (*Viburnum lantana*) աճում է հարավային մասի անտառի ծածկոցի տակ, գյուղը մտնող ճանապարհի ձախ մասին, հյուսիս արևելյան անտառներում:

Դաշուշենի դենդրոֆլորայի կազմում առաջատար դեր է խաղում Վարդագիների (*Rosaceae*) ընտանիքը: Այն ներկայացված է 11 ցեղի պատկանող 20 տեսակներով: Ընտանիքը ներկայացնող *Pyrus*, *Sorbus*, *Crataegus*, *Cotoneaster*, *Rubus* և *Rosa* ցեղերը մեծ նշանակություն ունեն Դաշուշենի շրջակայքում՝ տարբեր բուսական համակեցությունների առաջացման մեջ: Իր տեսակային կազմով և տաքսոնոմիական բազմազանությամբ, սզին (*Crataegus*) հանդիսանում է *Rosaceae* ընտանիքի խոշոր ցեղերից մեկը: ԼՂՀ-ում, աճելով ցածր, միջին և բարձր լեռնային գոտիներում, սզինները մեծ դեր ունեն դենդրոֆլորայի ձևավորման գործում՝ հանդիսանում են մի շարք անտառային համակեցությունների կարևորագույն տարր, կազմում են ենթանտառ այլ ցեղերի ներկայացուցիչների հետ, աճում են արիդային նոսրանտառներում, լեռնային գետերի առափնյա թավուտներում:

Դաշուշենի դենդրոֆլորայում գերակշռում է սզնի կովկասյանը (*Crataegus caucasica*): Սզնին հանդիպում է ամենուր. Օաղկասարի արևմտահայաց լանջի անտառներում, Շաղասարի

անտառներում, գյուղն հյուսիսից շրջապատող անտառներում, անտառեզրերին, դպրոցամերձ քարքարոտ լանջերին: Քարիզ, Քարին տակի, աղբյուրների մոտակայքում հանդիպում է նաև սզնի հայկականը (*Crataegus armena*): *Rosa* ցեղից մասրենի սովորականը (*Rosa canina*) հանդիպել հյուսիսային մասի անտառեզրերին, իսկ մասրենի առատափուշը (*Rosa spinosissima*) ավելի մեծ տարածվածություն ունի՝ դպրոցամերձ քարքարոտ լանջերին, գյուղամիջի ճանապարհի ամբողջ երկայնքով, դեպի Սուրբ Սրաբեկ սրբավայր տանող և Ծաղկասարի արևելահայաց լանջերին:

Արցախում մոշենու ցեղի տարածվածության վերաբերյալ ուսումնասիրություններ է կատարել Ա.Ն. Հակոբյանը: Ցեղ մոշենին բաժանվում է մոշենի և մոռենի ենթացեղերի: Արցախի տարածքում հայտնաբերվել է 15 մոշենու և մեկ մոռենու տեսակներ: Ցեղի ներկայացուցիչները ունեն տարածման լայն սպեկտր: Աճում են առափնյա անտառներում, անտառեզրերին, թփուտներում, քարքարոտ վայրերում[2]:

Մոշուտներ առաջանում են գյուղը տանող ճանապարհի եզրերին, դպրոցամերձ լանջերին /արևմտյան մաս/, Մոշենի հայկականը (*Rubus armeniacus*), Ծաղկասարի արևմտահայաց լանջի և Շաղասարի ենթանտառում:

Աղյուսակ 1.

Ասկերանի շրջանի Դաշուշենի տարածքից հայտնաբերված բույսերի կարգաբանական ցուցակ

Տեսակի անվանումը		Կենսական ձևը	Կենսակոլոգիական և ֆիտոցենոտիկ առանձնահատկությունները
Բակլազգիներ – Fabaceae			
1	Ակացիա սպիտակ (<i>Robinia pseudoacacia</i> L.)	Շ _տ	Գյուղամիջում
2	Գազ մանրագլխիկ- <i>Astragalus microcephalus</i> Willd	Թ _տ	Չոր քարքարոտ լեռնալանջերին, արիդային նոսր անտառներում, շիբլակներում /Ծաղկասար/
3	Պայթակենի կիլիկյան - <i>Colutea cilicica</i> Boiss. et Bal.	Թ _տ	Դպրոց մտնող ճանապարհի եզրին
Դոմազգիներ Cucurbitaceae			
4	Լոշտակ երկտուն – <i>Bryonia dioica</i> Jacq.	Լ _տ	Գյուղամիջում
Դժնիկազգիներ-Rhamnaceae			
5	Դժնիկ լուծողական - <i>Rhamnus cathartica</i> L.	Շ _տ	Թփուտներում
6	Դժնիկ Պալլասի - <i>Rhamnus pallasii</i> Fisch. et Mey. C. A. Mey.	Թ _տ	Չոր քարքարոտ լեռնալանջերին, շիբլակներում /Ծաղկասար/
7	Ցաքի փշոտ - <i>Paliurus spina-christi</i> Mill.	Թ _տ	Չոր քարքարոտ լեռնալանջերին /Ծաղկասար/
Դիոսկորեազգիներ - Dioscoreaceae			
8	Կնքարույս – <i>Tamus communis</i> L.	Լ _տ	Շաղասարի կաղնեբոխային անտառներում
Ընկուզազգիներ - Juglandaceae			

9	Ընկուզենի սովորական - Juglans regia L.	Ծ _տ	Անտառներում, գետահովիտներում /Շաղասար/
Ընտանիք Թթազգիներ – Moraceae			
10	Թզենի սովորական- Ficus carica L.	Ծ _տ	Թարթառի գետահովտում
Թխկազգիներ - Aceraceae			
11	Թխկի դաշտային - Acer campestre L.	Ծ _տ	Անտառներում, անտառեզրերին
12	Թխկի վրացական - Acer ibericum M. Bieb	Ծ _տ	Անտառներում, անտառեզրերին
Թեղազգիներ -Ulmaceae			
13	Թեղի բոխատերև - Ulmus carpinifolia Rupp. ex Suckow	Ծ _տ	Անտառներում
14	Թեղի տերևառատ - Ulmus foliacea Gilib	Ծ _տ	Անտառներում
15	Ձեկվա բոխատերև - Zelkova carpinifolia /Pall./ K. Koch	Ծ _տ	Հյուսիս արևելյան անտառներում
Թունաթափազգիներ - Asclepiadaceae			
16	Շրջահյուս հունական /Periploca graeca L./	Լ _տ	Հյուսիս արևելյան անտառներում
Իլենազգիներ-Celastraceae			
17	Իլենի եվրոպական - Euonymus europea L.	Թ _տ	Գյուղամիջում
18	Իլենի լայնատերև - Euonymus latifolia /Z./ Mill.	Թ _տ	Հյուսիս արևելյան անտառներում
Խաղողազգիներ - Vitaceae			
19	Խաղող անտառային - Vitis sylvestris C.C. Gmel	Լ _տ	Անտառներում /Մաքսիմի աղբյուր/
Օորենազգիներ - Berberidaceae			
20	Օորենի սովորական – Berberis vulgaris L.	Թ _տ	Ենթաանտառներում /Շաղասար/
Հաճարազգիներ - Fagaceae			
21	Կաղնի վրացական - Quercus iberica Steven	Ծ _տ	Անտառներում, առաջացնում են կաղնուտներ /Շաղասար, հարավային մաս/
22	Կաղնի խոշորառեղ - Quercus macranthera Fisch. et C. A. Mey. et Hohen	Ծ _տ	Անտառներում, առաջացնում են կաղնուտներ /Շաղասար, հարավային մաս/
Հոնազգիներ - Cornaceae			

23	Հոնի սովորական – Cornus mas L	Ծ/թ/տ	Անտառներում, խոնավ աճելավայրերում, հիմնականում ձևավորում է մաքուր ծառուտներ /Չումչումբլախի աղբյուր, Ծաղկասար, Շաղասար/
24	Ճապկի հարավային - Swida australis Pojark	Ծ/թ/տ	Անտառներում, անտառեզրերին
25	Ճապկի վրացական - Swida iberica Pojark. ex Grossh	Ծ/թ/տ	Անտառներում, անտառեզրերին
Ձիթենազգիներ - Oleaceae			
26	Հացենի սովորական - Fraxinus excelsior L.	Ծ _տ	Հյուսիս արևելյան անտառներում
27	Հացենի սրապտուղ - Fraxinus oxycarpa Willd.	Ծ _տ	Հյուսիս արևելյան անտառներում
28	Հասմիկ թփային - Jasminum fruticans L.	Թ _տ	Դպրոցամերձ լանջերին, Ծաղկասարի հյուսիս արևմտյան թփուտներ
29	Կիպրոս սովորական - Ligustrum vulgare L.	Թ _տ	Հյուսիս արևելյան անտառներում
Նոճազգիներ – Cupressaceae			
30	Գիհի ցածրաձ – Juniperus hemisphaerica J.	Թ _տ	Շաղասարի անտառի վերին սահմաններ
31	Գիհի երկարատերև - Juniperus oblonga M. Bieb.	Ծ/թ/մ	Կաղնեթխային անտառներում Շաղասար
Նոնազգիներ-Punicaceae			
32	Նոնենի սովորական - Punica granatum L	Ծ _տ	Չոր լեռնալանջերին, արիդային նոսրանտառներում, հատուկենտ /Ծաղկասար/
Վարդազգիներ - Rosaceae			
33	Ասպիրակ սրոհունդատերև - Spiraea hypericifolia L.	Թ _տ	Չոր, քարքարոտ լանջերին Ծաղկասարի արևմտահայաց լանջ
34	Ջկեռենի սովորական - Mespilus germanica L.	Ծ _տ	Առափնյա անտառներում, կաղնուտներում, <<Կյուշ>> աղբյուրի մոտակայքում /Շաղասար/
35	Իսնձորենի արևելյան - Malus orientalis Uglitzk	Ծ _տ	Առափնյա անտառներում, սակավաթիվ /Շաղասար/
36	Կեռասենի անտառային - Cerasus avium Moench	Ծ _տ	Անտառներում /Շաղասար/

37	Մաքրենի սովորական - Rosa canina L.	Թ _տ	Անտառեզրեր, թփուտներ
38	Մաքրենի առատափուռ - Rosa spinosissima L.	Թ _տ	Դպրոցամերձ լանջերին, թփուտներ
39	Մոշենի սովորական - Rubus caesius L.	Կ _թ	Շաղասարի ենթանտառում
40	Մոշենի կովկասյան - Rubus caucasicus /Focke/ Focke ex Haussen	Կ _թ	Ամենուր
41	Մոշենի թաղիքավոր - Rubus tomentosus Borkh	Կ _թ	Ամենուր
42	Մոշենի հայկական - Rubus armeniacus Focke	Կ _թ	Դպրոցամերձ լանջ,
43	Մոռենի Բուշի (Rubus Buschii /Rozan./ A. Grossh	Կ _թ	Անտառներում
44	Նշենի Ֆենցլիի - Amygdalus fenzilana (Fritsch)	Թ _տ	Թփուտներում Ծաղկասարի արևմտահայաց լանջ
45	Չմենի ամբողջաեզր - Cotoneaster integerrimus Medik	Թ _տ	Չոր լանջերին Ծաղկասար, Սուրբ Սրաբեկ տանող ճանապարհի եզր
46	Սալորենի փշուռ, մամխենի - Prunus spinosa L. /լկրտն/	Թ _տ	Անտառներում, խոնավ աճելավայրերում /Ծաղկասար, հարավային մաս/
47	Սալորենի սովորական - Prunus divaricata Ledeb.	Թ _տ	Անտառներում, գետի ափերին /Ծաղկասար/
48	Սզնի կովկասյան - Crataegus caucasica K. Koch	Ծ _տ	Նոսրանտառներում, կաղնուտներում /Ծաղկասար, Շաղասար/
49	Սզնի արևելյան - Crataegus orientalis Pall	Ծ _տ	Անտառներում
50	Սզնի հայկական - Crataegus armena Pojark.	Ծ _տ	Նոսրանտառներում, կաղնուտներում
51	Տանձենի կովկասյան - Pyrus caucasica Fed.	Ծ _տ	Առափնյա անտառներում, մոտակայքում, հատուկենտ /Շաղասար/
52	Տանձենի ուռատերև - Pyrus salicifolia Pall.	Ծ _տ	Կարկառ գետի մոտակայքում, հյուսիսային մաս, Ծաղկասարի արևմտյան մասի լանջ
Տիլազգիներ - Corylaceae			
53	Տիլենի սովորական - Corylus avellana L.	Թ _տ	Անտառներում, կաղնուտներում Հարավ - արևմտյան մաս
54	Բոխի արևելյան, ջղանե - Carpinus orientalis Mill	Ծ/թ/տ	Անտառներում /Ծաղկասար/

55	Բոխի կովկասյան – Carpinus caucasica L	Ծ _տ	Անտառեզրերին,
Ցախակեռասազգիներ - Caprifoliaceae			
56	Գերիմաստի Viburnum lantana L.	Թ _տ	Անտառեզրերին /հարավային մաս/
57	Կտակենի սև - Sambucus nigra L.	Թ _տ	Կարկառ գետի վտակի կողմերին
58	Ցախակեռաս վրացական Lonicera iberica M. Bieb.	Թ _տ	Չոր քարքարոտ լեռնալանջերին /Ծաղկասար/
59	Ցախակեռաս կովկասյան - Lonicera caucasica Pall.	Թ _տ	Հյուսիս արևելյան անտառներում
60	Ցախակեռաս այծի - Lonicera caprifolium L.	Թ _տ	Շաղասարի անտառներում
Ուռազգիներ - Salicaceae			
61	Ուռենի բարձր - Salix excelsa S. G. Gmel	Ծ _տ	Կառկառ գետի մոտակայքում
62	Ուռենի այծի (այծուռենի) - Salix caprea L.	Ծ _տ	Կառկառ գետի մոտակայքում
Փռչնազգիներ - Celtidaceae			
63	Փռչնի կովկասյան – Celtis caucasica Willd.	Ծ _տ	Անտառեզրեր, /Սուրբ Սրաբեկ, դպրոցի շրջակայքում, գյուղամեջ/
Փշատազգիներ - Elaeagnaceae			
64	Փշատենի նեղատերև - Elaeagnus angustifolia L.	Ծ _տ	Քարքարոտ լանջերին

Ծանոթություն. Ծ/թ/մ- ծառանման թուփ մշտադալար, Ծ/թ/տ – ծառանման թուփ տերևաթափ Ծ_տ – ծառ տերևաթափ, Թ_տ – թուփ տերևաթափ, Թ_ս – թուփ մշտադալար, Կ_թ – կիսաթուփ, Լ_տ – լիան տերևաթափ

Դաշուշենի դենդրոֆլորան ըստ կենսաձևերի ներկայացված է հետևյալ կերպ՝ ծառեր – 32 տեսակ, թփեր – 23 տեսակ, կիսաթփեր – 5 տեսակ, լիաններ – 4 տեսակ: Դաշուշենի համայնքի շրջակայքի դենդրոֆլորայում ասեղնատերևավորներից հանդիպում է միայն գիհի (Juniperus) ցեղի ներկայացուցիչները, որոնք կենտրոնացված են միայն Շաղասարում:

Ամփոփելով ուսումնասիրությունների արդյունքները պարզվեց, որ ընդհանուր առմամբ Դաշուշենի շրջակայքի դենդրոֆլորան հարուստ է և ներկայացված է 64 տեսակներով, որոնք պատկանում են 43 ցեղի և 23 ընտանիքի: Գերակշռողը վարդազգիների (Rosaceae) ընտանիքն է՝ 11 ցեղ և 20 տեսակ: Ցախակեռասազգիները (Caprifoliaceae) ներկայացված են 3 ցեղով և 5 տեսակով, ձիթենազգիները (Oleaceae) ներկայացված են 3 ցեղով և 4 տեսակով, բակլազգիները (Fabaceae)՝ 3 ցեղով և 3 տեսակով, տիլազգիները (Corylaceae)՝ 2 ցեղով և 3 տեսակով, դժնիկազգիները (Rhamnaceae) 2 ցեղով և 3 տեսակով, հոնազգիները (Cornaceae) 2 ցեղով և 3 տեսակով, թեղազգիները (Ulmaceae) 2 ցեղով և 3 տեսակով, ուռենազգիները (Salicaceae)՝ 1 ցեղով և 2 տեսակով, հաճարազգիները (Fagaceae) 1 ցեղով և 2 տեսակով, թխկազգիները (Aceraceae)՝ 1 ցեղով և 2 տեսակով, իլենազգիները (Celastraceae)՝ 1 ցեղով և 2 տեսակով, նոճազգիները (Cupressaceae)՝ 1 ցեղով և 2 տեսակով: Մնացած ընտանիքները ներկայացված են 1 ցեղով և 1 տեսակով (աղ. 1):

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Լ. Վ. Հարությունյան, Ս.Լ. Հարությունյան, Հայաստանի դենդրոֆլորա, 1-2, Երևան, 1985 - 1986
2. Մոշենու և մոռենու ենթացեղերի տեսակային կազմը և տարածվածությունը Արցախում., ԱրՊՀ գիտական տեղեկագիր, 2(22)2010
2. Карягин И.И. Флора Азербайджана, 1–7, Баку, 1950–1957.
3. Тахтаджян А.Л. Флора Армении. 1-7, Ереван, 1954 – 1980

Տեղեկություններ հեղինակի մասին

Մայա Ծատրյան – ԱրՊՀ կենսաբանության ամբիոնի դասախոս

E – mail.c@mail.ru

Մարետա Արզումանյան – Ասկերանի շրջանի Խնածախի միջնակարգ դպրոցի
կենսաբանության ուսուցչուհի

Հոդվածը տպագրության է նրաշխարհում խմբագրական կոլեգիայի անդամ, գ.գ.դ., Գ.Ա. Հակոբյանը:

УДК. 542.6

Химия

ИЗУЧЕНИЕ КОМПЛЕКСООБРАЗОВАНИЯ СУЛЬФАЦИЛ-НАТРИЯ С III ВАЛЕНТНЫХ ЖЕЛЕЗОМ В ВОДНОЙ СРЕДЕ

Татевик ГУКАСЯН

Артём АБРАМЯН

Բանալի բառեր և բառակապակցություններ՝ մետաղ-իոն, մետաղ կոմպլեքսագոյացուցիչ, թերմոդինամիկական, պոտենցիալ լիգանդներ, սուլֆացիլ նատրիում, հավասարակշռության տեղաշարժ, օպտիկական:

Keywords and word combinations: metal-ion, metal alloy wheel, potential ligands, sulfacetamide, thermodynamic, balance shift, optical.

Ключевые слова и словосочетания: металл-иона, металл-комплексобразователь, термодинамической, потенциальные лиганды, сульфацил-натрия, сдвига равновесия, оптический.

ԵՐԿԱԾ (III)-Ի ԿՈՄՊԼԵՔՍՈՅԱՑՄԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆԸ ՍՈՒԼՖԱՑԻԼ ՆԱՏՐԻՈՒՄԻ ՀԵՏ ՋՐԱՅԻ Ն ՄԻՋԱՎԱՅՐՈՒՄ

Տ. Ղուկասյան, Ա. Աբրահամյան

Օգտագործելով հետազոտության ֆիզիկաքիմիական եղանակը՝ սպեկտրալուսաչափականը ուսումնասիրվել է Fe(III)-ի կոմպլեքսագոյացումը սուլֆացիլ-նատրիումի հետ ջրային միջավայրում: Առաջացած կոմպլեքսի բաղադրության ավելի ճշգրիտ որոշման համար կիրառվել է իզոմոլար սերիայի և Գարվեյ-Մենինգի մեթոդները: Հաստատված է, որ այդ փոխազդեցության ժամանակ առաջանում է 1:2 մոլային հարաբերությամբ կոմպլեքս: Բարկոյի, ինչպես նաև հավասարակշռության տեղաշարժի մեթոդով որոշվել է առաջացած կոմպլեքսի կայունության հաստատունը $\beta_{\text{մթ.}}=5,5 \cdot 10^5$ և քիմիական բաղադրությունը:

IRON III COMPOUND STUDY OF SULFATSIL-SODIUM IN WATER ENVIRONMENT

T. Ghukasyan, A. Abrahamyan

Using the Physicochemical method of research, i. e., the spectrophotometric method the complex formation of Fe(III) with sulfacetamide in an aqueous solution has been investigated. In order to determine the composition of the obtained complex more exactly the isomolar series and Garvey Mening methods were used. It is affirmed that at the indicated interaction the complex with M ratio 1:2 appears. By means of Babko, as well as equilibrium displacement methods the stability constant $\beta_{\text{մթ.}}=5,5 \cdot 10^5$ and the chemical composition of the obtained complex have been determined.

Используя физико-химический метод исследования, спектрофотометрический исследовался комплексобразования сульфацил-натрия с Fe (III) в водной среде. Для более точного определения состава полученного комплекса были использованы методы изомолярной серии и Гарви Мейнинга. Подтверждено, что во время взаимодействия образуется комплекс с молярным соотношением 1:2. Методом сдвига равновесия, а также методом разбавления Бабко определены констант образования образующихся комплекса $\beta_{\text{մթ.}}=5,5 \cdot 10^5$ и химический состав.

В подавляющем большинстве случаев высокая биологическая активность металл-иона, так и лиганда проявляется в их координационных соединениях, т.е. в условиях максимально приближенных к их состоянию в биосистемах организма. Подбирая хелатообразующие лиганды с взаимоотношающимися функциональными группами, можно моделировать и исследовать металлосодержащие биосистемы организма, так как многие биохимические процессы, в которых участвуют металл-ионы, протекают в условиях непрерывного изменения их окружения. Очевидно, для разработки путей направленного синтеза биоактивных веществ необходимо проведение взаимодополняющих друг-друга химических, физико-химический и биологических исследований, позволяющих найти закономерность и установить факторы влияющие на фармакологические свойства веществ.

Выявление зависимостей биопоказателей координационных соединений от природы металла-комплексобразователя (валентное состояние, электронная конфигурация), а также от природы лиганда в целом и от природы его донорных функциональных групп, участвующих в хелатообразовании, в частности, от типа комплекса, от его геометрической конфигурации, от кинетической и термодинамической устойчивости комплекса является актуальной задачей.

Железо является необходимым элементом для жизнедеятельности любого живого организма. Недостаток железа приводит к анемии. Железо в организме находится в связанном состоянии в виде комплексных соединений (гемоглобин, ферритин и др.). От особенностей строения центрального иона и лиганда зависит их роль в организме.

Большой интерес представляют комплексные соединения железа с другими биоактивными системами такими как лекарственные препараты.

Многие лекарства представляют собой потенциальные лиганды. Они характеризуются определенной молекулярной массой и наличием соответствующим образом расположенных донорных атомов или групп. Все обычные лекарственные препараты содержат три типа донорных атомов: кислорода, азота и серы.

В качестве лигандов рассмотрим подробнее сульфаниламидные препараты.

Сульфаниламидные препараты-большая группа лекарственных веществ, основу строения которых составляет сульфаниловая кислота [1-2]. Препараты этой группы относятся к химиотерапевтическим средствам широкого антибактериального действия, так как они подавляют жизнедеятельность многих видов грамположительных и грамотрицательных бактерий: стрептококков, стафилококков, менингококков, гонококков, бактерий кишечнотифозно-дизентерийной группы и многих других.

Бактериостатический эффект зависит от химического строения препарата, степени и силы связывания с белками плазмы, реакционной среды, константы диссоциации и других факторов. Большинство сульфаниламидов легко всасываются из желудочно-кишечного тракта (стрептоцид, норсульфазол, этазол, сульфазин и др.) и быстро накапливается в крови, органах и тканях в бактериостатических концентрациях, проникает через гематоэнцефалический барьер.

